

Ազաթա Քրիստի

Վ Ի Հ Ը

Կամ՝

«ՀԱԼՈ» ԴՂՅԱԿԸ

(Պիես՝ երեք գործողությամբ)

Գործող անձիք

Մուտքի հերթականությամբ՝

Հենրիեթա Անգրթել

Սըր Հենրի Անգրթել

Լեդի Անգրթել

Միջ Հարվի

Գաջըն

Էդուարդ Անգրթել

Դորիս

Գերդա Քրիսթո

Ջոն Քրիսթո

Վերոնիկա Քրեյ

Տեսուչ Քոլբրիուն

Ոստիկան՝ Սերժանտ Փեննի

Որոշ հասցավումներ (ըստ բնագրի)՝

Կենտրոն => Կ

Աջ => Ա

Ձախ => Ձ

**Բնագրից թարգմանեց՝
Կոլյա Տեր Հովհաննիսյան**

Արար առաջին

Բեմը ներկայացնում է Սըր Հենրի Անգրթեյի դրամայի այգու սենյակը՝ The Hollow-ն (Հալո), Լոնդոնից մոտ 18 մղոն հեռավորության վրա: Ուրբաթ օր է, կեսօրից հետո, սեպտեմբերի սկիզբը:

Ոչ պաշտոնական սենյակ է՝ կահավորված ճաշակով: Խորքում՝ Կ, երեք աստիճան դեպի վեր, ֆրանսիական պատուհաններ, որոնք բացվում են պատշգամբի վրա՝ հեռվում երևացող իր կարճ պատով: Պատից այն կողմ երևում է ծառապատ մի բլուր, որի վրա գտնվում է դրամայի: Բեմի Ա պատին, գետնից մեկ աստիճան բարձր՝ ավելի փոքր ֆրանսիական պատուհաններ, որոնք բացվում են դեպի խիտ թփուտների տեսարանով այգին: Բեմի Չ պատի առաջամասում՝ դուռ, որը տանում է դրամայի այլ բաժինները: Ֆրանսիական պատուհաններին կից՝ Չ պատի վրա խորշ, որի մուտքը կամարած է ու ծածկված սենյակից բաժանող ծանր վարագույրով: Խորշի դիմացի պատին տեղադրված են որակյալ ու խնամքով դասավորված գրապահարաններ. կա նաև մի փոքրիկ սեղան, որի վրա դրված է արծաթե ծաղկաման վարդերի փնջով: Վարագույրի ետևում խորշի մեջ, ոչ տեսանելի հանդիսատեսին, զգացվում է մի արձանի առկայությունը: Բեմի Չ պատի կենտրոնում՝ քարե դարավանդակով բուխարիկ: Նույնանման գրապահարաններ կան տեղադրված աջ պատին, ֆրանսիական պատուհանների երկու կողմում: Ա կողմում, փոքրիկ գրասեղան՝ վրան լուսամտի ու հեռախոս, առջևը՝ փոքր աթոռ և ներքևում՝ գործածված թղթերի գամբուղ: Գրասեղանի վերևում՝ պատվանդան, որի վրա գետեղված է արստրակտ ոճով մի արձանիկ: Ա պատի գրապահարանների ներքևում՝ մի սեղան լուսամտիով: Բուխարիկից ավելի վեր՝ սեղան, վրան՝ ռադիոընդունիչ: Կ-ից Չ՝ մի բազկաթոռ: Կ-ից Ա՝ մի հանգստավետ գահավորակ, որի առջև՝ դրված է սուրճի կլոր սեղան: Բուխարիկի դարավանդակի առջևի սալի մոտ՝ փուֆիկ (բարձի ձևով աթոռ Օ.Թ.), որը լրացնում է սենյակի կահույքը: Մենյակը գորգապատ է, լուսամուտներին՝ վառվումն գույներով վարագույրներ են կախված: Բացի սեղանի լուսամտիներից, երեկոյան սենյակը լուսավորվում է պատի մոմաձև էլեկտրական ջահով՝ տեղադրված ֆրանսիական պատուհանների՝ Կ-ից Չ կողմում, իսկ ավելի փոքրերով՝ բուխարիկի վերի երկու կողմերում: Մեկ կամ երկու մանրանկարներ զարդարում են պատերը: Բուխարիկի վերի պատին, փայտե շրջանակի մեջ՝ ԺԸ դարի անգլիական ոճով կառուցված պունազարդ մի ապարանք պատկերող ընտիր մի կտավ է կախված: Հոսանքի անջատիչներն ու դռան զանգը՝ տեղադրված են բուխարիկի ներքևի պատին: Խորշի կամարած դռան աջ կողմում նույնպես նախատեսված է խորշի լուսավորությունը կարգավորող անջատիչ: Ֆրանսիական լուսամուտների կից պատերին՝ Կ երևում են ծաղիկներով լցված պատի ծաղկամաններ:

Երբ բացվում է վարագույրը, հաճելի հետկեսօր է և բաց են բոլոր լուսամուտները: Սըր Հենրի Անգրթեյը, K.C.B (փոխարքայի կոչում Անգլիայում: Օ.Թ.), մի պատկառելի, տարեց անձնավորություն նստած գահավորակի Ա կողմում՝ «Թայմզ» է կարդում: Հենրիեթա Անգրթեյը պատշգամբում, ֆրանսիական պատուհաններից՝ Կ-դուրս, կանգնած քանդակագործական բարձր պատվանդանի վրա աշխատում է կավով: Նա երիտասարդ գեղեցիկ կին է, մոտ երեսուներեք տարեկան. Հագին ընտիր բրդե կտորից հագուստ, վրայից՝ նկարչի արտազգեստ: Նա մի քանի անգամ մոտենում ու հեռանում է իր ստեղծած գործից, ապա ներս գալով՝ մոտենում է գահավորակի առջև դրված կլոր սեղանին: Քթին կավի բիծ կա: Ճակատը շփելով՝ թոնթորում է.

- Հենրիեթա.- *(ներս մտնելով):* Գրողը տանի, գրողը տանի...
- Սըր Հենրի.- *(գլուխը բարձրացնելով):* Ի՞նչ է, լավ առաջ չի՞ գնում:
- Հենրիեթա.- *(մի սիգարեթ վերցնելով կլոր սեղանի վրա դրված արկղից):* Ուղղակի դժբախտություն է արձանագործ լինելը:
- Սըր Հենրի.- Թերևս այդպես է: Հաճախ մտածել եմ, որ մի այսպիսի գործի համար բնորդի կարիք ունես:
- Հենրիեթա.- Ես ստեղծում եմ արստրակտ ոճով, սիրելի՛ս:
- Սըր Հենրի.- *(հեռվից քամահրանքով ցույց է տալիս արդիական արձանը պատվանդանի վրա՝ Ա):* Սրա նման...

Հենրիեթա.- *(անցնելով բուխարիկի դարավանդակի մյուս կողմը):* Ի՞նչ նոր բան կա «Թայվա»-ում: *(Վառում է սիգարետը բուխարիկին կից՝ սեղանի վառիչով:)*

Սըր Հենրի.- Մեծ թվով մարդ է մեռել: *(Նայում է Հենրիեթային:)* Քթիդ կավ է քսվել:

Հենրիեթա.- Ի՞նչ...

Սըր Հենրի.- Կավ կա... քթիդ վրա:

Հենրիեթա.- *(գրված նայում է բուխարիկի դարավանդակի վերի հայելու մեջ՝ 'ԿԶ):* Օ՛հ, այո, քսվել է: *(Սրբում է քիթը, հետո ճակատը և շրջվելով քայլում է՝ 'ԿԶ:)*

Սըր Հենրի.- Հիմա դա քսվեց ողջ դեմքիդ: :

Հենրիեթա.- *(քայլելով 'Կ՝ վրդովված):* Դա շա՛տ կարևոր է, սիրելի՛ս:

Սըր Հենրի.- Թերևս, ոչ:

Հենրիեթան գնում է պատշգամբ ու վերսկսում աշխատանքը: Ներս է մտնում Լեդի Անգրթելը՝ Ա. կողմից շատ գրավիչ, արիստոկրատ արտաքինով՝ մոտ վաթսուն տարեկան կին է, լիովին մտազբաղ, բայց օժտված բարձր անհատականությամբ: Նա ըստ երևույթին ուրիշի հետ խոսելով է զբաղված:

Լեդի Անգրթել.- *(կտրելով գահավորակի ու բուխարիկի միջև ընկած տարածությունը):* Օ՛հ, սիրելի՛ս, օ՛հ, սիրելի՛ս, եթե այս մեկը չէ՝ մյուսն է սխալ... Խլուրդի թակարդը այստեղ չէ՞մ թողել: *(Վերցնում է թակարդը բուխարիկի դարավանդակի վրայից ու խաղաղվում:)* Ա՛հ, այո, այստեղ էր: Խլուրդների ամենավատ բանն այն է, որ երբեք չզիտես՝ հաջորդ անգամ որտեղից են հայտնվելու: Մարդիկ իրավացի են, երբ ասում են վայրի բնությունը հազվադեպ է ընտելացված լինում: *(Գահավորակի առջևից անցնում է Ա:)* Չես կարծում, դա ճիշտ է, Հենրի: Ի՞նչ կարող եմ ասել, սիրելի՛ս, երբ չզիտես ինչի մասին ես խոսում:

Սըր Հենրի.- Նրանց անգթորեն հալածելու եմ, իսկապես հալածելու եմ:

Լեդի Անգրթել.-

դուրս գալուն համընթաց՝ Ա, աստիճանաբար ձայնը մարում է:

Հենրիեթա.- *(նայելով 'Կ-ի ֆրանսիական պատուհանից):* Լյուսին ի՞նչ ասաց:

Սըր Հենրի.- Առանձնապես՝ ոչինչ: Դե՛, գիտես Լյուսին ինչպիսին է: Ասում եմ՝ ժամը վեցն անց կես է:

Հենրիեթա.- Մտիաված եմ գործս դադարեցնել ու մաքրել վրագուխս?: Կարծում եմ նրանք բոլորն էլ մեքենայով կգան: *(Մի խոնավ լաթով ծածկում է իր աշխատանքը:)*

Սըր Հենրի.- Բոլորը՝ բացի Միջից: Նա գալիս է Կանաչ Գիծ՝ ավտոբուսով ու ուր որ է կերևա:

Հենրիեթա.- Միրելի Մի՛ջ. նա լավն է, շատ ավելի լավը, քան մեզանից յուրաքանչյուրը: Չե՞ս կարծում, Հենրի: *(Պատվանդանը դուրս է հրում բեմից, պատշգամբի Ա կողմից:)*

Սըր Հենրի.- Թերևս. հավանաբար այդպես է:

Հենրիեթա.- *(քայլելով դեպի 'Կ՝ ծիծաղում է):* Դե՛, ավելի պակաս արտասովոր, ինչն է: Միջը օժտված է ինչ-որ ողջամտությամբ: *(Ձեռքերը սրբում է արտազգեստի փեշով:)*

Սըր Հենրի.- *(վրդովված):* Ես էլ պակաս ողջամիտը չեմ:

Հենրիեթա.- *(հանում է արտազգեստն ու նայում Սըր Հենրիին):* Այ--յո, թերևս... Դու ողջամիտ ես... *(Արտազգեստը գցում է բազկայթոռի՝ 'ԿԶ մեջքին:)*

Սըր Հենրի.- *(ժպտալով):* Այնքան, որքան կարող է լինել նա, ով ապրում է Լյուսիի հետ, թող օրինվի Լյուսին: *(Ծիծաղում է:)*

Հենրիեթան ծիծաղում է՝ մոտենալով բուխարիկին ու սիգարեթի մոխիրը թափելով այնտեղ դրված մոխրամանի մեջ:

Սըր Հենրի.- *(ցած է դնում ձեռքի օրաթերթը. մտախոհ):* Գիտե՞ս, Հենրիեթա՛, սկսում եմ անհանգստանալ Լյուսիի համար:

Հենրիեթա.- Անհանգստանա՛լ, ինչո՞ւ:

Սըր Հենրի.- Լյուսին չի անդրադառնում, որ որոշ բաներ չի կարելի անել:

Հենրիեթա.- *(նայելով հայելու մեջ):* Վստահ չեմ, որ քեզ ճիշտ եմ հասկանում: *(Հար- դարում է մազերը:)*

Սըր Հենրի.- Լյուսին միշտ հեշտ է դուրս պրծել ամեն բանից: Չեմ կարծում ուրիշ մի կին կարողանար նրա չափ ծաղրել Կառավարության Պալատի (Government House) բարքերը: *(Գրպանից հանում է ծխամորճը:)* Իշխանավորների կանանց մեծ մասը մնում են ընդունված պայմանականությունների շրջանակում, սակայն ոչ Լյուսին: Օհ, սիրելի՛ս, ոչ նա: Հյուրերին նախապատվու- թյուն տալիս դժոխային օյիններ է հնարում ընթրիքներին, և դա, իմ սիրելի՛ Հենրիեթա, մեծագույն հանցանք է:

Հենրիեթան շրջվում է:

(գրպաններն է շոշափում, թուրունի քսակը գտնելու համար:) Նա երդվյալ թշնամիներին նստեցնում է իրար կողքի: Ըմբոստանում է գույնի խտրության դեմ՝ ապուշի տեղ դնելով մարդկանց: Եվ թող անիծված լինեմ, եթե նա գլուխը չի ազատում մի կերպ...

Հենրիեթան վերցնում է թուրունի արկղը բուխարիկի դարավանդակի վրայից, մոտենում է ու տալիս Սըր Հենրիին:

Ա՛հ, շնորհակալ եմ... Եվ դա իր հունարն է՝ խորամանկորեն ժպտալ բոլորին ու նայել այնքա՛ն քաղցր ու անօգնական... Իսկ ծառաները, չնայած նրա հարուցած բոլոր գլխացավանքներին, ուղղակի պաշտում են նրան:

Հենրիեթա.- Հասկանում եմ՝ ինչը նկատի ունես: *(Նստում է բազկաթոռի՝ ԿՁ ձախ եզրին:)* Այն, ինչը չեա հանդուրժի, եթե դա արվի ուրիշների կողմից, զգում ես, որ լիովին ընդունելի է, երբ Լյուսին է անում: Ինչ է սա՛՝ դուրսն է, հիպնոտի՞զմ...

Սըր հենրի.- *(ծխամորճը լցնելով):* Չգիտեմ, նա միշտ այդպիսին է եղել աղջկական տարիքից: Բայց գիտե՞ս, Հենրիեթա՛, դա արմատավորվել է նրա մեջ: Թվում է՝ չի անդրադառնում, որ ամեն բան իր չափն ունի: Ես հավատացած եմ, որ Լյուսիի ընկալմամբ ինքը կարող է մաքուր դուրս պրծնել նույնիսկ սպանության դեպքում:

Հենրիեթա.- *(բարձրանալով ու վերցնելով կավի մի կտոր գորգի վրայից):* Դու և Լյուսին հրեշտակներ եք, որ թույլ եք տալիս ինձ աղտոտել այստեղ ու կավը ոտքով տրորել գորգի վրա: *(Ձեռքի կավը նետում է գործածված թղթերի զամբյուղի մեջ՝ Ա)* Երբ իմ ստուդիան հրդեհվեց, ինձ թվում էր, թե դա ամեն բանի վերջն է, եթե դուք բարի չգտնվեիք ընդունել ինձ ձեզ մոտ:

Սըր Հենրի.- Միրելի՛ս, մենք հպարտանում ենք քեզանով: Ինչո՞ւ, որովհետև հենց նոր «Թայմզ»-ում մի ամբողջ հոդված էի կարդում քո և քո ցուցահանդեսի մասին:

Հենրիեթա.- *(մոտենալով կտր սեղանին ու վերցնելով «Թայմզ»-ը):* Որտե՞ղ:

Սըր Հենրի.- Կարծեմ էջի վերևում: Չեմ խոստովանում, որ այդ մասին շատ բան գիտեմ:
Հենրիեթա.- *(կարդում է):* «Տարվա ամենանշանակալից ստեղծագործությունը». օ՛հ, ինչ-
պիսի տաղտուկ... Գնամ լվացվեմ:

Թերթը դնում է բազկաթոռի՝ ԿՁ վրա, վերցնում է արտագգեստը և դուրս է գալիս
հապճեպորեն՝ Ձ: Սըր Հենրին բարձրանում է տեղից, օրաթերթն ու ծխախոտի քսա-
կը դնում է կլոբ սեղանի վրա, վերցնում է կավի կտորն սեղանի վրայից ու նետում
գամբյուղի մեջ. Մոտենում է խմիչքի սեղանին ու վերցնում լուցկին: Ներս է մտնում
Միջ Հարվին՝ Ձ: Փոքրամարմին է, կոկիկ հագնված, բայց ակնհայտորեն՝ խճուկ:
Ջերմ սրտով, գործունյա, գեղեցիկ երիտասարդ օրիորդ է՝ Հենրիեթայից տարիքով
քիչ փոքր: Ձեռքին ճամպրուկ կա:

Միջ.- *(Ներս մտնելով)* Ողջո՛ւյն, Հենրի:
Սըր Հենրի.- *(Շրջվելով)* Մի ջ: *(Մոտենում է Միջին, վերցնում է ճամպրուկն ու համբու-
րում նրան:)* Ուրախ եմ քեզ տեսնելու համար:

Միջ.- Ես նույնպես:

Սըր Հենրի.- Ինչպե՞ս ես:

Միջ.- Շատ, շատ լավ:

Սըր Հենրի.- Քեզ չե՞ն ծանրաբեռնում այդ անիծյալ հագուստի խանութում:

Միջ.- *(քայլելով Կ՝ ցած):* Այս պահին առևտուրը լճացած է, հակառակ դեպքում չէի
կարող օգտվել հանգստյան օրերից: Ավտոբուսում շարժվելու տեղ չկար: Չէի
տեսել, որ ավտոբուսը այդքան դանդաղ ընթանա: *(Նստում է բազկաթոռին՝
ԿՁ, ձեռքի փոքր պայուսակն ու ձեռնոցները դնում է կողքին ու նայում պա-
տուհանից դուրս՝ Ա:)* Այստեղ լինելը դրախտային է: Ո՞վ է գալու այս անգամ:

Սեր Հենրի.- *(ճամպրուկը դնելով հատակին՝ Կ, բազկաթոռի՝ ԿՁ Ա կողմը):* Շատ մարդ չի
գալու: Քրիսթոնները: Դու անշուշտ ճանաչում ես նրանց:

Միջ.- Հարլի փողոցի բժի շկն իր ոչ այնքան ուշիմ կնոջ հետ:

Սըր Հենրի.- Ճիշտ այդպես: Ուրիշ ոչ ոք: Հա՛ *(վառում է լուցկին)*, մեկ էլ Էդուարդը, իհար-
կե:

Միջ.- *(շրջվելով Սըր Հենրիի կողմը՝ տրված անունից հանկարծակի եկած):* Էդ-
ուա րդը...

Սըր Հենրի.- *(վառելով ծխամորձը):* Մեծ ճիգ է պահանջվում այս օրերին Էդուարդին կտ-
րել Էյնգուիքից:

Միջ.- *(վեր կենալով):* Էյնգուի՛ք, գեղատեսիլ ու ցանկալի Էյնգուիք: *(Քայլում է բու-
խարիկի կողմը ու նայում պատից կախված նկարին:)*

Սեր Հենրի.- *(քայլելով կենտրոն՝ ցած):* Այո՛, դա շատ գեղեցիկ վայր է:

Միջ.- *(հուզված):* Դա աշխարհի ամենաչքնաղ անկյունն է:

Սըր Հենրի.- *(լուցկու տուփը կլոբ սեղանի վրա դնելով):* Որքան ուրախ օրեր ենք անց-
կացրել այնտեղ, է՛հ... *(Մոտենում է բազկաթոռի՝ ԿՁ աջ կողմին:)*

Միջ.- *(շրջվելով):* Իմ կյանքի ամենաերջանիկ պահերը այնտեղ են անցել:

Լեդի Անգրթելը մտնում է՝ Ա. ձեռքին մի մեծ դատարկ ծաղկաման:

Լեդի Անգրթել.- *(ներս մտնելով):* Կհավատա՞ս, (անցնելով գահավորակի վերից՝ Սըր Հենրիի
Ա. կողմը) նրանք նորից էնտեղ էին ու փչացրել են չքնաղ մանուշակների մի
ամբողջ շարք: Եթե իրոք այս լավ եղանակը հարատևի...

Սըր Հենրի.- Միջն այստեղ է:

Լեդի Անգրթել.- Որտե՞ղ... (Մոտենում է Միջին ու համբուրում նրան:) Օ՛հ, իմ սիրելի Միջ, չնկատեցի քեզ, թանկագինս: (Սըր Հենրիին՝ կողմնակի:) ...Դա կօգնի, չէ՞: Դուք երկուսով ի՞նչ էիք անում, երբ ես ներս մտա:

Սըր հենրի.- Խոսում էինք Էյնզուիքի մասին:

Լեդի Անգրթել.- (նստելով բազկաթոռին՝ ԿՁ. ձայնի տոնի նկատելի փոփոխությամբ): Էյնզուի՛ք...

Սըր Հենրի.- (շոյելով Լեդի Անգրթելի ուսերը): Դե՛, լավ, լավ, Լյուսի:

քիչ տրամաձ՝ դուրս է գալիս՝ Ձ:

Միջ.- (ցույց տալով ծաղկամանը՝ զարմացած): Իսկ դու ինչո՞ւ ես դա քարշ տվել այստեղ, սիրելի՛ս:

Լեդի Անգրթել.- Ես ի՞նչ գիտեմ, տա՛ր դուրս:

Միջը վերցնում է ծաղկամանը նրա ձեռքից, գնում է պատշգամբ՝ Կ ու դնում է հատակին՝ տեսողությունից դուրս:

Շնորհակալ եմ, սիրելի՛ս: Հա՛, ասում էի՛ ամեն դեպքում եղանակը բարեհաջող է. դա էլի մի բան նշանակում է, որովհետև երբ մի շարք անհամապատասխան անձինք հավաքվում են իրար շուրջ մի փակ վայրում... (Նայում է շուրջը): Ո՞ւր ես:

Միջը մոտենում է բազկաթոռի՝ ԿՁ աջ կողմին:

Ա՛հ, այդտեղ ես... Դա խնդիրը բարդացնում է տասնապատիկ: Համաձայն չե՞ս:

Միջ.- Ի՞նչն է բարդացնում:

Լեդի Անգրթել.- Իհարկե, խաղեր կլինեն, բայց դա կլինի անցյալ տարվա նման, երբ ինձ երբեք չեմ կարողանում ներել խեղճ Գերդայի հարցում... վատն այն է, որ նա շատ լավիկն է: Արտառոց չէ՞, որ Գերդայի պես սիրուն արտաքինով մեկը գուրկ լինի մտայնությունից: Եթե դա այն է, ինչը մեկնաբանվում է որպես փոխհատուցման օրենք, իմ կարծիքով արդարացի չէ:

Միջ.- Դու ինչի՞ մասին ես խոսում, Լյուսի՛:

Լեդի Անգրթել.- Այս հանգստյան օրերի մասին, սիրելի՛ս: (Միջի ձախ ձեռքը առնելով ավիի մեջ:) Քեզ հետ խոսելը թեթևացնում է ինձ: Դու շատ գիտակից ես, սիրելի՛ Միջ:

Միջ.- Բայց դու ո՞ւմ նկատի ունես:

Լեդի Անգրթել.- Ջոնին, անշուշտ: Նա փայլում է իր ուժեղ անհատականությամբ, որով օժտված են, առհասարակ, բոլոր հաջողակ բժիշկները: Բայց Գերդայի պարագայում, դե՛, մենք բոլորս պիտի բարեհամբույր լինենք:

Միջ.- (քայլելով դեպի բուխարիկը): Դե՛, Գերդա Քրիսթոն այնքան էլ վատը չէ:

Լեդի Անգրթել.- Թանկագինս: Նրա աչքե՛րը. նման են զարմանքից չոված կովի աչքերի... Եվ թվում է, թե մի բան անգամ չի հասկանում իրեն ուղղված խոսքերից:

Միջ.- Կարծում եմ՝ նա մի բան անգամ չի հասկանում քո՛ խոսքերից, և ես նրան չեմ մեղադրում: Քո միտքը, Լյուսի՛, սլանում է այնքան արագ, որ հնարավոր չէ հետևել դրա ընթացքին: Քո խոսքերի շճմեցուցիչ թռիչքները խախտում են

հաղորդակցվելու համար գոյություն ունեցող կապերը: *(Նստում է փուֆիկի վրա:)*

Լեդի Անգրթել.- Կապիկների պես... Բարեբախտաբար, Հենրիթեթան այստեղ է: Նա հրաշալի էր անցյալ գարնանը, երբ զբաղվում էինք բառախաղերով ու նման բաներով. մենք բոլորս արդեն ավարտել էինք, երբ հանկարծ անդրադարձանք, որ խեղճ Գերդան դեռ չի էլ սկսել: Նա նույնիսկ չգիտեր՝ ինչ ենք խաղում: Ուղղակի խայտառակություն էր, այդպես չէ՞, Մի՛ջ:

Միջ.- Թե դեռ ինչո՞ւ ոմանք գալիս ու ընկերակցում են Անգրթելներին, չգիտեմ: Իսկ այդ ուղեղ պահանջող խաղե՛րը, քո անսովոր խոսակցության ձևը, Լյուսի՛ :

Լեդի Անգրթել.- Կարծում եմ՝ պետք է ավելի ուշադիր լինենք: *(Բարձրանում է տեղից, մոտենում կլոր սեղանին ու վերցնում է ծխախոտի արկղը:)* Խեղճը լրիվ շփոթվեց, իսկ Ջոնը դարձավ անհամբեր: *(Գնում է դեպի բուխարիկը:)* Այդ պահին շնորհակալ եղա Հենրիթեթայից: *(Ծխախոտի արկղը դնում է բուխարիկի վրա, շրջվում է ու գալիս է)* Նա դարձավ Գերդային ու հետաքրքրվեց նրա բրդից գործված բլուզի օրինակի մասին. սիսեռագույն կանաչի վրա մի անձաշակ գործ՝ փուչիկներ, բրդե փոքրիկ գնդակներ և այլն: Ա՛հ, ոչնչություն... Բայց Գերդան միանգամից պայծառացավ ու բավարարվեց: Վատն այն էր, որ Հենրիթեթան հետո ստիպված բրդե թել գնեց ու գործեց նման մի բան:

Միջ.- Եվ դա շա՞տ անտանելի էր...

Լեդի Անգրթել.- Օհ, սարսափելի էր: Բայց ո՞չ, Հենրիթեթայի հագին բավականին սիրուն էր: Ես հենց դա նկատի ունեմ, երբ ասում եմ, որ աշխարհը այսքան տխուր, շատ, շատ տխուր է... Ուղղակի չգիտես՝ ինչու...

Միջ.- Ա՛խ, սիրելիս, էլի մի սկսիր նյութից շեղվել, խոսենք այս հանգստյան օրերի մասին:

Լեդի Անգրթելը նստում է գահավորակին:

Ես անհանգստանալու առիթ չեմ տեսնում: Եթե տնօրինես այնպես, որ խաղեր չլինեն ու Գերդայի հետ հասկանալի խոսես և եթե հանձնարարես Հենրիթեթային դրությունը փրկել անհարմար պահերին, ապա էլ ի՞նչ դժվարություն:

Լեդի Անգրթել.- Եթե Էդուարդի գալը չլիներ, այդ բոլորը միանգամայն լավ կդասավորվեր:
Միջ.- *(ազդվելով անունից):* Էդուա՞րդի: *(Բարձրանում է տեղից ու շրջվում դեպի բուխարին:)* Այո՛, իհարկե: Ախր ի՞նչը դրդեց ձեզ, այս անգամ հրավիրելու Էդուարդին, Լյուսի՛ :

Լեդի Անգրթել.- Ես չխնդրեցի նրան գալ: Ինքը հեռախոսեց՝ տեղեկանալու, թե արդյոք կարո՞ղ ենք ընդունել իրեն: Դու գիտես, թե որքան զգայուն է Էդուարդը: Եթե ասեի՛ ոչ, նա այլևս չէր կապվի, Էդուարդն այդպիսին է:

Միջ.- Այո՛:

Լեդի Անգրթել.- Միրելի Էդուա՛րդ. գոնե Հենրիթեթան որոշեր ամուսնանալ նրա հետ:

Միջը շրջվում ու նայում է Լեդի Անգրթելին:

Հենրիթեթան իսկապես տրամադրված է Էդուարդի նկատմամբ: Եթե միայն այս անգամ նրանք մի պահ կարողանային մենակ մնալ՝ առանց Քրիսթոնների: Ջոնը, անտարակույս անցանկալի ազդեցություն ունի Էդուարդի վրա, և որ-

քան աճում է Ջոնի ազդեցությունը, նույնքան Էդուարդը խեղճանում է: Դու գիտես՝ ինչ եմ ասում:

Միջը հաստատում է գլխի շարժումով:

Բայց ես զգում եմ, որ ամեն ինչ սուկալի դժվար է լինելու: *(Վերցնում է «Դեյլի Գրաֆիկ»-ը:)*

ներս է մտնում՝ Ձ սպասավոր Գաջընը: Նա օժտված է հմուտ սպասավորի հարգալից շարժումով:

Գաջըն.- *(հայտարարում է):* Մր. Էդուարդ:

Էդուարդ Անգրթելը ներս է մտնում՝ Ձ: Բարձրահասակ, թեթև կորացած մի տղամարդ է, 35-45 տարեկան, հաճելի ժպիտով ու համեստ բնավորությամբ: Գրքի սիրահար է. հագել է լավ կարված, բայց քիչ խունացած բրդե կտորից հագուստ: Գաջընը դուրս է գնում՝ Ձ:

Լեդի Անգրթել.- *(տեղից բարձրանալով ու մոտենալով Էդուարդին):* Էդուարդ *(համբուրում է),* Հենց նոր խոսում էինք այն մասին, թե ինչ լավ արիր՝ եկար:

Էդուարդ.- Ա՛հ, Լյուսի՛, Լյուսի՛: Ինչ լավ է, որ ինձ ընդունեցիք: *(Շրջվում է Միջի կողմը. ուրախությամբ ու զարմանքով:)* Ախր սա փոքրիկ Միջն է: *(Ամբողջ ընթացքում Միջի հետ խոսելիս ունի մտերմիկ, հանդուրժողական տոն՝ ինչպես երեխայի հետ:)* Այս ինչքան էս մեծացել:

Միջ.- *(քիչ թթված):* Արդեն տարիներ է, ինչ մեծացել եմ:

Էդուարդ.- Իսկապես, չէի նկատել:

Միջ.- Գիտես:

Էդուարդ.- Էյնզուլիքում, հասկանում ես, ժամանակը չի շարժվում:

Լեդի Անգրթելը կտրուկ շրջվում է, ձեռքի օրաթերթը դնում է կլոր սեղանի վրա և գնում դեպի խմիչքի սեղանը, վերցնում է սեղանին դրված գիրքը և տեղավորում խմիչքի սեղանի վերնի գրապահարանի մեջ:

Ես հաճախ մտաբերում եմ քեզ, երբ քեռի Հյուն դեռ կենդանի էր և դու արձակուրդներին գալիս էիր մեզ մոտ: *(Դեպի Լեդի Անգրթելը:)* Լյուսի՛, երանի դուք ավելի հաճախ Էյնզուլիք գայիք, հիմա այնտեղ այնքան գեղեցիկ է:

Լեդի Անգրթել.- Իսկապես, սիրելի՛ս:

ներս է մտնում Գաջընը՝ Ձ:

Գաջըն.- Կներե՛ք, տիրուհի՛, բայց Միսիս Մեդուելը ուզում է ձեզ տեսնել մեկ րոպեով՝ խորտիկների խնդրով:

Լեդի Անգրթել.- Հավի լյարդնե՛րը: *(Անցնելով Գաջընի աջ կողմը:)* Հավի լյարդների հարցում մսագործը խիղճ չունի: Ինձ մի՛ ասեք, թե դրանք դեռ չեն ստացվել:

Գաջըն.- Ստացվել են, բայց Միսիս Մեդուելը մի քիչ կասկածում է...

Լեդի Անգրթելը դուրս է գալիս՝ Ա: Գաջընը հետևում է նրան՝ փակելով դուռը իր հետևից:

- Էդուարդ.- *(հանելով սիգարետի տուփը գրպանից):* Հաճախ մտածում եմ՝ արդյոք Էյն-գուլիքը չափից ավելի կարևորություն չի ներկայացնում Լյուսիի համար:
Միջ.- Ի՞նչ առումով:
Էդուարդ.- Հենց այն, որ դա իր տունն էր: *(Սիգարետ է հանում իր տուփից):*
Միջ.- Կարո՞ղ եմ խնդրել:
Էդուարդ.- *(մեկնում է տուփը):* Այո, իհարկե:

Միջը վերցնում է մի սիգարետ:

Եթե նա տղա ծնված լիներ, տունը իմ փոխարեն կդառնար նրա սեփականությունը: Կարծում եմ այդ հանգամանքը նրան վրդովում է: *(Տուփը դնում է գրպանն ու հանում վառիչք:)*

- Միջ.- Ոչ այդ տեսակետից, ինչը նկատի ունես: Ի վերջո, դու էլ Անգրթել ես, և դա է հարցը: Անգրթելները խիստ կապված են մեկը մյուսին ու մինչև անգամ ամուսնանում են իրենց զարմիկների հետ:
Էդուարդ.- Այո՛, բայց նա չափից ավելի ուշադրություն է դարձնում Էյնգուլիքին:
Միջ.- Օ՛հ, այո՛: Լյուսին այս աշխարհում ամեն բանից շատ հոգատար է Էյնգուլիքի հանդեպ: *(Նայում է բուխարիկի վերը կախված նկարին:)* Այս նկարը իշխող հանգամանք ունի այս տան վրա: *(Դեպի Էդուարդը:)* Բայց, եթե կարծում ես Լյուսին լցված է քո դեմ, սխալվում ես, Էդուա՛րդ:
Էդուարդ.- *(վառելով Միջի սիգարետը):* Երբեք Լյուսիին չեմ հասկանում մինչև վերջ: *(Շրջվում, գնում է դեպի գահավորակի Ձ կողմն ու վառում իր սիգարետը):* Նա միշտ առեղծվածային է:
Միջ.- Լյուսին իմ ճանաչած ամենապաշտելի էակն է և՛ ամենադուրազրգիռը:

Հենրիեթան ներս է մտնում՝ Ձ՝ հարդարված, փակելով դուռն իր հետևից :

- Հենրիեթա.- Ողջո՛ւյն, Էդուա՛րդ:
Էդուարդ.- Հենրիեթա՛, հաճելի է հանդիպել քեզ:
Հենրիեթա.- *(անցնելով Էդուարդի Ձ կողմը):* Ի՞նչ կա, չկա Էյնգուլիքում:
Էդուարդ.- Հիմա այնտեղ շատ սիրուն է:
Հենրիեթա.- *(դեպի Միջը):* Բարև, Մի՛ջ, սիրելի՛ս, դու ինչպե՞ս ես:
Էդուարդ.- *(սիգարետ է առաջարկում Հենրիեթային):* Հենրիեթա՛, պիտի անպայման գաս:
Հենրիեթա.- *(վերցնելով մի սիգարետ):* Այո՛, գիտեմ: Օ՛, որքան հրաշալի էր այնտեղ, երբ երեխա էինք:

Լեդի Անգրթելը ներս է մտնում Ձ՝ ձեռքին բռնած լարից կախված մի խոշոր խեցե-տին:

- Լեդի Անգրթել.- *(ընթանալով դեպի կլոր սեղանը՝ Ա):* Առևտրականները ճիշտ նման են այգե-պանների. նրանք չարաշահում են մարդու անտեղյակությունը: Համաձայն չե՞ս, Էդուա՛րդ: Երբ ուզում ես նրանց ժողովել մի տեղ, նրանք սկսում են ավարել: *(Հանկարծ նկատում է ձեռքի խեցետինը:)* Իսկ սա՞ ինչ է:
Էդուարդ.- Ինձ թվում է՝ դա խեցետին է:

Լեդի Անգրթել.- Խեցգետին է, բայց որտեղի՞ց վերցրի, ինչպե՞ս դրանով ներս մտա:
 Հենրիեթա.- Ենթադրում եմ, որ դա վերցրել ես խոհանոցի սեղանի վրայից:
 Լեդի Անգրթել.- *(խեցգետինը կախելով գահավորակի հակառակ կողմը):* Օ՛հ, հիշում եմ.
 մտածեցի, որ այս գույնի բարձր կսազեր այստեղ: Ի՞նչ կարծիքի եք:
 Հենրիեթա.- Ո՛չ:
 Լեդի Անգրթել.- Ո՛չ: Մի բան էր, մտածեցի...

Գաջընը ներս է մտնում՝ Ձ և մոտենում է Լեդի Անգրթելին. ձեռքին մատուցարան կա:

Գաջըն.- *(հանդարտ):* Կներե՛ք, տիրուհի՛, Միսիս Մեդուեյն ասաց, որ խեցգետինը պետք ունի:

Լեդի Անգրթելը խեցգետինը դնում է մատուցարանին:

Ծնորհակալ եմ, տիրուհի՛ս: *(Շրջվում ու դուրս է գալիս՝ Ձ: Բոլորը ծիծաղում են:)*
 Լեդի Անգրթել.- Գաջընը հրաշալի է *(նստելով գահավորակին)*, նա միշտ հայտնվում է ճիշտ ժամանակին:
 Հենրիեթա.- *(կողմ:)* Մի՛ջ, մի վառիչ կտա՞ս:
 Էդուարդ.- *(մոտենալով Լեդի Անգրթելին ու սիգարեթ առաջարկելով:)* Քանդակդ ի՞նչ դրության մեջ է, Հենրիեթա՛:
 Լեդի Անգրթել.- Գիտես, որ ես չեմ ծխում, սիրելիս:

Միջը վերցնում է վառիչը բուխարիկի վրայից:

Հենրիեթա.- Դեռ աշխատում եմ դրա վրա: Պատրաստ է Միջազգային Խմբակցության պատվերով փայտե ֆիգուրը: Կուզե՞ս տեսնել:
 Էդուարդ.- Այո:
 Հենրիեթա.- Դա պահվում է տան այն մասում, որը ինչքան գիտեմ՝ այս դղյակը Սըր Հենրիին վաճառող գործակալը անվանել է՝ «նախաճաշի անկյուն»:

Միջը վառում է Հենրիեթայի սիգարեթն ու վառիչը դնում է բուխարիկի վրա:

Լեդի Անգրթել.- Փառք Աստծո, որ նախաճաշս մինչև օրս չեմ վայելել մի խորշի մեջ...

բոլորը ծիծաղում են: Հենրիեթան մոտենում է խորշին՝ Ձ, վարագույրը ետ է տանում ու սեղմում հոսանքի անջատիչը. ապա շարժվում է մի կողմ: Էդուարդը Միջին ուղեկցում է դեպի խորշը և կանգնելով նրա Ա կողմում՝ երկուսով նայում են:

Հենրիեթա.- Դա կոչվում է՝ «Երկրպագու»:
 Էդուարդ.- *(տպավորված):* Ուժեղ գործ է՝ հիանալի գծեր: Ի՞նչ փայտից է:
 Հենրիեթա.- Տանձենու:
 Էդուարդ.- *(կարկամելով):* Դա... անհանգստացնող ինչ-որ բան ունի իր մեջ:
 Միջ.- *(ներվային):* Վախազդու է:
 Էդուարդ.- Այդ դեպի առաջ ծանր, կորացած պարանո՛ցը՝ այդ խոնարհո՛ւմը, դեմքի ֆանատի գմը, աչքե՛րը՝ նա կո՛ւյր է: *(Շրջվում է ու նայում Հերնիետային:)*

Հերնիետա.- Այո՛ :
 Էդուարդ.- Ինչի՞ է նայում... իր կույր աչքերով:
 Հենրիեթա.- *(հեռանալով)*: Չգիտեմ, թերևս իր Աստծուն:
 Լեդի Անգրթել.- *(մեղմ)*: Խեղճ Հենրիեթա:
 Հենրիեթա.- *(շարժվելով դեպի բազկաթոռի 'ԿՁ աջ կողմը)*: Ի՞նչ ասացիր, Լյուսի՛:

Էդուարդը մոտենում է բուխարիկին ու սիգարեթի մոխիրը շաղ է տալիս դրա մեջ:

Լեդի Անգրթել.- *(բարձրանալով տեղից)*: Ոչինչ: *(Գնում է գահավորակի Ա կողմն ու դիտում դուրսը՝ Ա:)* Ա՛հ, նայե՛ք, սարյակները... ինչ քաղցր են. մարդ նստի ու պատուհանից նայի ծառերի վրա հավաքված թռչուններին, չէ՞: *(Շրջվում է)*: Էյնգուլիքում դեռևս ճայե՛ր կան, Էդուա՛րդ:
 Էդուարդ.- Ը՛, այո՛, ցածր գետի մոտ:
 Լեդի Անգրթել.- *(մեղմ)*: Ցածր, գետի մոտ... ա՛հ, սիրելի՛ս...

Չայնը մարում է նրա դուրս գնալով՝ Ա:

Էդուարդ.- Ինչո՞ւ նա ասաց՝ «Խեղճ Հենրիեթա»:

Միջը ծածկում է խորշի վարագույրն ու անջատում լույսը. գնում ու նստում է գահավորակի Ա եզրին:

Հենրիեթա.- Լյուսին կույր չէ:
 Էդուարդ.- *(սիգարեթը սեղմելով բուխարիկի վրա դրված մոխրամանի մեջ)*: Հենրիեթա՛, չգնա՞նք միասին քայլելու: *(Շարժվում է ձախ, կենտրոն:)* Ուզում եմ՝ մեքենան վարելուց հետո ոտքերս բացվեն:
 Հենրիեթա.- Միրով: *(Մոտենում է կլոր սեղանին ու սիգարեթը հանգցնում այնտեղ դրված մոխրամանի մեջ:)* Ամբողջ օրը աշխատել եմ: Դու չե՞ս գա, Մի՛ջ:
 Միջ.- Ոչ, շնորհակալ եմ:

Էդուարդը դանդաղ շարժվում է կենտրոն:

Ես կմնամ ու կօգնեմ Լյուսիին Քրիսթոների խնդրում, երբ նրանք տեղ հասնեն:

Էդուարդ.- *(կանգնելով ու կտրուկ շրջվելով)*: Քրիսթո՞ն, նա՞ էլ է գալու...
 Հենրիեթա.- Այո՛ :
 Էդուարդ.- Երանի ինձ ասած լինեիք:
 Հենրիեթա.- *(լարված)*: Ինչո՞ւ :
 Էդուարդ.- *(շատ մեղմ ձայնով)*: Ես կարող էի գալ... գալ մի ուրիշ անգամ:

դադար, որից հետո Հենրիեթան ու Էդուարդը դուրս են գալիս Կ-ից Ձ: Միջը հետևում է նրանց հայացքով. դեմքի արտահայտությունը վկայում է Էդուարդի հանդեպ նրա հուսահատ սիրո մասին: Լեդի Անգրթելը մտնում է՝ Ա. ու գնում գահավորակի Ա կողմը:

Լեդի Անգրթել.- *(թթի տակ)*: Հենրիեթան ու Էդուարդը գնացին քայլելո՞ւ :
 Միջ.- Այո՛ :

- Լեդի Անգրթել.- Էդուարդը տեղյակ է Քրիստոնեների մասին:
 Միջ.- Այո՛:
- Լեդի Անգրթել.- Ըստ նրա՝ ամեն բան լավ է:
 Միջ.- Ոչ այնքան:
 Լեդի Անգրթել.- *(մտտենալով Ա կողմի ֆրանսիական պատուհանին):* Օ՛հ, սիրելի՛ս, զգում եմ, որ այս երկու օրը դժվար է անցնելու:

Միջը բարձրանում է, սիգարեթը հանգցնում կլոր սեղանի մոխրամանի մեջ, վերցնում է փոքրիկ պայուսակն ու ձեռնոցները և մտտենում է Լեդի Անգրթելին:

- Միջ.- Լյուսի՛, գնանք պարտեզ: Ի՞նչ կա ծաղիկների աշխարհում: Հուսահատ թափառաշրջիկների նման եմ այս օրերին... Շատը՝ երևի գեորգենինե՛ր:
 Լեդի Անգրթել.- Հա՛, անչափ գեղեցիկ, բայց մի քիչ թոշնած ու ծածկված ականջամտուկներով: Որպես տեղեկություն՝ լսել եմ ականջամտուկները լավ մայրեր են, իհարկե ոչ այնքան, որ սիրես նրանց...

Լեդի Անգրթելը և Միջը դուրս են գալիս՝ Ա.: Ներս է մտնում սպասուհի Դորիսը՝ Ձ և դուռը բաց է թողնում: Ոչ շատ կիրթ մեկն է. վախենում է Գաջընից: Գաջընը մտնում է՝ Ձ ու մտտենում է խմիչքի սեղանին: Ձեռքին մատուցարան կա վրան՝ խմիչքներ, ձիթապտուղով լի աման և անձեռոցիկ: Դորիսը փակում է դուռը և կանգնելով կենտրոնում հորանջում է:

- Գաջըն.- *(մատուցարանը դնելով խմիչքի սեղանի վրա):* Դե ինչ, ծալիր օրաթերթերը իմ ցույց տված ձևով, Դորիս: *(Ինքը սկսում է փայլեցնել բաժակները:)*
 Դորիս.- *(առանց հապաղելու անցնելով կլոր սեղանի կողմը Ձ):* Այո՛, Մր. Գաջըն: *(Վերցնում է «Թայմզ»-ը՝ ծալելով:)* Նորին Ազնվափայլությունը խելառ է, չէ՞, Մր. Գաջըն:
 Գաջըն.- *(շրջվելով):* Անշուշտ, ո՛չ: Նորին Ազնվափայլությունը օժտված է մեծ խելքով, խոսում է հինգ օտար լեզուներով և Սըր Հենրիի հետ ճամփորդել է ողջ աշխարհը: Սըր Հենրին Հնդկաստանի կարևոր նահանգներից մեկի նահանգապետն էր: Նա մեծ հավանականությամբ կդառնար փոխարքա, եթե էդ անիժյալ Բանվորական կուսակցության կառավարությունը ցրիվ չտար մեր Կայսրությունը:
 Դորիս.- *(օրաթերթը դնելով գահավորակի թիկնակին՝ Ձ):* Իմ հայրը «բանվորական» է:

դադար, որի ընթացքին Գաջընը Դորիսին նայում է համարյա արգահատանքով:

(Դորիսը ընկրկում է. ներողամտություն հայցող տոնով): Օ՛հ, կներե՛ք Մր. Գաջըն):

- Գաջըն.- *(հանդուրժողական):* Դրանով դու չես օգնի ծնողներիդ Դորի՛ս:
 Դորիս.- *(խոնարհաբար):* Գիտեմ, որ նրանք շարքային չեն:
 Գաջըն.- *(հովանավորի տոնով):* Բավականին լավ ես առաջանում, *(շրջվում է խմիչքի սեղանի կողմը և շարունակում փայլեցնել բաժակները),* իհարկե, ոչ այնքան լավ, որքան մեզանից յուրաքանչյուրը: Անտառապահի դուստրը կամ գլխավոր ախտապանի դուստրը՝ երիտասարդ մի աղջիկ, որը գիտի՝ ինչպես վարվել և լավ է դաստիարակվել:

Դորիսը վերցնում է «Դեյլի Գրաֆիկ»-ն ու սկսում ծալել:

Ահա այն, ինչ ես ուզում եմ սովորեցնել քեզ:

Դորիս.- *(դնելով կոկիկ հավաքած բոլոր օրաթերթերը կլոր սեղանի վրա):* Ներդրություն, Մր. Գա՛ջըն: *(Մոտենում է գրասեղանին, վերցնում է դրա վրայի մոխրամանը, վերադառնում է կլոր սեղանի մոտ ու դատարկում ձեռքինը այնտեղ դրվածի մեջ:)*

Գաջըն.- Մ՛հ, թվում է, թե այդ օրերն ընդմիջտ անցել են:
Դորիս.- *(դատարկ մոխրամանը դնում է գրասեղանի վրա):* Միսիս Սիմընդզը միշտ ինձ նախատում է:

Գաջըն.- Նա քեզ լավություն է անում, Դորի՛ս, կրթում է քեզ:
Դորիս.- *(վերցնում է կլոր սեղանի մոխրամանը ու դատարկում բուխարիկի վրա դրվածի մեջ:)* Եթե սովորեմ, շատ փող կվաստակեմ, չէ՞: *(Դատարկ մոխրամանը դնում է կլոր սեղանի վրա:)*

Գաջըն.- Ներիր, բայց ոչ շատ:
Դորիս.- *(մոտենալով բուխարիկին):* Էլ ի՞նչ օգուտ սովորելուց: *(Վերցնում է լցված մոխրամանը բուխարիկի վրայից:)*

Գաջըն.- Երևի դու ճիշտ ես, աղջիկս:

Դորիսը մոտ է՝ մոխրամանը դատարկի բուխարիկի կրակի մեջ:

Մ՛հ...

Դորիսը մեղավոր շրջվում է և մոխրամանը դնում բուխարիկի վրա:

Խնդիրն այն է, որ այս օրերում կարգին գործատերեր չկան: Չկա մեկը, որն իմանա ինչը ինչոց է: Ովքեր էլ ծառայող վարձելու համար դրամ ունեն, չեն գնահատում լավ սպասավորին:

Դորիս.- *(մոտենալով բազկաթոռին՝ ԿՁ):* Հայրս ասում է, որ ես ինքս ինձ կոչեմ տնային աշխատող *(Հարդարում է բարձիկները:)*

Գաջըն.- *(Գնալով դեպի գահավորակը):* Դա միայն կախված է նրանից, թե ինչպիսին ես ինքդ: *(Թիկնում է գահավորակի վրա և հարդարում բարձիկները:)* Եվ կասեմ, աղջի՛կս, դու բախտավոր ես, որ գտնվում ես այս տան մեջ, ուր զինու բաժակները գործածում են ընդունված ձևով, ուր տերն ու տիրուհին մեծապես գնահատում են մասնագիտական հմտությունը: *(Շարժվելով դեպի ավելի ցած դրված աթոռը Ա և հարդարելով բարձիկը:)* Քիչ են այնպիսի գործատուները, որոնք նկատեն սեղանի շուրջ սխալ ուղղությամբ շարժվելը:

Դորիս.- *(գնալով բուխարիկի կողմը:)* Ես դեռևս մտածում եմ, որ նորին ազնվափայլությունը ծիծաղելի գործեր է անում: *(Վերցնում է լիքը մոխրամանը բուխարիկի վրայից:)* Հիմա էլ՝ եղ խեցգետինը...

Գաջըն.- *(անցնելով գահավորակի առջևից՝ Ա դեպի բազկաթոռը ԿՁ՝):* Նորին ազնվափայլությունը ինչ-որ չի կարողանում կենտրոնանալ, բայց դա չի նշանակում, որ ցնդել է: Ես զգում եմ, որ այս տան մեջ ամեն բան արվում է՝ նրան զերծ պահելու անհանգստությունից ու տհաճություններից:

դրսից լսվում է մեքենայի ազդանշանի ձայն:

(Մոտենում է խմիչքի սեղանին ու վերցնում անձեռոցիկը, անցնում է ԿՁ ու վերցնում Միջի ճամպրուկը:) Պետք է, որ Դր. և Միսիս Քրիսթոնները լինեն: Գնա՛ վերի հարկը և պատրա՛ստ եղի՛ր Սիմընդզին օգնելու դասավորել բեռները:

Դորիս.- *(Գնալով Ձ դուռը և բացելով այն:)* Լսում եմ, Մր. Գա՛ջըն: *(Ուզում է դուրս գալ:)*

Գաջըն.- *(հանդիմանական):* Ա՛հ, ա՛հ...

Դորիս.- *(մի քայլ ետ):* Ա՛խ... *(Դուռը պահում է բաց վիճակում:)*

Գաջըն.- *(մոտենում է դռան՝ Ձ):* Շնորհակալ եմ:

Ժամացույցը ազդարարում է ժամի յոթը: Գաջընը դուրս է գալիս՝ Ձ: Դորիսը հետևում է նրան՝ բաց թողնելով դուռը:

(չորորդ զանգից հետո. դրսից՝ Ձ): Բարի երեկո, սը՛ր:

Ջոն.- *(դրսից՝ Ձ):* Բարի երեկո, Գա՛ջըն, ի՞նչպես ես:

Գաջըն.- *(դրսից՝ Ձ):* Բարի երեկո, մադա՛մ. շատ լավ, շնորհակալ եմ սըր:

Գերդա.- *(դրսից՝ Ձ):* Բարի երեկո, Գա՛ջըն:

Գաջընը ներս է մտնում՝ Ձ, Ներս հրավիրելով Ջոն և Գերդա Քրիսթոններին: Ջոնը 38 տարեկան, բարետես տղամարդ է՝ օժտված ուժեղ նկարագրով, բայց մասամբ կոպիտ: Գերդան երկչոտ, քիչ ապուշ կին է: Ձեռքին կրում է կաշվե պայուսակ:

Գաջըն.- *(ներս մտնելով):* Ներս համեցեք, մադա՛մ:

Գերդա.- *(անցնելով՝ ԿՁ):* Որքա՛ն շոգ է:

Գաջըն.- Շատ շոգ է, մադա՛մ: Հուսով եմ հաճելի էր ճանապարհին:

Ջոնը անցնում է Կ:

Գերդա.- Այո՛, շնորհակալ եմ:

Գաջըն.- *(դուռը ծածկելով):* Կարծում եմ՝ նորին ազնվափայլությունը պարտեզում է, Մըր: *(Անցնում է Ա:)* Ես նրան կհայտնեմ ձեր ժամանման մասին:

Ջոն.- Շնորհակալ եմ, Գա՛ջըն:

Գաջընը դուրս է գալիս՝ Ա:

Ջոն.- *(անցնում է պատշգամբ՝ Կ ու նայում դուրս՝ Ձ):* Հը՛մ, հաճելի է հեռանալ քաղաքից ու գալ այստեղ:

Գերդա.- *(թիկնելով բազկաթոռի՝ թիկնակին՝ Ա. անտարբեր):* Հա՛, շատ լավ է:

Ջոն.- Տեր Աստված, զգվում եմ Լոնդոնի կաշկանդված վիճակիցս: Նստել այդ անիծված ընդունարանում ու լսել սեթևեթող կանանց: Տանել չեմ կարողանում հիվանդ մարդկանց...

Գերդա.- Օ՛հ, Ջո՛ն, այդպես մի՛ խոսիր:

Ջոն.- Զգվում եմ հիվանդությունից:

Գերդա.- Եթե հիվանդներին աստեիր, բժիշկ չէիր դառնա, չէ՞, սիրելի՛ս:

Ջոն.- *(անցնելով գահավորակի վերի կողմը):* Ոչ ոք բժիշկ չի դառնում այն պատճառով, որ հակում ունի հիվանդների նկատմամբ: Դա հիվանդությունն է, որ

գրավում է ավելի, քան հիվանդը: *(Գնում է Ա ու սկսում տնտղել պատվանդանի վրա դրված քանդակը:)* Դու տարօրինակ մտածելակերպի տեր ես, Գերդա :

Գերդա.- Բայց դու իսկապես սիրում ես բուժել մարդկանց:

Ջոն.- *(շրջվելով):* Ես նրանց չեմ բուժում: *(Նստում է գահավորակի աջ եզրին:)* Ես նրանց տալիս եմ հավատ, հույս և գուցե՝ լուծողական... Օ՛հ, տեր Աստված, հոգնած եմ:

Գերդա.- *(մտտենալով գահավորակին):* Ջոն՛ն, դու շատ ես աշխատում, դու այնքան անշահախնդիր ես: *(Նստում է գահավորակի ձախ եզրին:)* Հաճախ եմ երեխաներին ասում, որ բժիշկների կյանքը համակ գոհաբերություն է: Ես անչափ հպարտ եմ այն գործով, որին դու նվիրել ես քո ողջ ժամանակն ու էներգիան՝ անտեսելով ինքդ քեզ:

Ջոն.- Օ՛, Աստծո սիրույն, Գերդա. առնվազն չգիտես, թե ինչ ես խոսում: Չե՞ս հասկանում, որ ես հաճույք եմ ստանում իմ մասնագիտությունից: Դա, գրողը տանի, անչափ հետաքրքիր է և լավ դրամ եմ վաստակում:

Գերդա.- Քեզ միայն դրամը չի հետաքրքրում, սիրելի՛ս: Տե՛ս, թե որքան կլանված ես քո հիվանդանոցային աշխատանքով: Դա թեթևացնում է ցավն ու տանջանքը:

Ջոն.- Ցավը, դա կենսաբանական անխուսափելիություն է, իսկ տանջանքը մեզանից միշտ անբաժան է: Ինձ հետաքրքրում է միայն բժշկության արվեստը:

Գերդա.- Ու մարդականց տառապանքը...

Ջոն.- *(բարձրանալով ու անցնելով գահավորակի վերի կողմը):* Օ՛հ, Աստծո սիրույն... *(Խոսքը ընդհատում է, գղջում է միանգամից:)* Կներես, Գերդա՛, չէի կամենում քեզ վրա բղավել: *(Գրպանից հանելով տուփը):* Կարծում եմ սուկայի ներվային եմ դարձել ու... անտակտ: Շատ... շատ ցավում եմ:

Գերդա.- Չարժե, սիրելի՛ս, հասկանում եմ:

դադար, որի ընթացքին Ջոնը մոտենում է բազկաթոռին՝ ԿՁ և մի սիգարեթ է հանում իր տուփի միջից:

Ջոն.- Գիտե՞ս, Գերդա՛, եթե դու այդքան համբերատար չլինեիր ու անվերջ չտառապեիր, շատ ավելի լավ կլինեիր: Ինչո՞ւ երբեմն չես փոխադարձում, չես հառնում ինձ: Օ՛հ, մի՛ նայիր ինձ էդպես զարմացած, լավ կլինեիր վարվեիր ասածիս պես: Ոչ մի տղամարդ չի ցանկանա... խեղդվել քաղցր օշարակի մեջ... *(Կտրուկ շարժումով փակում է տուփի կափարիչն ու դնում գրպանը:)*

Գերդա.- Դու հոգնած ես, Ջոն՛ն:

Ջոն.- *(նստելով բազկաթոռին՝ ԿՁ. վհատ):* Այո՛, հոգնած եմ: *(Մեջքով թիկնում է ու գոցում աչքերը:)*

Գերդա.- Դու արձակուրդի կարիք ունես:

Ջոն.- *(երազկոտ):* Կուզեի գնալ Ֆրանսիայի հարավը... Միջերկրականը, արևը, ծաղկած միմոզան...

Գերդա.- *(վեր կենալով ու անցնելով Ջոնի աջ կողմը):* Իսկապես, ինչո՞ւ չգնանք: *(Մտախոգ:)* Օ՛հ, այնքան էլ վստահ չեմ, որ կկարողանանք լուծել երեխաների հարցը. իհարկե, Թըրենսը ամբողջ օրը դպրոցումն է, բայց լավ չի վարվում ուսուցչուհու հետ: Ուսուցչուհին քիչ ազդեցություն ունի նույնիսկ Զինայի վրա: Ո՛չ, չեմ կարծում, որ ինձ ուրախ կզգամ: Իհարկե, նրանք կարող են գնալ Բեքսիլ՝ Էլիզի մոտ, կամ գուցե Մերի Ֆոլին հանձն առնի պահել նրանց...

Ջոն.- *(աչքերը բացելով. անորոշ):* Ի...Ի՞նչ էիր ասում...

- Գերդա.- Երեխաները:
 Ջոն.- Երեխաները, ի՞նչ...
 Գերդա.- Մտածում էի՝ ոնց լուծել երեխաների մենակ մնալու հարցը՝ Ֆրանսիայի հարավը գնալու դեպքում:
 Ջոն.- *(գրպանից վառիչք հանելով):* Ինչո՞ւ պիտի գնանք Ֆրանսիայի հարավը, ի՞նչեր ես դուրս տալիս... *(Վառում է սիգարեթը):*
 Գերդա.- Որովհետև ինքդ ասացիր, որ... կուգես... գնալ...
 Ջոն.- Ա՛հ, էդպե՛ս: Աչքերս բաց երազում էի:
 Գերդա.- *(մոտենալով բազկաթոռի՝ ԿՁ Ձ կողմին):* Չեմ կարծում, որ չկարողանանք դասավորել, միայն մի քիչ մտահոգիչ է, երբ զգում ես, որ փոխարինող անձը այնքան էլ վստահելի մեկը չէ, և երբեմն մտածում եմ...
 Ջոն.- *(կանգնելով ու անցնելով գահավորակի առջևից՝ Ա):* Դու երբևէ չես դարձում այս կամ այն բանի համար մտահոգվելուց: Աստծո սիրույն, թող հանգիստ վայելենք այս հանգստյան օրերը: Առնվազն կարճ ժամանակով հեռու ես առօրյա հոգսերից:
 Գերդա.- Այո՛, գիտեմ:
 Ջոն.- *(անցնելով գահավորակի վերի մասը):* Հրաշալի մարդիկ են այս Անգրթելները. նրանց մոտ մարդ վերակենդանանում է:
 Գերդա.- Այո՛:
 Ջոն.- *(գնալով պատշգամբ՝ Կ):* Չարմանում եմ՝ ո՞ւր են կորել նրանք, բոլորը: *(Հայացք նետելով դուրս՝ Ձ:)*
 Գերտա.- *(նստելով բազկաթոռին՝ ԿՁ):* Հենրիեթան այստե՞ղ կլինի:
 Ջոն.- Այո՛, նա այստեղ է:
 Գերդա.- Օ՛հ, անչափ ուրախ եմ. շատ եմ սիրում Հենրիեթային:
 Ջոն.- *(քիչ լակոնիկ):* Հենրիեթան լավն է:
 Գերդա.- Երևի նա արդեն ավարտել է այն քանդակը, որը ստեղծում էր իմ տեսքով:
 Ջոն.- *(շարժվելով գահավորակի Ա եզրը. կտրուկ):* Չգիտեմ՝ ինչու նա հենց քեզ ընտրեց որպես բնորդ: Շատ զարմանալի է:

Գերդան ընկրկում է նրա տոնից ու նայվածքից:

(անցնելով՝ Ա): Միշտ մտածում եմ՝ լավ է, երբ մարդիկ տոնից դուրս չեն գալիս հյուր ունենալիս:

(Դուրս է գալիս՝ Ա: Գերդան վեր է կենում, անցնում է գահավորակի առջևից՝ Ա, նայում է դուրս, շրջվում է, նայում՝ Ձ, տատանվում է, խաղում է ձեռքի պալուսակի հետ, հագում է ջղային ու գնում է կենտրոն՝ Ձ:)

Էդուարդ.- *(դուրս՝ Կ):* Չմոռանը կտրելու եմ ծառերի շարքը, որպեսզի լավ երևա լճի տեսարանը:

Հենրիեթան ու Էդուարդը ներս են մտնում՝ Ձ, Կ-ի խորքից: Գերդան շրջվում է: Էդուարդը հենվում է գահավորակին՝ Ձ:

Հենրիեթա.- *(ներս մտնելով):* Դա շատ լավ միտք է, կարծում եմ, Էդուա՛րդ: Ողջույն, Գերդա՛, ինչպե՛ս ես: Դու ճանաչում ես Էդուարդ Անգրթելին, չէ՞: *(Հենվում է գահավորակի աջ եզրին:)*

Էդուարդ.- Ինչպե՞ս էք, Միսի՛ս Բրիսթոն:
Գերդա.- Դուք ինչպե՞ս էք: *(Ձեռքից ցած է գցում ձեռնոցը ու նորից վերցնում:)*

Էդուարդը կռանում է վերցնելու ձեռնոցը, բայց Գերդան կանխում է նրան:

Հենրիեթա.- Ջոնն ո՞ւր է:

Էդուարդը շրջվում ու նայում է Հենրիեթային:

Գերդա.- Նա հենց նոր պարտեզ իջավ՝ Լեդի Անգրթելին գտնելու հույսով:
Հենրիեթա.- *(գնալով դեպի ֆրանսիական պատուհանը՝ Ա. ու նայելով դուրս՝ Ձ):* Այս պո-
գում անհնարին է մեկին գտնել, ամենուրեք ծառեր ու թփեր են:

Գերդա.- Բայց շուտով այստեղ կիշխեն աշնանային հաճելի գույները:
Հենրիեթա.- *(շրջվելով):* Այո՛: *(Շրջվում է ու ակնդետ նայում է պատուհանից դուրս:)*
Էդուարդ.- *(գնալով դեպի դուռը՝ Ձ:)* Ինձ կներեք, գնամ հագուստս փոխեմ:

**դուրս է գալիս՝ Ձ: Գերդան ուզում է հետևել նրան, բայց կանգ է առնում, որովհետև
Հենրիեթան խոսում է:**

Հենրիեթա.- Աշունը լի է հուշերով... ասես մեկն անվերջ կրկնում է. «Հիշում ե՞ս»...

Գերդան ընկճված ու ակնհայտորեն խեղճացած՝ գնում է դեպի բազկաթոռը՝ ԿՁ:

(հանկարծ շրջվում ու նայում է Գերդային. դեմքը մեղմանում է): Կուզե՞ս մենք
էլ գնանք ու գտնենք նրանց:

Գերդա.- *(կիսով չափ նստում է բազկաթոռին՝ ԿՁ):* Ո՛չ, խնդրում եմ... ուզում եմ ասել...
(կանգնում է), այո՛, վատ չի լինի, գնանք:

Հենրիեթա.- *(անցնելով գահավորակի առջևից. փութկոտ):* Գերդա՛, ինչո՞ւ եկար, երբ ա-
տում ես այս վայրը:

Գերդա.- Բայց ես չեմ ատում:

Հենրիեթա.- *(ծունկը դնելով գահավորակի վրա):* Այո՛, ատում ես:

Գերդա.- Իսկապես՝ չէ: Հաճելի է գալ գավառային այս անկյունը. Լեդի Անգրթելն էլ
միշտ շատ բարի է:

Հենրիեթա.- Լյուսի՛ն: *(Նստում է գահավորակի աջ եզրին:)* Լյուսին բնավ էլ բարի չէ: Նա
լավ նկարագիր ունի ու գիտի քաղցրաբարո երևալ: Բայց ես հաճախ այն
կարծիքի եմ, որ նա կարծրասիրտ մարդ է, թերևս՝ որովհետև նրա մեջ մարդ-
կայնություն չկա: Նա չի զգում ու մտածում սովորական մարդկանց պես: Եվ
դու ատում ես այս վայրը, Գերդա՛, ինքդ էլ գիտես դա:

Գերդա.- *(մոտենալով գահավորակին՝ Ա):* Դե՛, հասկացիր, Ջոնը սիրում է:

Հենրիեթա.- Ջոնը սիրում է, շատ լավ, դու էլ թողնեիր մենակ ինքը գար:

Գերդա.- Չէր գա, նա առանց ինձ այստեղ հաճույք չէր ստանա: Նա շա՛տ վեհանձն է:
Նա կարծում է՝ ինձ համար հաճելի է գալ այս գավառային շրջանը: *(Շարժ-
վում է գահավորակի առջևից՝ Ձ:)* Բայց ուրախ եմ, որ դու այստեղ ես, թեև...
Դա տանելի է դարձնում...

Հենրիեթա.- Իսկապե՞ս, շատ ուրախ եմ:

Գերդա.- *(նստելով գահավորակի եզրին՝ Ձ, ինքնատիրապետումը կորցնելով):* Գի-
տե՞ս, իսկապես չեմ սիրում տնից հեռու լինել: Շատ բան կա անելու նախքան

մեկնելը, և Ջոնը այնքան անհամբեր է: Նույնիսկ այժմ համոզված չեմ, որ բաղնիքի ծորակները կարգին փակել ու լվացքի համար անհրաժեշտ կարգադրություն արել եմ: Գիտե՞ս, Հենրիեթա՛, ես չեմ վստահում երեխաների ֆրանսիացի դաստիարակչուհուն: Երբ ես չկամ, երեխաները նրա խոսքը չեն լսում: Դե լավ, այս անգամ միայն երկու օր է:

- Հենրիեթա.- Երկու դժոխային օր... ցնծությամբ անցկացնելու՝ հանուն Ջոնի...
- Գերդա.- Անշուշտ մտածում ես, որ անշնորհակալ եմ, երբ բոլորը բարությամբ են տրամադրված իմ հանդեպ: Նախաճաշ մատուցվում է իմ սենյակում ու սպասավորուհիները հիանալի պատրաստված են... Բայց, երբեմն զգում եմ...
- Հենրիեթա.- Գիտեմ: Նրանք վերցնում են հագուստդ ու դնում մի տեղ, ուր չես կարողանում գտնել կամ տալիս են այնպիսի զգեստ կամ կոշիկ, որը չես ուզում հագնել: Իսկապես պիտի աչալուրջ լինել:
- Գերդա.- Օ՛հ, կարծում եմ երբեք աչալուրջ չեմ:
- Հենրետա.- Ինչպե՞ս է ընթանում բրդե ձեռագործը:
- Գերդա.- Հիմա զբաղվում եմ կաշվի գործով: *(Ցույց տալով ձեռքի պայուսակը:)* Ես եմ պատրաստել այս ձեռքի պայուսակը:
- Հենրիեթա.- Իսկապե՞ս: *(Բարձրանում է տեղից, գնում է խորշ ու բացում վարագույրը:)* Դա ինձ հիշեցրեց, որ քեզ համար մի բան ունեմ պահած:

միացնում է լույսը և մտնում խորշ: Անմիջապես վերադառնում է ձեռքին կավից պատրաստված մի արձանիկ: Անջատում է լույսը, փակում է վարագույրը և մոտենում բազկաթոռին՝ ԿՁ:

- Գերդա.- *(Ելնելով ու մոտենալով Հենրիեթային):* Հենրիեթա՛... սա իմ մոդելով պատրաստածդ արձանիկը չէ՞:

Հենրետան արձանիկը տալիս է Գերդային:

- Հենրետա.- Օ՛, շատ լավն է:
- Գերդա.- Որախ եմ, որ հավանում ես:
- Ջոն.- *(գնալով գահավորակի Ձ կողմը):* Իսկապես, շատ սիրեցի:
- Ջոն.- *(դուրս՝ Ա):* Ասում եմ, Սըր Հենրի, ձեր այգեպանը հիանալի է գլուխ հանել վարդերից:

ներս են մտնում Լեդի Անգրթելը, Ջոնը, Միջը և Սըր Հենրին՝ Ա:

- Սըր Հենրի.- *(ներս մտնելով):* Հողն այստեղ բավականին նպաստավոր է վարդ աճեցնելու համար:
- Ջոն.- *(անցնելով գահավորակի Ձ կողմը):* Ողջո՛ւյն, Հենրիեթա՛:
- Հենրիեթա.- Ողջո՛ւյն, Ջոն՛ն:
- Լեդի Անգրթել.- *(մոտենալով գահավորակին):* Օ՛, հաճելի է հանդիպել քեզ, Գերդա՛:
- Սեր Հենրի.- *(մոտենալով գահավորակին):* Ինչպե՞ս էք, Միսի՛ս Բրիսթոն:
- Լեդի Անգրթել.- Դու վաղուց այստեղ չես եղել. ճանաչո՞ւմ ես իմ զարմուհի Միջ Հարվին: *(նստում է գահավորակին):*
- Միջ.- *(մոտենալով գրասեղանին):* Այո՛, մենք հանդիպել ենք անցյալ տարի: *(Ձեռքի պայուսակը դնում է գրասեղանի վրա:)*

Հենրիեթան մոտենում է բուխարիկին և սիգարեթ վերցնելով այնտեղ դրված արկղի միջից՝ վառում է սեղանի վառիչով:

- Գերդա.- *(շրջվելով ու մոտենալով Ջոնին՝ Ա):* Ջոն, տե՛ս, թե Հենրիեթան ինչ է տվել ինձ: *(Արձանիկը տալիս է Ջոնին:)*
- Ջոն.- *(Հենրիեթային):* Ինչո՞ւ... Ինչ՞ը պատճառ դարձավ այս բանն անելու:
- Գերդա.- Ա՛հ, Ջոն, դա շատ գեղեցիկ է:
- Ջոն.- *(գնալով Ձ՝ ցած. շրջվելով ու դեմ առ դեմ կանգնելով Հենրիեթայի առջև:)* Իսկապե՞ս, Հենրիեթա՛ :
- Սեր Հենրի.- *(նրբանկատորեն միջամտելով):* Միսի՛ս Քրիսթո, ձեզ պիտի պատմեմ մեր վերջին հրատապ նորության մասին: Դուք երևի գիտեք արահետի ծայրի կոտեջը. վերջերս դա վարձել է մի նշանավոր դերասանուհի ու տեղացիները ուղղակի խեղում են նրան:
- Գերդա.- Օ՛հ, այո... իհարկե, որ կխեղեն...
- Միջ.- Նա շա՛տ պճնված է:
- Սըր Հենրի.- Անձամբ դեռ նրան չեմ տեսել, թեև վստահ եմ նա հայտնի և կոչում ունեցող դերասան է: Ի՞նչ է նրա անունը:
- Միջ.- Հեղի Լամա՛ր:
- Սըր Հենրի.- Չե՛, այն աղջիկը, որի մազերը թափված են աչքերի վրա:
- Միջ.- Վերոնիկա Լեյք:
- Սըր Հենրի.- Ո՛չ:
- Միջ.- Լորեն Բաքալլ:
- Սեր Հենրի.- Ո՛չ:
- Լեդի Անգրթեյ.- Նազիմովա... չէ. ավելի լավ է հարցնենք Գաջընից, նա կիմանա:
- Սըր Հենրի.- Հիշո՞ւմ ես, նրան տեսանք մի ֆիլմում՝ կոպիտ մի տղա ավազակի դերում, որ հետո թոչում են Խաղաղ օվկիանոս ու նորից ետ են գալիս: Մի առանձնա-հատուկ սարսափելի երեխա էլ կար...
- Միջ.- «Սան-Ֆրանցիսկոյի պատմությունը»:
- Սըր Հենրի.- Այո՛ :
- Միջ.- Վերոնիկա Քրեյ:

արձանիկը ցած է ընկնում Ջոնի ձեռքից: Գերդան ճչալով մոտ է վազում՝ Ձ ու վերցնում արձանիկը: Այն չի կոտրվել:

- Հենրիեթա.- Ջոն... *(Նայում է նրան սևեռուն, հետաքրքրությամբ):*
- Գերդա.- {Օ՛, Ջոն, արձանիկս...
- Ջոն.- *(միասին):* {Ցավում եմ...
- Սըր Հենրի.- {Հենց ինքն է. խարտյաշ, մի քիչ անհարթ ձայնով:
- Լեդի Անգրթեյ.- *(եյնելով ու մոտենալով Գերդային՝ Ձ):* Կուզեի՞ր սենյակդ տեսնել, Գերդա՛ :
- Գերդա.- Օ՛հ... Այո՛, թերևս ավելի լավ է գնամ պայուսակները բացեմ:
- Լեդի Անգրթեյ.- *(Գերդայի առջևից անցնելով դեպի դուռը՝ Ձ:)* Միմընդր բացած կլինի, բայց գուցե ցանկանում ես վերև բարձրանալ...
- Միջ.- *(անցնելով՝ Ձ):* Ես էլ քեզ հետ կգամ: Լյուսի՛, ո՞ր սենյակն ես հատկացրել ինձ, կապո՞ւյտը:
- Լեդի Անգրթեյ.- Այո՛, իսկ Էդուարդին տեղավորել եմ Հերմիթում ու մյուսներին տեղավորել եմ...

դուրս գալով՝ Ձ, ձայնը աստիճանաբար մարում է: Գերդան ու Միջը հետևում են նրան: Ջոնը կանգնած է՝ ապշած:

Սըր Հենրի.- Էդուարդն ո՞ւր է. հուսով եմ մեքենան չի պահել դուրսը: Վերջին գարածը դատարկ է:

դուրս է գալիս կենտրոնի խորքից՝ ձախ: Հենրիեթան մոտենում է Ջոնին և իր սիգարեթը տալիս է նրան: Հիմա, երբ նրանք մենակ են՝ Հենրիեթայի ձայնը մտերմիկ է հնչում:

Հենրիեթա.- Բա՞ն է պատահել, սիրելի՛ս:
Ջոն.- *(մոտենալով գահավորակին):* Ես... ես մտածում էի... մտաբերում էի... ներիր:
(Նստում է գահավորակի ձախ եզրին ու նայում Ա:)

Հենրիեթա.- *(հենվելով բուխարիկին):* Այստեղ մթնոլորտը հազեցած է Էյնզուիքի հիշողություններով: *(Շրջվում է ու նայում բուխարիկի վերը կախված նկարին):* Ես էլ հուշերիս մեջ էի:

Ջոն.- Իսկապե՞ս: *(Անտարբեր:)* Ի՞նչ էիք հիշում:
Հենրիեթա.- *(շրջվելով՝ հեզնական):* Այն ժամանակները, երբ երկար սրունքներով, նիհար, անխնամ մազերով մի աղջիկ էի... Անհոգ մի աղջիկ, որ չգիտեր կյանքը ինչ է իր գլխին բերելու: *(Շրջվում է ու նայում կրակին):* Վերհիշել անցյալը...

Ջոն.- *(երազկոտ):* Ինչո՞ւ մարդ հանկարծ վերհիշում է անցյալը... Ինչո՞ւ հանկարծ մարդու մտքում հառնում են այնպիսի բաներ, որոնց մասին տարիներ անգամ չի մտածել...

Հենրիեթա.- *(շրջվելով):* Ի՞նչ բաներ, Ջոն:
Ջոն.- *(երազկոտ):* Կապույտ ծով... միմոզայի բուրմունք...

Հենրիեթա.- Ե՞րբ:

Ջոն.- Տասը տարի առաջ:

Հենրիեթա.- *(մոտենալով գահավորակին՝ Ձ):* Եվ դու ուզում ես... ե՞տ վերադառնալ:

Ջոն.- Զգիտեմ, ես շատ հոգնած եմ...

Հենտիեթան ձեռքը հետևից դնում է Ջոնի ուսին:

(Վերցնում է նրա ձեռքը իր ակի մեջ, բայց դեռևս երազկոտ մի կետի նայելով:) Ի՞նչ կանեի ես առանց քեզ...

Հենրիեթա.- Ենթադրում եմ՝ ամեն ինչ լավ կընթանար:

Ջոն.- Ինչո՞ւ վաղուց պատահած դեպքերը նորից մարմնավորվում են մարդու գիտակցության մեջ: Դեպքեր, որոնք կատարվել են, ավարտվել:

Հենրիեթա.- *(գահավորակի հետևից անցնելով աջ):* Գուցե որովհետև՝ լիովին չեն կատարվել ու ավարտվել:

Ջոն.- Նույնիսկ տաս տարուց հետո՞: Աստված գիտի, նախկինում մեկ էլ երբ եմ հիշել այդ մասին: Բայց վերջերս դրանք ցցվում են աչքիս առաջ մինչև անգամ հիվանդներին շրջայցի գնալիս, և այնքան պայծառ, որ ասես նկար լինեն...
(Մի պահ լռում է. ասպա հանկարծ՝ խանդավառված:) Եվ գլխավոր ըր, այդ բոլորից հետո, նա այժմ այստեղ է, քանի յարդ այստեղից հեռու...

Հենրիեթա.- *(մոտենալով գահավորակի եզրին՝ աջ):* Դու նկա՞տի ունես Վերոնիկա Քրեյնին:

Ջոն.- Այո՛, տասը տարի առաջ ես նշանված էի նրա հետ:

Հենտիտա.- *(նստելով գահավորակի աջ եզրին):* Այդպե՛ս...
Ձոն.- Անխելք երիտասարդ ... Խենթանում էի նրա համար: Իսկ նա նոր էր սկսել այդ օրերին նկարահանվել: Ես արդեն ավարտել էի մեկ տարի առաջ և մեծ շանսեր ունեի աշխատելու Ռեյդլիի, ճանաչո՞ւմ ես, ուղեղի թաղանթի մասնագետ՝ պրոֆեսոր Ռեյդլիի ձեռքի տակ:

Հենրիեթա.- Իսկ ի՞նչ պատահեց:
Ձոն.- Այն, ինչ կանխատեսում էի. Վերոնիկային բախտ վիճակվեց մուտք գործել Հոլիվուդ: Բնականաբար, նա չհրաժարվեց ընձեռված հնարավորությունից: Բայց առանց դուզն ինչ կասկածելու նա համոզված էր, որ ես կթողնեմ ամեն բան ու կգնամ իր հետևից: *(Քսիծաղում է:)* Նա գաղափար անգամ չունեի, թե ես որքան եմ կարևորում իմ մասնագիտությունը: Հիշում եմ նրա ասածը. «Օ՛հ, դու բացարձակապես կարիք չունես շարունակելու բժշկությունը: Ես շատ դրամ կվաստակեմ»: *(Ձեռքի սիգարետը տալիս է Հենրիեթային:)* Ես փորձեցի բացատրել նրան ամեն բան, որ դա անկրկնելի հնարավորություն էր Ռեյդլիի ձեռքի տակ աշխատելը: Գիտե՞ս, թե ինչ պատասխանեց՝ «Ի՞նչ, այդ ծիծաղելի, փոքր ծերո՞ւկը»... Ես նրան բացատրեցի, որ այդ ծիծաղելի, փոքր ծերուկը կատարել է մեր օրերի ամենանշանակալից փորձերը, որոնք մեծ հեղաշրջում կմտցնեն Ռիզի հիվանդության բուժման մեջ: Իհարկե, դա միայն ժամանակի վատնում էր, որովհետև նա նույնիսկ չէր լսել Ռիզի հիվանդության մասին:

Հենրիեթա.- Ծատերը չեն լսել: Ես էլ չգիտեի մինչև քո ասելը, հետո կարդացի այդ մասին:

Ձոնը բարձրանում է տեղից, գնում է պատշգամբ՝ Կ. կանգնած նայելով՝ Ձ:

Ձոն.- Նա ասաց, թե՛ ով հավես ունի գլուխ դնելու մի շարք խրթին հիվանդությունների հետ. Կալիֆոռնիայի կլիման հրաշալի է, և թե՛ դա մեծ հաճույք կլինի ինձ համար աշխարհ տեսնելը: Քրեյը չէր ուզում գնալ առանց ինձ, որովհետև եզոխտ էր ու մտածում էր միայն ինքն իր մասին:

Հենրիեթա.- Դու էլ պակաս եսամուրը չես, Ձո՛ն:

Ձոն.- *(շրջվելով՝ դեպի Հենրիեթան):* Ես ընկալում էի նրա տեսակետը, ինչո՞ւ նա չպիտի կարողանար հասկանալ իմը:

Հենրիեթա.- Դու ի՞նչ առաջարկեցիր:
Ձոն.- *(մոտենալով գահավորակին ու հետևից հենվելով թիկնակին):* Ես նրան ասացի, որ սիրում եմ իրեն: Ես աղաչեցի նրան՝ մի կողմ թողնել Հոլիվուդից ստացված առաջարկը և ամուսնանալ ինձ հետ:

Հենրիեթա.- Նա ի՞նչ ասաց:

Ձոն.- *(դառնացած):* Նա միայն... հեզնեց:

Հենրիեթա.- Հետո՞:

Ձոն.- *(շարժվելով ցած՝ Ս):* Դե՛, միայն մեկ բան էր մնացել անելու՝ խզել կապը: Այդպես էլ վարվեցի: Դա հեշտ չէր: Եվ այս ամենը կատարվեց, երբ մենք Ֆրանսիայի հարավում էինք: *(Մոտենում է կլոր սեղանին, վերցնում է մի պարբերական, հետո գնում ու կանգնում է, բազկաթոռի՝ ԿՁ ետևը:)* Ես խզեցի իմ կապը Վերոնիկայի հետ ու վերադարձա Լոնդոն՝ աշխատելու Ռեյդլիի ձեռքի տակ: *(Հետևյալ խոսակցության ընթացքում, նա մերթ ընդ մերթ հպանցիկ աչքի է անցկացնում պարբերականը:)*

Հենտիտա.- Այդ բանից հետո՞ դու ամուսնացար Գերդայի հետ:

- Ջոն.- Հաջորդ տարին: Այո՛ :
- Հենրիեթա.- Ինչո՞ւ:
- Ջոն.- Ի՞նչու:
- Հենրիեթա.- Այո՛ : Քեզ դրան չմղե՞ց Վերոնիկա Քրեյից միանգամայն տարբեր մեկին գտնելու գաղափարը:
- Ջոն.- Այո՛, թերևս: *(Նստում է բազկաթոռին՝ ԿԶ:)* Ես չէի ձգտում ճշացող գեղեցկությամբ օժտված մի կնոջ: Չէի ցանկանում գրողի տարած էսապաշտի մեկին՝ ամեն բան միմիայն իր համար պահանջող: Ցանկանում էի հանգստություն, խաղաղություն ու զոհաբերություն, կյանքի խնդիրներին սառնասրտորեն դիմակայելու ունակություն: Տենչում էի մեկին, որ գլխիս չփաթաթեր իր կարծիքները:
- Հենրիեթա.- Դե՛, երևի թե հասար նպատակիդ: Ոչ ոք չէր կարող Գերդայի նման նվիրվել քեզ:
- Ջոն.- Դա սարկազմ է: Ես ամուսանացա Գերդայի հետ՝ հանուն իր այդ արժանիքների, բայց հիմա ժամանակիս կեսը տրամադրում եմ դրանք չեզոքացնելու համար: Ո՞նց իմանայի, թե ինչ է նշանակում ծայրահեղ նվիրվածությունը:
- Հենրիեթա.- *(վեր է կենում ու սիգարեթը սեղմում կլոր սեղանի մոխրամանի մեջ):* Իսկ Գերդա՞ն, նա բավարարվա՞ծ է...
- Ջոն.- Օ՛հ, Գերդա՛ն. լավ է, նա շատ երջանիկ է:
- Հենրիեթա.- Իրո՞ք:
- Ջոն.- Օ՛հ, այո՛: Նա իր կյանքը նվիրել է տանն ու երեխաներին: Դա այն ամենն է, ինչի մասին մտածում է: Նա ամենաանհաջողակ տանտիրուհին ու ամենաանճարակ մայրն է, որ կարող էս պատկերացնել: Եվ դա պահում է նրան միշտ զբաղված վիճակում:
- Հենրիեթա.- *(անցնելով Ջոնի Ա կողմը):* Ինչքան դաժան արարած էս դու, Ջո՛ն:
- Ջոն.- *(զարմացած):* Ե՛ս:
- Հենրիեթա.- Դու երբևէ զգո՞ւմ կամ ընկալո՞ւմ ես որևէ այլ բան, բացի քո սեփական հայացքներից: Ինչո՞ւ ես հանգստյան օրերին Գերդային բերում այստեղ, երբ գիտես, որ դա նրան վշտացնում է:
- Ջոն.- Անհեթեթություն... Նա շրջագայություններից աշխարհի չափ հաճույք է ստանում, կտրվում է առօրյա հոգսերից:
- Հենրիեթա.- Երբեմն, Ջո՛ն, իսկապես ստում եմ քեզ...
- Ջոն.- *(ցնցված):* Հենրիեթա՛... *(Բարձրանում է տեղից:)* Սիրելի՛ս, ի՞նչ ես ասում: Ինքդ էլ գիտես, որ միայն դու ես կյանքը տանելի դարձնում ինձ համար:
- Հենրիեթա.- Չեմ հավատում: *(Ձեռքը երկարում է նրան շոյելու համար, բայց զսպում է իրեն):*

Ջոնը համբուրում է նրան, ապա մոտենալով՝ պարբերականը դնում կլոր սեղանի վրա:

- Ջոն.- Ո՞վ է Էդուարդ Անգրթելը:
- Հենրիեթա.- Իմ զարմիկի որդին, նաև՝ Հենրիի:
- Ջոն.- Հանդիպե՞լ եմ նրան:
- Հենրիեթա.- Երկու անգամ:
- Ջոն.- Չեմ հիշում: *(Իրեն գցում է զահավորակի ձախ թիկնակին:)* Նա սիրահարվա՞ծ է քեզ, Հենրիեթա՛:
- Հենրիեթա.- Այո՛:

Ջոն.- Դե՛, քայլերիդ մեջ զգույշ եղիր. ինքդ էլ գիտես՝ դու իմն ես...

Հենրիեթան լուռ նայում է նրան

Հենրիեթա.- Լսի՛ր, ինչպե՛ս ես բացատրում Գերդայի տեսքով այդ անհետեթ արձանիկը ստեղծելու միտքդ. դա միթե ցա՞ծը չէ քո մակարդակից:

Ջոն.- Տեխնիկապես բավականին հաջող գործ է, պատրաստված իրական դիմագծերի վրայից: Գերդայի դուրը եկավ:

Հենրիեթա.- Օ՛հ, Գերդան...

Ջոն.- Դա արել եմ նրան հաճույք պատճառելու համար:

Հենրիեթա.- Գերդան չի տարբերում իսկական արվեստի գործը գունավորված լուսանկարից: Ի՞նչ կասես Միջազգային Խմբակցության պատվերով տանձենու փայտից կերտված ֆիգուրի մասին: Ավարտել ե՞ս:

Ջոն.- Այո՛:

Հենրիեթա.- Արի, նայենք:

Հենրիեթան չկամորեն մտնում է խորշ, բացում է վարագույրը, միացնում է հոսանքը, կանգնում է կամարի Ձ կողմը և սպասողական հայացքը հառում Ջոնի դեմքին: Ջոնը մոտենում է խորշին ու կանգնելով կամարի կենտրոնում, նայում է՝ Ձ:

Կասեմ, վատ չի: Բայց ինչո՞ւ, գրողը տանի... (Ձայրացած:) Ուրեմն սրա՞ պատճառով ես ուզել Գերդան դիրք բռնի քեզ համար: Ինչպե՞ս ես համարձակվել...

Հենրիեթա.- (մտածկոտ): Չարմանում եմ՝ ո՞նց գլխի ընկար:

Ջոն.- Գլխի ընկա՞: Իհարկե, գլխի ընկա:

Հենրիեթա.- Դեմքը Գերդայինը չէ:

Ջոն.- Ո՛չ, բայց պարանոցը... ուսերը... ընդհանուր տպավորությունը...

օրը սկսում է աստիճանաբար մթնել՝ շարունակվելով մինչև արարի վերջը:

Հենրիեթա.- Այո՛, ես դա էի ցանկանում:

Ջոն.- Ինչպե՞ս կարողացար, դա անարդարացի է:

Հենրիեթա.- Դու չես հասկանում, Ջո՛ն... Դու չգիտես ինչ է նշանակում տենչալ, սպասել օր օրի... Պարանոցի այդ գիծը... մկանը... գլխի անկյունային դիրքը... կզակի տակի ծանրությունը... Ամեն անգամ Գերդային նայելիս տեսնում էի այն, ինչ ուզում էի, ստիպված էի ունենալ...

Ջոն.- Ծայրահեղ անազնվություն...

Հենրիեթա.- Այո՛ ... Ըստ իս, միայն դու կարող ես այդպես արտահայտվել:

Ջոն.- (անհանգիստ): Դու ստեղծել ես ահավոր մի բան, Հենրիեթա՛: Նա նայում է ո՞ւմ... նրա առջև ո՞վ կա...

Հենրիեթա.- Չգիտեմ, Ջո՛ն: Կարծում եմ... հենց դու...

ներս է մտնում Էդուարդը հագած ընթրիքին վայել զգեստ:

Հիշո՞ւմ ես Էդուարդին, Ջո՛ն:

Ջոն.- (սառը): Իհարկե:

- Էդուարդ.- *(մտտենալով բազկաթոռին՝ ԿԶ):* Դուք դիտում էիք Հենրիեթայի վերջին գլուխգործոցը:
- Ջոն.- *(առանց Էդուարդին նայելու):* Այո՛: *(Մտտենում է բուխարիկին:)* Այո՛, դիտում էի:
- Էդուարդ.- Ի՞նչ կարծիքի եք դրա մասին:
- Ջոն.- *(մեջքով՝ Էդուարդին):* Ես մասնագիտացած չեմ՝ այդ մասին կարծիք հայտնելու: *(մի սիգարետ է հանում իր տուփից:)*
- Էդուարդ.- Ուժեղ է:
- Ջոն.- Ը՞մ...
- Էդուարդ.- Ասացի՛ ուժեղ է:
- Ջոն.- Այո՛:
- Հենրիեթա.- *(անջատելով հոսանքը և ծածկելով խորշի վարագույրը:)* Ես պետք է գնամ՝ փոխվեմ:
- Էդուարդ.- Դեռ շատ ժամանակ կա: *(Մտտենալով խմիչքի սեղանին:)* Կարո՞ղ եմ ձեզ խմիչք առաջարկել, Քրիսթո՛:
- Ջոն.- Ո՛չ, շնորհակալ եմ: *(Միգարետի ծայրով խփում է տուփին:)*
- Էդուարդ.- *(գնալով դեպի ֆրանսիական պատուհանը՝ Ա):* Հաճելի երեկո է:

նայում է Հենրիեթային ու Ջոնին, ապա դուրս է գալիս՝ Ա:

- Հենրիեթա.- *(շարժվելով կենտրոն):* Դու շատ կոպիտ էիր, Ջոն՛:
- Ջոն.- *(շրջվելով):* Ես ժամանակ չունեմ այդ տեսակի անձնավորության համար:
- Հենրիեթա.- Էդուարդը սիրելի է:
- Ջոն.- Երևի: *(Վառում է սիգարետը:)* Իմ դուրս չի գալիս՝ ըստ իս, ազդեցիկ մեկը չէ:
- Հենրիեթա.- Գիտե՞ս, Ջոն՛, երբեմն մտահոգվում եմ քեզ համար:
- Ջոն.- Մտահո՞գ, ի՞նչ համար: Ի՞նչ ես ուզում ասել:
- Հենրիեթա.- Վտանգավոր է լինել այդչափ անտարբեր, որքան դու ես:
- Ջոն.- Անտարբե՛ր:
- Հենրիեթա.- Դու երբևէ չես ընկալում կամ գիտակցում, թե մարդիկ ինչպես են տրամադրված քո նկատմամբ:
- Ջոն.- Կասեի՛ հակառակն է:
- Հենրիեթա.- Դու միայն ընկալում ես այն, ինչը տեսնում ես, այո՛: Դու նման ես... մի լուսարձակի, որի հզոր լծակը այն ուղղում է լոկ քո շահագրգռության կենտրոնում գտնվող կետի վրա, և դրանից դուրս բոլորը մնում են մթության մեջ:
- Ջոն.- Հենրիեթա՛, սիրելիս, ի՞նչ է նշանակում այս բոլորը:
- Հենրիեթա.- Ասում եմ քեզ՝ վտանգավոր է: Դու համոզված ես, որ նրանք բոլորը համակրում են քեզ՝ *(մտտենում է Ջոնին՝ աջ.)* Լյուսին ու Գերդան, Հենրին, Միջո՛ն ու Էդուարդը:

Ջոնը սիգարետը դնում է բուխարիկի մոխրամանի մեջ:

- Ջոն.- Տեղյա՞կ ես, ի վերջո, թե նրանք ինչպես են տրամադրված քո հանդեպ:
- Հենրիեթա.- *(ժպտալով):* Իսկ Հենրիեթա՞ն... նա ի՞նչ է զգում... Քո խնդրում, *(քոնում է Հենրիեթայի ձեռքերն ու նրան քաշում իր կողմը,)* առնվազը, կասկած չունեմ:
- Հենրիեթա.- Դու չես կարող, Ջոն՛, այս աշխարհում վստահել ոչ ոքի:

Ջոնը համբուրում է նրան. Հենրիեթան ենթարկվում է ակամա: Ջոնը բաց է թողնում նրան, ժպտում է, շրջվում, վերցնում է սիգարեթն ու մոտենում դռան՝ Ձ: Էդուարդը ներս է մտնում՝ Ա: Ջոնը նայում է նրան ցինիկ հայացքով ու դուրս գալիս՝ Ձ:

(Շրջվում է դեպի Էդուարդը): Ինձ խմիչք տուր, Էդուա՛րդ, խնդրում եմ, նախքան այն, որ գնամ: *(Շրջվում է, նայում բուխարիկի վրա դրված հայելու մեջ ու թաշկինակով շտկում շրթներկը:)*

Էդուարդ.- *(մոտենալով խմիչքի սեղանին)* Շերրի՞:

Հենրիեթա.- Խնդրեմ:

Էդուարդ.- *(երկու շերրի է պատրաստում):* Կուզեի, ավելի հաճախ գայիր Էյնզուիք, Հենրիեթա՛, վաղուց չես եկել:

Հենրիեթա.- Գիտեմ, բայց թաղված էի գործերիս մեջ:

Էդուարդ.- Դա՞ է բուն պատճառը:

Հենրիեթա.- Ոչ միայն դա:

Էդուարդ.- Իսկ ուրիշ ի՞նչ, Հենրիեթա՛:

Հենրիեթա.- *(շրջվելով՝ զգացմունքային):* Դու անչափ սիրելի ես, Էդուա՛րդ, ես քեզ շատ եմ համակրում:

Էդուարդ.- *(խմիչքները ձեռքին մոտենալով Հենրիեթային՝ աս):* Ինչո՞ւ չես գալիս Էյնզուիք: *(Խմիչքներից մեկը մեկնում է նրան:)*

Հենրիեթա.- Որովհետև... մարդ չի կարող ետ վերադառնալ...

Էդուարդ.- Դու այնտեղ երջանիկ էիր, հին օրերին...

Հենրիեթա.- Երջանիկ՝ ամենալավ ձևով... երբ նույնիսկ ինքդ էլ չգիտես, որ երջանիկ ես:

Էդուարդ.- *(բարձրացնելով բաժակը):* Էյնզուիքի կենացը:

Հենրիեթա.- Էյնզուիքի կենացը:

Երկուսն էլ ծիծաղում ու խմում են:

Նո՞ւյնն է մնացել, թե փոխվել է. ամեն բան փոխվում է:

Էդուարդ.- Ես չեմ փոխվել:

Հենրիեթա.- Ո՛չ, սիրելի՛ Էդուարդ, դու միշտ նույնն ես:

Էդուարդ.- Նույն հին դանդաղկոտը:

Հենրիեթա.- *(անցնելով Էդուարդի առջևից դեպի գահավորակը):* Այդ մի՛ ասա: *(Նստում է գահավորակի ձախ եզրին:)*

Էդուարդ.- Դա ճիշտ է, որովհետև ինձ երբեք չի հաջողվում մի բան անել:

Հենրիեթա.- Կարծում եմ, գուցե դու շատ խելոք ես, որ ոչինչ չես անում:

Էդուարդ.- Տարօրինակ է, որ դու ես այդ ասում, դու, որ միշտ հաջողակ ես եղել:

Հենրիեթա.- Արձանագործությունը այն չէ, որ զբաղվես դրանով հաջողության հասնելու համար: Դա իշխում է էությանդ վրա, դարձնում է քեզ իր ստրուկը: Եվ, երբ ավարտում ես մի բան, քեզ մնում է միայն հաղորդակցվել դրա հետ ու մի պահ խաղաղվել...

Էդուարդ.- Հենրիեթա՛, ցանկանո՞ւմ ես հանգիստ լինել:

Հենրիեթա.- Երբեմն մտածում եմ, որ ամեն բանից ավելի այս աշխարհում կուզեի հանգիստ լինել:

Էդուարդ.- *(մոտենալով գահավորակին՝ Ձ):* Դա հնարավոր է Էյնզուիքում: *(Ձեռքը դնում է Հենրիեթայի ուսին:)* Կարծում եմ՝ դու կարող ես քեզ երջանիկ զգալ այնտեղ, թեկուզ... թեկուզ ստիպված լինես տանել իմ գոյությունը: *(Գնում ու նստում է*

գահավորակի աջ եզրին:) Ի՞նչ կասես, Հենրիեթա՛: Չե՞ս գա Էյնզուիք և դա դարձնես քո տունը: Դու գիտես, որ Էյնզուիքը սպասում է քեզ:

Հենրիեթա.- Երանի, Էդուարդ, այսքան չսիրեի քեզ, որպեսզի «ոչ» ասելը հեշտ լիներ:

Էդուարդ.- Ուրեմն՝ ո՞չ:

Հենրիեթա.- *(ձեռքի բաժակը դնելով կլոր սեղանի վրա):* Ցավում եմ:

Էդուարդ.- Դու ուրիշ անգամ էլ ես «ոչ» ասել, բայց այս անգամ... *(կանգնում է)* այս անգամ կարծում էի տարբեր է: Երբ միասին քայլում էինք պուրակում, դեմքդ թարմություն ու բերկրանք էր ճառագում *(մոտենալով ֆրանսիական պատուհանին՝ Ս)* նախկինի պես: Խոսում էիր Էյնզուիքի մասին, երազում էիր Էյնզուիքի մասին: Դա ինչ-որ բան նշանակում է, չե՞, Հենրիեթա՛:

Հենրիեթա.- Այդ պահին, Էդուարդ, մենք տարվել էինք անցյալի հուշերով:

Էդուարդ.- *(գնալով գահավորակի աջ կողմը):* Անցյալը երբեմն ամենալավ վայրն է... մնալու համար:

Հենրիեթա.- Մարդ չի կարող ետ վերադառնալ: Դա միակ բանն է, որ հնարավոր չէ՝ ետ բերել անցյալը:

կարճ դադար: Էդուարդը անցնում է գահավորակի վերի մասը՝ Ձ ու նայում դռան միջով՝ Ձ:

Էդուարդ.- *(մեղմ):* Իրականում քո ասածն այն է, որ չես ցանկանում ինձ հետ ամուսնանալ Ջոն Քրիսթոֆի պատճառով: *(Լռում է. հետո շրջվում է:)* Այդպես է, չե՞: Եթե աշխարհում չլիներ ոմն Ջոն Քրիսթոֆ, դու կամուսնանայիր ինձ հետ:

Հենրիեթա.- Չեմ կարող պատկերացնել աշխարհն առանց ոմն Ջոն Քրիսթոֆի գոյության...

Մըր Հենրին ներս է մտնում՝ Ձ, հագնված ըստ պատճառի. Հենրիեթան կանգնում է:

Մըր Հենրի.- *(բուխարիկին կից անջատիչով միացնում է հոսանքը. Վառվում են բոլոր լամպերը:)* Շտապի՛ր, Հենրիեթա՛, շուտով ընթրիքի ժամն է:

Հենրիեթա.- *(մոտենալով ձախ դռանը):* Հենց հիմա, կայծակի արագությամբ...

հապճեպ դուրս է գալիս՝ Ձ. Էդուարդը նստում է գահավորակի ձախ եզրին:

Մըր Հենրի.- *(մոտենալով խմիչքի սեղանին):* Խմիչք վերցրե՞լ ես, Էդուարդ: *(Միացնում է խմիչքի սեղանի լուսամտիփր:)*

Էդուարդ.- Շնորհակալ եմ, այո՛:

Մըր Հենրի.- *(կոկտեյլ պատրաստելով):* Լյուսիի հետ Հալոյում հաստատվելուց հետո քեզ վաղուց չէինք տեսել:

Էդուարդ.- Այո՛: Ինչպե՞ս է ձեզ ազդել այստեղ գալը՝ դեռ մի կողմ թողած կալվածք պահելու հոգսը:

Մըր Հենրի.- Երբեմն մտածում եմ, Էդուարդ, որ դու ամենախելացին ես մեր ընտանիքում:

Էդուարդ.- Ուրույն մոտեցում է. ես ինձ համարում եմ կյանքում ձախողած մեկի քայլող օրինակ:

Մըր Հենրի.- Օհ, ո՞չ: Հարցը վերաբերում է կյանքի էական արժեքներին. պահպանել կալվածք, զբաղվել ընթերցանությամբ ու հոգ տանել զրքերի մասին...

Միջը ներս է մտնում՝ Ձ. Հագին՝ երեկոյան շքեղ հագուստ է: Էդուարդը ոտքի է կանգնում:

... ու չխառնվել նյութական քաշքշուկներին: *(Շրջվում է ու նայում Միջին:)*
Ողջույն, դա... դա շատ սիրուն զգեստ է:

Միջ.- *(գնալով՝ ԿՁ և իր շուրջը լրիվ պտույտ կատարելով՝ ցույց է տալիս զգեստը):*
Խանութից ձեռք բերածներիցս մեկն է:

Էդուարդ.- Խանութում աշխատելը, Մի՛ջ, իսկապես քո սրտովը չէ:

Միջ.- *(մոտենալով խմիչքի սեղանին:)* Ո՞վ ասաց՝ սրտովս է: *(Վերցնում է ձիթապտուղի ամանը:)*

Էդուարդ.- *(գրավելով իր տեղը գահավորակին):* Էդ դեպքում, ինչո՞ւ ես աշխատում:

Միջ.- Առաջարկում ես ապրուստս հայթայթեմ գեղեցիկ մտքերո՞վ, հուշերո՞վ...

Էդուարդ.- *(ցնցված):* Բայց, սիրելի՛ աղջիկ, եթե ես իմանայի, որ դու նյութապես դժվար...

Մըր Հենրի.- Մոռացիր, Էդուա՛րդ, նա շատ կամակոր է: Չնայած մեր խնդրանքին՝ նա մերժեց մեր նյութական օգնությունը և չուզեց գալ ու բնակվել մեզ մոտ: Երիտասարդ առույգ Միջին մեր մեջ ունենալուց բացի, ավելի լավ բանի մասին մի՞ թե կարող էի երազել:

Էդուարդ.- Ինչո՞ւ մերժեցիր, Մի՛ջ:

Միջ.- *(մոտենալով գահավորակին՝ աջ, հետո առջև):* Մոտեցման հարց է, *(ձիթապտուղ է առաջարկում Էդուարդին),* անփող, հպարտ ու... անկաշկանդ,

Էդուարդը գլխի շարժումով մերժում է ձիթապտուղը:

դա՛ ես ինքս եմ...

ներս է մտնում Լեդի Անգրթելը՝ Ձ. հագել է երեկոյան երկար շրջագգեստ. Էդուարդը ոտքի է կանգնում:

նրանք չարչարում են ինձ, Լյուսի՛:

Լեդի Անգրթել.- *(մոտենալով բազկաթոռին՝ ԿՁ):* Իսկապե՞ս, սիրելի՛ս: *(Նստում է:)*

Էդուարդ.- Ես համաձայն չեմ այդ զգեստի խանութում աշխատելու գաղափարին:

Միջ.- *(մոտենալով Լեդի Անգրթելին):* Այդ դեպքում, ինձ համար ավելի լավ գործ գտիր: *(Ձիթապտուղ է առաջարկում Լյուսիին:)*

Լեդի Անգրթելը ձիթապտուղ է վերցնում: Միջը մոտենում է բուխարիկին ու ամանը դնում այնտեղ:

Էդուարդ.- Վստահաբար մի բան կգտնվի...

Միջ.- Հիշի՛ր, որ ես չունեմ որևէ մասնագիտություն: Ունեմ միայն լավ արտաքին ու երբ ինձ վրա գոռում են, կարողանում եմ ինձ զսպել:

Էդուարդ.- Ուզում ես ասել՝ հաճախորդները կոպտո՞ւմ են քեզ:

Միջ.- Երբեմն անտանելի չափով: *(Նստում է փուֆիկի վրա:)* Դա նրանց մենաշնորհն է:

Էդուարդ.- *(մոտենալով բուխարիկին. անհանգիստ):* Բայց, սիրելի՛ Միջ, սա ճիշտ չէ: *(Բաժակը դնում է բուխարիկի վրա:)* Եթե միայն իմանայի ...

Իր տուփից սիգարեթ է առաջարկում Միջին:

Միջ.- *(սիգարետը վերցնելով):* Ո՞նց պիտի իմանայիր, մեր աշխարհները շատ հեռու են իրարից...

Էդուարդը վառում է Միջի սիգարետը:

Ես միայն կիսով չափ եմ Անգրթել: Մյուս կեսս՝ հասարակ, աշխատավոր աղջիկ, առհասարակ անգործ, որ հակառակ հասարակագետների սիրուն խոսքերին՝ թրև է գալիս կյանքի խաչմերուկներում:

Սըր Հենրի.- *(մոտենում է Միջին՝ երկու բաժակ ձեռքին):* Լավ աղջիկ եղի՛ր և խմի՛ր սա: *(Բաժակներից մեկը տալիս է նրան:)* Ի՞նչ սատանա է դրդում քեզ՝ թարսվել, ձագո՛ւկս: *(Մյուս բաժակը մեկնում է Լեդի Անգրթելին:)*

Լեդի Անգրթել.- *(Սըր Հենրիին):* Ինձ շերրի, սիրելի՛ս:

Սըր Հենրին մոտենում է խմիչքի սեղանին:

Էդուարդն իսկապես երբեմն ազդում է...

Գերդան մուտք է գործում՝ Ձ. երեկոյան հագուստով է:

Գերդա.- *(մոտենալով Լեդի Անգրթելի Ա կողմին):* Շատ եմ ցավում, եթե ուշացել եմ:

Լեդի Անգրթել.- *(բռնելով Գերդայի ձեռքը):* Բայց դու բոլորովին չես ուշացել, սիրելի՛ս:

Միջ.- Մենք հենց նոր ցած իջանք:

Սըր Հենրի.- Ի՞նչ կցանկանայիք, Միսիս Քրիսթոն՝ շերրի՞, ջի՞ն:

Ջոնը ներս է մտնում՝ Ձ պաշտոնական հագուստով:

Գերդա.- *(մոտենալով խմիչքի սեղանին՝ Ձ):* Օհ, շնորհակալ եմ. ջին որևէ բանով, խնդրում եմ:

Ջոն.- Ե՛ս եմ վերջինը: *(Գնում է ցած՝ Ա:)*

Լեդի Անգրթել.- Հենրիեթան դեռ չի եկել:

Սըր Հենրին մոտենում է Լեդի Անգրթելին ու տալիս նրան ձեռքի բաժակը. ապա վերադառնում է խմիչքի սեղանի մոտ ու խմիչք է պատրաստում Գերդայի համար: Խառը խոսակցություն է ընթանում:

Էդուարդ.- Այո՛, սա խանութից վերցրածն է, մի՞թե չասացիր, Միջ:

Գերդա.- *(շարժվելով՝ Ա):* Սա լավն է:

Լեդի Անգրթել.- Վերցրա՞ծը: Այսինքն վերցրել ես ոչնչի դիմա՞ց: Հենրի՛, սիրելիս, գիտե՞ս, այս մանկիկը վերցրել է...

Ջոն.- Դա անմիջապես կազդի եթե զգույշ չլինես:

Վերոնիկա Քրեյը ներս է մտնում Կ պատշգառից՝ Ձ և արտիստիկ ժեստով կանգնում է ֆրանսիական պատուհանների առջև: Անչափ գրավիչ կին է տեղյակ իր գեղեցիկ լինելուն: Հագել է շքեղ, փայլուն գիշերային շրջագգեստ, ձեռքին՝ գիշերային փոքրիկ պայուսակ: Նրա հայտնվելը զգայնացույց տպավորություն է թողնում ներկաների վրա: Ջոնը անքթիթ նայում է նրան հմայվածի պես: Միջն ու Լեդի Ան-

գրթելը բարձրանում են տեղից: Բուրբը շրջվում են ու ակնդետ նայում Վերոնիկային:

Վերոնիկա.- *(մոտենալով Լեդի Անգրթելին՝ Ա):* Կներեք ինձ ներխուժմանս համար: Ես ձեր հարևանն եմ, Լեդի՝ Անգրթել, այն խղճուկ խրճիթից՝ Դավթոթօգից... Եվ պատահեց մի սուկալի բան. *(շարժվում է Կ՝ իջխելով բեմին.)* տանը մեկ հատիկ լուցկի չկար և վառիչս էլ փչացել էր: Ուրեմն՝ ի՞նչ կարող էի անել. եկա մոտիկ հարևանիս օգնությունը հայցելու:

Լեդի Անգրթել.- Ինչու ոչ... իհարկե: Որքան դժվար է եղել ձեզ համար:
Վերոնիկա.- *(շրջվելով աջ ու միանգամայն պատահաբար տեսնելով Ջոնին):* Չէ՞ որ... սա վատահ Ջոնն է... Ջոն Քրիսթոն: *(Մոտենում է Ջոնին՝ Ձ և նրա երկու ձեռքն առնում է իր ափերի մեջ:)* Իսկապես շժմեցուցիչ է: Երկար, շատ երկար, երկար տարիներ քեզ չտեսնելուց հետո, հանկարծ... քեզ տեսնում եմ այստեղ... Ի՞նչ հաճելի անակնկալ: *(Լեդի Անգրթելին:)* Ջոնը իմ վաղեմի ընկերներից մեկն է: *(Բաց է թողնում Ջոնի ձախ ձեռքը:)* Իսկ ինչո՞ւ չասել՝ Ջոնը եղել է առաջին տղամարդը ում սիրել եմ:

Սըր Հենրի.- *(մոտենալով գահավորակին՝ երկու բաժակ ձեռքին):* Շերրի՞, թե՞ Մարտինի:
Վերոնիկա.- Ոչ, ոչ, շնորհակալ եմ:

Ջոնը շերրիի բաժակը վերցնում է Սըր Հենրիի ձեռքից:

Լեդի Անգրթել.- *(գրավելով իր տեղը բազկաթոռին՝ ԿՁ):* Մի՛ջ, սիրելի՛ս, հնչեցրու զանգը:

Միջը մոտենում է բուխարիկից ներքև ու սեղմում զանգի կոճակը:

Վերոնիկա.- Հուսով եմ վատ չմտածեք, ինձ համար շատ տհաճ է այս ձևով ներխուժելը:
Լեդի Անգրթել.- Ամեննին:
Սըր Հենրի.- *(շարժվելով՝ Կ):* Մեզ պատիվ էք արել: *(Ներկայացնելով Միջին:)* Իմ զարմուհին՝ օրիորդ Միջ Հարվի, Էդուարդ Անգրթել, *(նայում է Գերդային),* ը՛ր...

Գերդան մոտենում է Ջոնին՝ Ա:

Ջոն.- Եվ, սա իմ կինն է, Վերոնիկա՛:
Վերոնիկա.- *(անցնելով Ջոնի առջևից մոտենում է Գերդային՝ Ձ ու գրկում նրան զույգ ձեռքերով):* Ա՛հ, որքան հաճելի է հանդիպել ձեզ:

Գաջընը ներս է մտնում:

Գաջըն.- Չանգահարեցի՞ք, տիրուհի՛ս:
Լեդի Անգրթել.- Մեկ դյուժին լուցկի բերեք, Գա՛ջըն, խնդրում եմ:

Գաջընը մի պահ կարկամում՝ բայց անմիջապես վերագտնում է իր սովորական անարտահայտիչ կեցվածքն ու դուրս գալիս՝ Ձ:

Սըր Հենրի.- Իսկ ձեզ դո՞ւր է գալիս Դավթոթօգում ապրելը:

Վերոնիկա.- *(Չրջվելով):* Շա՛տ: *(Գնում է գահավորակից վեր աստիճանի վրա՝ 2 և նայում դուրս՝ Ա):* Այնքան հրաշալի է լինել ուղղակի գավառի սրտում... Անգլիայի անտառներում ու դեռ Լոնդոնին էլ մոտիկ լինել:

Սըր Հենրի.- Դուք չգիտեք, թե ինչպիսի խանդավառություն էք առաջ բերել հարևանության մեջ: Բայց դուք սովոր եք նման բաների:

Վերոնիկա.- Դե՛, մի քանի ինքնագիր տետրեր եմ ստորագրել: *(Մոտենում է գահավորակի եզրին՝ 2:)* Բայց այստեղ ինձ ավելի գրավում է այն, որ մարդ ասես գյուղում չլինի. ոչ ոք աչքերը չռած՝ քեզ չի խեղճում կամ նայում բերանը բաց: *(Նստում է գահավորակի ծայրին՝ 2:)* Ես անչափ գնահատում եմ այս վայրի խաղաղությունը:

Գաջընը ներս է մտնում՝ 2: Ձեռքին մատուցարան կա, վրան՝ մեկ դյուժին լուցկի:

Լեդի Անգրթել.- *(մատնանշելով Վերոնիկային):* Մաղամի համար:

Գաջընը մոտենում է Վերոնիկային:

Վերոնիկա.- *(վերցնելով լուցկիները):* Օ՛հ, թանկագին Լեդի Անգրթել, իսկապես, չեմ կարող ընդունել...

Լեդի Անգրթել.- Խնդրեմ, կարևոր չէ:

Վերոնիկա.- Լավ, շնորհակալ եմ ձեր բարության համար:

Գաջընը դուրս է գալիս՝ 2:

Ջո՛ն, դո՛ւ էլ ես այստեղ հարևանության մեջ բնակվում:

Ջոն.- Ո՛չ... Ոչ. Ես ապրում եմ Լոնդոնում: Այստեղ եմ միայն հանգստյան օրերին:

Վերոնիկա.- Ա՛հ, չեմ կարողանում վերագտնել ինձ՝ երկար տարիներից հետո կրկին քեզ հանդիպելու անակնկալից:

Հենրիեթան ներս է մտնում՝ 2 և մոտենում Լեդի Անգրթելին՝ 2: Հագել է գիշերային զգեստ:

(փութանցիկ նայում է Հենրիեթային, ապա կանգնում): Այժմ, պետք է վերադառնամ ինձ հետ տանելով ավարս... Ջո՛ն, կուղեկցե՞ս ինձ մինչև արահետի ծայրը:

Լեդի Անգրթելը ընդոստ ոտքի է կանգնում:

Ջոն.- Այո՛, իհարկե:

Վերոնիկա.- *(անցնելով Լեդի Անգրթելի Ա կողմը):* Հազար անգամ շնորհակալ եմ ձեզանից: *(Ժպտում է Սըր Հենրիին ու Էդուարդին, բայց անտեսում կանանց:)* Դուք բոլորդ էլ շատ բարի գտնվեցիք:

Ջոնը մոտենում է խմիչքի սեղանին ու բաժակը դնում այնտեղ:

Լեդի Անգրթել.- Չարժե:

Վերոնիկա.- *(մոտենալով Ջոնին գահավորակի վերից):* Հիշի՛ր, Ջոն, ինձ պիտի պատմես այն բոլորը, ինչ արել ես անցնող տարիներին՝ քեզ չտեսած տարիներին:

Գաջընը ներս է մտնում՝ Ձ:

Գաջըն.- Ընթրիքը մատուցվում է, տիրուհի՛ս:

դուրս է գալիս՝ Ձ:

Վերոնիկա.- Օ՛հ, ես ձեզ չեմ անհանգստացնի, քանի որ ընթրիքը պատրաստ է:

Սըր Հենրի.- Չեի՞ք մնա ընթրելու մեզ հետ:

Վերոնիկա.- Ո՛չ, ոչ, ոչ, այդ մասին չեի կարող անգամ երազել: Ջոն՛ն, չե՞ս կարող գալ ինձ մոտ ընթրիքից հետո, ես ուղղակի մեռնում եմ քեզ լսելու ցանկությունից: Կսպասեմ քեզ: *(Բարձրանում է աստիճաններով, շրջվում է և կանգնում ֆրանսիական պատուհանների առջև՝ Կ)* Եվ անչափ շնորհակալ եմ ձեր բոլորից:

դուրս է գալիս Կ-ից՝ Ձ: Ջոնը կանգնում է՝ Ա, ֆրանսիական պատուհանների՝ Կ առջև ու նայում նրա ետևից: Լեդի Անգրթելը ձեռքի բաժակը տալիս է Էդուարդին, որը այն դնում է բուխարիկի վրա: Միջը իր բաժակը դնում է բուխարիկի վրա, մոտենում է դռան՝ Ձ և բացում այն: Ջոնը գնում է պատշգամբ:

Լեդի Անգրթել.- Ի՛նչ գեղեցիկ ներկայացում... Չգնա՞նք ներս ընթրելու: *(Մոտենում է դռանը՝ Ձ:)*

Սըր Հենրին մոտենում է դռան՝ Ձ: Միջոցում խառը խոսակցություն հետևյալ արտահայտություններով, մինչ բոլորը դուրս են գալիս:

Հիշում եմ՝ այդ աղջկան տեսել եմ մի ֆիլմում: Հազել էր մի կարճ սարի:

դուրս է գալիս՝ Ձ:

Էդուարդ.- Ես էլ եմ նրան տեսել, բայց չեմ կարողանում հիշել ֆիլմի անունը:

Միջ.- «Սան-Ֆրանցիսկոյի պատմությունը», դա էր: Կրկնվեց երկու ամիս առաջ:

դուրս է գալիս՝ Ձ:

Էդուարդ.- Ո՞ր կինոյում: Դուք տեսե՞լ եք «Սան-Ֆրանցիսկոյի պատմությունը»:

Սըր Հենրի.- Նա պետք է, որ փոխած լինի մազերի հարդարանքը: Թափել էր մեջքին: Տիկի՛ն Քրիսթո, դո՛ւք ինչ կարծիքի եք մեր կինոաստղի մասին:

Գերդան մոտենում է դռան՝ Ձ:

Գերդա.- Նա շատ սիրուն է, իսկապես շատ սիրուն է:

դուրս է գալիս՝ Ձ:

Էդուարդ.- Այո՛: Այդպես չէ՞, Հենրի՛:
Սըր Հենրի.- Այնքան էլ բարձրահասակ չէ, որքան կարծում էի՝ ֆիլմում տեսնելուց հետո:
դուրս է գալիս՝ Ձ:

Էդուարդ.- Չէ՛: Իրական կյանքում նրանք լրիվ տարբեր են, համաձայն եմ:
դուրս է գալիս՝ Ձ: Խոսակցությունը շարունակվում է բեմից դուրս: Ջոնը անհաղորդակից ամեն բանի, կանգնած է պատշգամբում ու նայում է դուրս՝ Ձ: Հենրիեթան մոտենում է դռանը՝ Ձ, և շրջվում է:

Հենրիեթա.- Չե՞ս գալիս, Ջոն՛ն:
Ջոն.- Ը...ը մ, օ՛հ, այո, այո, իհարկե:
Հենրիեթան դուրս է գալիս՝ Ձ: Ջոնը մոտենում է դռան՝ Ձ ու հետևում է Հենրիեթային, մինչ՝

Իջնում է վարագույրը

Արար Երկրորդ

Տեսիլ Ա

Բեմը նույն տեսարանն է. շաբաթ առավոտ:

Երբ բացվում է վարագույրը, ախորժալուր առավոտ է: Ժամացույցը զարկում է տասնմեկ անգամ: Բաց են ֆրանսիական պատուհաններն ու ռադիոընդունիչից լսվում է մեղմ երաժշտություն: Սփռվում է «Արտասվեցի քեզ համար» մեղեդին: Ջոնը ներս է մտնում՝ Ձ, առույգ: Երգում է քթի տակ, ուրախ ու տրամադիր է: Շարժվում է ՁԿ և ձեռքի ժամացույցը ստուգում է բուխարիկի վրա դրված ժամացույցի հետ: Ապա գնում է պատշգամբ՝ Կ, մի սիգարետ է հանում իր ծխախոտատուփից ու վառում: Գաջընը ներս է մտնում՝ Ձ: Ձեռքին մատուցարան կա, վրան՝ մի գրություն:

- Գաջըն.- *(անցնելով՝ ՁԿ):* Ձեզ համար՝ մի երկտող կա, Սըր:
Ջոն.- *(մտտենալով Գաջընին՝ Ա. զարմացած)* Ի՞նձ համար: *(Վերցնում է երկտողը:)*
Գաջըն.- Նրանք պատասխանի են սպասում, սը՛ր:
Ջոն.- Ինչպես երևում է օրը բարի է, Գաջը՛ն:
Գաջըն.- Այո՛, սը՛ր: Առավոտյան կանուխ ներքևը պատել էր թեթև մշուշով:

Ջոնը կարդում է երկտողը և բարկացած՝ խոժոռվում:

- Ջոն.- Ոչ մի պատասխան չի լինելու, Գա՛ջըն:
Գաջըն.- *(շրջվելով ու դեպի դուռը գնալով՝ Ձ):* Լսում եմ, սը՛ր:
Ջոն.- Ո՛ւր են մյուսները:
Գաջըն.- *(կանգնելով ու շրջվելով):* Նորին ազնվափայլությունը գնացել է ազարակ, սը՛ր: Պարոնները գնացել են հրաձգության, կարծում եմ Միս Հարվին ու Հեն-րիեթան պարտեզում են:
Ջոն.- Շնորհակալ եմ, Գաջը՛ն:

Գաջընը դուրս է գնում՝ Ձ: Ջոնը անցնում է պատշգամբ Կ., նորից կարդում է երկտողն ու զայրացած թառանչում, ճմրթում է այն ու դնում գրպանը: Միջը ներս է մտնում՝ Ա՝ ձեռքին գեորգենիների ու տերևների մի փունջ:

- Միջ.- *(մտտենալով կլոր սեղանին՝ Ձ):* Բարի լույս: *(Օնկում է, կլոր սեղանի վրայից վերցնում է ծաղկամանը և սկսում լցնել գեորգենիներով:)*
Ջոն.- Բարի լույս:
Միջ.- Գերդան դեռ ցած չի՞ իջել:
Ջոն.- Ո՛չ, նա նախաճաշն ընդունեց անկողնու մեջ: Գլխացավ ուներ. իրեն ասացի, որ քիչ էլ պառկած մնա:
Միջ.- Ես էլ էի որոշել ողջ առավոտը անցկացնել անկողնու մեջ, բայց դուրսն այն-քան հրաշալի էր, որ չկարողացա:
Ջոն.- Հենրիեթան ո՞ւր է:
Միջ.- Զգիտեմ, քիչ առաջ ինձ հետ էր: Երևի վարդերի պարտեզում է:

Ջոնը դուրս է գալիս Կ-ից՝ Ա: Լեդի Անգրթերը ներս է մտնում՝ Ձ: Ձեռքին կրում է ձվերով լի մի զամբյուղ:

Լեդի Անգրթել.- Էլի երաժշտությո՞ւն: *(Մոտենում է ռադիոընդունիչին:)* Օհ, ո՛չ, սիրելի՛ս, ոչ ոչ: *(Անջատում է ռադիոընդունիչը:)* Բավական է, չենք կարող վաղ առավոտից ճոճվել նվագով:

Միջ.- Կուգեի, դու դասավորեիր գեորգենիները, Լյուսի՛, դրանք ինձ չեն ենթարկվում:

Լեդի Անգրթել.- *(մոտենալով խմիչքի սեղանին):* Չե՞ն ենթարկվում, սիրելի՛ս, *(գամբյուղը դնում է հատակին՝ խմիչքի սեղանի Ձ կողմը.)* ամոթ իրենց, կարևոր չէ: *(Մտախոհ մոտենում է գրասեղանին:)* Ի՞նչ էի ուզում հիմա. հա՛, հիշեցի: *(Վերցնում է ընկալուչը:)* Թող տեսնեմ, այ, այսպես... *(Ճոճում է ընկալուչը նախ մի ձեռքով, հետո մյուսով:)*

Միջը շջմած նայում է Լեդի Անգրթելին:

(բավարարված): Այ, հիմա հասկացա բանն ինչ է: *(Ընկալուչը դնում է տեղը):*

Միջ.- Այդ ի՞նչ ես անում, Լյուսի՛:

Լեդի Անգրթել.- Ի՞նչ եմ անում:

Միջ.- Ինձ թվաց՝ ինչ-որ խաղում էիր ընկալուչի հետ:

Լեդի Անգրթել.- Օ՛հ, դա... Միսիս Բեզաուի երեխան... *(Նայում է Միջին):* Միսալ ծաղկաման ես ընտրել, սիրելի՛ս:

Միջ.- *(կանգնելով):* Ի՞նչ ասացիր:

Լեդի Անգրթել.- Ասացի՛ սխալ ծաղկաման ես վերցրել. գեորգիների համար սպիտակ ծաղկամանն է պետք:

Միջ.- Դա չէի հարցնում, դու նշեցիր ինչ-որ մեկի երեխայի մասին:

Լեդի Անգրթել.- Ա՛հ, այդ ընկալուչը..., սիրելի՛ս:

Միջ.- *(մոտենալով խմիչքի սեղանին):* Հիմա չեմ զարմանում, թե ինչո՞ւ Գերդա Քրիսթոն մոտ է լինում ջղային ցնցում ստանա, երբ ամեն անգամ դու խոսում ես նրա հետ: *(Խմիչքի սեղանի վրայից վերցնում է սպիտակ ծաղկամանն ու ջրի սափորի հետ դնում կլոր սեղանին:)* Միսիս Բեզաուի երեխան ի՞նչ գործ ունի ընկալուչի հետ: *(Ձուր է լցնում ծաղկամանի մեջ ու գեորգիները շարում՝ հետևելով խոսակցությանը:)*

Լեդի Անգրթել.- Դե՛, նրա երեխային նկատի ունեմ, ընկալուչը նրա ձեռքին էր՝ պահած գլխիվայր... Նույնը փորձեցի ես ու հասկացա, որ նա ձախլիկ է: Դրա համար ամեն ինչ թարս էր երևում: Ձոն Քրիսթոն վար իջե՞լ է:

Միջ.- Այո՛, նա գնաց այգի Հենրիեթային հանդիպելու հույսով:

Լեդի Անգրթել.- *(նստելով գահավորակի աջ եզրին):* Էհ... Քո կարծիքով դա խելացի՞ էր նրա կողմից:

Միջ.- Ի՞նչը նկատի ունես:

Լեդի Անգրթել.- Ողոակի ոչինչ չեմ ուզում ասել...

Միջ.- Դե լավ, Լյուսի՛, ասա՛:

Լեդի Անգրթել.- Գիտե՞ս՝ գիշերները ես լավ չեմ քնում, և երբ քունս չի տանում, սովորություն եմ դարձրել թափառել տան շուրջը:

Միջ.- Գիտեմ: Հյուրերի կեսը մտածում է՝ գողեր են, մյուս կեսը՝ ուրվականներ:

Լեդի Անգրթել.- Ուրեմն՝ պատահամա՛ր նայում էի միջանցքի լուսամուտից, երբ հանկարծ նկատեցի Ձոնին, որ տուն էր վերադառնում: Դա ժամը երեքի մոտ էր:

դադար, որի ընթացքում Միջն ու Լեդի Անգրթելը լուռ նայում են իրար:

- Միջ.- *(վերցնելով սափորն ու ծաղկամանը մոտենում է խմիչքի սեղանին):*
 Լուսաբացի ժամը երեքը արտառոց պահ է նույնիսկ հին ընկերների համար,
 որոնք շատ բան ունեն իրար պատմելու: *(Սափորն ու ծաղկամանը դնում է*
խմիչքի սեղանի վրա:)
- Լեդի Անգրթել.- Ով գիտե, Գերդան ինչպես է դրան վերաբերվել:
 Միջ.- *(հենվելով գահավորակին):* Մինչև անգամ ամենահնազանդ կինն էլ դա չի
 հանդուրժի:
- Լեդի Անգրթել.- Կարծում եմ Հենրիեթան էլ գիշերը լավ չի քնել: Նրա սենյակի լույսը վառ էր
 ու ինձ թվաց՝ վարագույրը շարժվեց:
- Միջ.- Իսկապես Ջոնը հիմար է:
 Լեդի Անգրթել.- Նա այն տղամարդկանցից է, որոնք ռիսկի են դիմում և սովորաբար չոր են
 դուրս գալիս...
- Միջ.- Մի օր նա չափը կանցնի: Նույնիսկ, նրա պարագայում էլ, սա անպատկառու-
 թյուն է:
- Լեդի Անգրթել.- Իմ սիրելի՛ մանկիկ, նա կորցրեց ինքնատիրապետումը: Այդ կինը անցյալ գի-
 շեր ուղղակի գրոհեց ու հափշտակեց Ջոնին: Կասեի՛ նրա ներկայացումը
 հիացմունք պատճառեց ինձ: Դա ճիշտ ժամանակին էր ու վարպետորեն ծրա-
 գրված:
- Միջ.- Կարծո՞ւմ ես՝ ծրագրված էր:
 Լեդի Անգրթել.- *(կանգնելով):* Է՛հ, սիրելի՛ս, իհարկե... *(Շպտում է, վերցնում «Դեյլի Միրրորը»*
և մոտենում բուխարիկին:)
- Միջ.- Գուցե դու քեզ հատուկ համոզվածությամբ պնդես, որ դա հիանալի ներկա-
 յացում էր. բայց տեսնենք ի՞նչ կասեն Գերդան ու Հենրիեթան:

Մըր Հենրին ներս է մտնում՝ Ջ, իր հետ կրելով երկու ասորճանակ:

- Մըր Հենրի.- *(անցնելով՝ Ս):* Գնամ մի քիչ փորձեմ թիրախների վրա: Մի՛ջ, չէի՞ր ցանկանա
 ընկերակցել ինձ:
- Միջ.- Ես երբևէ չեմ կրակել որևէ հրազենով կամ ասորճանակով ողջ կյանքիս ըն-
 թացքում: Մեկ էլ տեսար՝ քո վրա ծակ բացեցի, Հենրի:
- Մըր հենրի.- Դա քեզ չի հաջողվի, որովհետև ես հիանալի հոգ կտանեմ իմ մասին:
 Միջ.- Դե՛, մնում է մտածել, որ մի օր կկարողանամ գոնե սեղանը շուռ տալ գողի
 գլխին:
- Մըր Հենրի.- Ամեն մի կին պարտավոր է կրակել սովորել որևէ հրազենով:
 Լեդի Անգրթել.- *(գնալով ու նստելով բազկաթոռին՝ ԿՁ):* Այժմ դու էլ ներգրավվում ես Հենրիի
 նախասիրության մեջ: Նա փիսթոլների ու ասորճանակների մի ամբողջ հա-
 վաքածու ունի, ներառյալ՝ մեկ զույգ ֆրանսիական հիանալի մենամարտի
 փիսթոլ: *(Վերցնում ու կարդում է թերթը:)*
- Միջ.- Իսկ ստիպվա՞ծ չես դրանց համար արտոնություն ունենալ:
 Մըր Հենրի.- Իհարկե:
 Միջ.- Երբևէ գողի հանդիպե՞լ ես:
 Մըր Հենրի.- Դեռ ոչ, բայց մարդ ապրում է հույսով... Բան է, եթե գողը հայտնվի Լյուսին
 կկրակի ու կսպանի նրան:
- Միջ.- *(գարմացած):* Լյուսի՞ն:
 Մըր Հենրի.- Լյուսին ավելի դիպուկ է, քան ես: Լյուսին միշտ հաղթում է իր ամուսնուն:
 Միջ.- Պարզապես սոսկում եմ:

դուրս է գալիս՝ Ա: Մեր Հենրին հետևում է նրան: Ներս է մտնում Հենրիեթան՝ ԿԶ:

- Հենրիեթա.- *(հենվելով գահավորակի վերին):* Բարև: Անգրթելները պատրաստվում են բնաջնջե լ իրար...
- Լեդի Անգրթել.- Բոլորը հրաձգարան գնացին: Ինչո՞ւ դու չես միանում նրանց:
- Հենրիեթա.- Հա՛, կգնամ: Անցյալ գարնանը վատ չէի կրակում: Դու չե՞ս գա, Լյուսի՛:
- Լեդի Անգրթել.- Այո՛: Ո՛չ, նախ և առաջ մի բան պիտի անեմ այս ձվերի հետ: *(Նայում է շուրջը:)*
- Հենրիեթա.- Ձվերի՞ ...
- Լեդի Անգրթել.- Այո՛, սիրելի՛ս, դրանք այնտեղ՝ զամբյուղի մեջ են:

Հենրիետան մոտենում է խմիչքի սեղանին, վերցնում է ձվերով լի զամբյուղն ու տալիս Լեդի Անգրթելին:

- Օ՛հ, շնորհակալ եմ, անգի՛նս: *(Զամբյուղը դնում է նստած այթոռի կողքը հատակին՝ Ա, և վերսկսում ընթերցանությունը:)*
- Հենրիեթա.- *(գնալով՝ Կ):* Էդուարդն ո՞ւր է:
- Լեդի Անգրթել.- Կարծում եմ վերցրեց իր զենքն ու անտառ գնաց: Հենրին էլ գնում էր նրա հետ, բայց ինչ-որ մեկը կանխեց նրան ինչ-որ գործով:
- Հենրիեթա.- Այդպե՛ս: *(Կանգնած խորասուզվում է մտքերի մեջ:)*

դրսից՝ Ա, լսվում է ատրճանակի երկու կրակոց:

- Լեդի Անգրթել.- Առավոտյան աշխատե՞լ ես:
- Հենրիեթա.- *(նստելով գահավորակին):* Ո՛չ, տրամադրություն չունեմ:

դրսից՝ Ա, լսվում է ատրճանակի մեկ կրակոց:

- Լեդի Անգրթել.- Կարծում եմ, դու շատ խելացի ես, սիրելի՛ս, որ ստեղծում ես այս արտառոց արատրակտ գործերը:
- Հենրիեթա.- Ինձ թվում է, դու չես հավանում, Լյուսի՛:
- Լեդի Անգրթել.- Ո՛չ, ավելի շատ անիմաստ եմ համարում, բայց համոզված եմ՝ դու այնքան խելացի ես, որ գիտես՝ դրանք անիմաստ չեն:

Գերդան հապճեպ ներս է մտնում՝ Ձ տագնապալի տեսքով:

- Գերդա.- Կրակոցի ձայն լսեցի... Դոյակին շատ մոտիկ:
- Լեդի Անգրթել.- Բան չկա, սիրելի՛ս. Հենրին... հրաձգություն... Կրակում են ծառուղում տեղադրված թիրախներին:
- Հենրիեթա.- *(բարձրանալով):* Արի դու էլ փորձիր, Գերդա՛:
- Գերդա.- Դժվար չէ՞: *(Մոտենում է Հենրիեթային:)*
- Հենրիեթա.- Չէ՛, իհարկե ոչ: Ուղղակի փակիր աչքերդ ու սեղմիր ձգանը և գնդակը կսլանա ինչ-որ տեղ:

դրսից՝ Ա, լսվում է երկու կրակոց: Հենրեթան ու Գերդան դուրս են գալիս՝ Ա: Դրսից՝ Ա, լսվում է մեկ կրակոց: Լեդի Անգրթելը կանգնում է, մոտենում է կլոր սեղանին,

օրաթերթը դնում վրան և վերցնում ծաղկամանն ու ավելորդ տերևները: Դրսից՝ Ա, լսվում է երկու կրակոց: Լեդի Անգրթելը տերևները տանում է ու նետում թղթերի զամբյուղի մեջ, ապա ծաղկամանը դնում է խմիչքի սեղանի վրա: Դրսից՝ Ա, լսվում է երկու կրակոց: Ջոնը ներս է մտնում՝ ԿԱ: Միգարեթ է ծխում:

- Ջոն.- Պատերազմը սկսվե՞լ է:
Լեդի Անգրթել.- Այո՛, սիրելի՛ս... Ո՛չ, սիրելի՛ս. Հենրին... Նշանառության փորձ...
Ջոն.- Նա շատ հմուտ է, հիշում եմ:
Լեդի Անգրթել.- Ինչո՞ւ չեք միանում նրանց:
Ջոն.- *(մտտենալով բուխարիկին):* Պետք է մի քանի նամակներ գրեմ: *(Միգարեթը հանգցնում է բուխարիկի դարավանդակի վրա դրված մոխրամանի մեջ:)*
Կարծում եմ չեք առարկի, եթե գրեմ այստեղ:
Լեդի Անգրթել.- *(հենվելով գահավորակի վերին):* Բիարկե ոչ: Փոքր գրոցում նամակադրոշմ կա: Եթե նամակները դնեք միջանցքի սեղանի վրա, Գաջընը կուղարկի:
Ջոն.- Մա Անգլիայի ամենալավ ձևով կառավարվող տունն է:
Լեդի Անգրթել.- Օրհնվես, սիրելի՛ս: Հիմա տեսնեմ... *(նայում է շուրջը,)* ո՞ւր դրի ձվերը: Ահ, աթոռի կողքին է: *(Վերցնում է ձվերով լի զամբյուղն ու մտտենում դռան՝ Ձ:)*
Ջոն.- Չեմ հասկանում՝ ինչի՞ մասին է խոսքը:

Լեդի Անգրթելը դուրս է գալիս՝ Ձ: Ջոնը մտտենում է գրասեղանին ու երկտողը հանում գրպանից. կարդում է, ապա ճմրթում ու նետում զամբյուղի մեջ: Նստում է, հառաչում և սկսում գրել: Վերոնիկան ներս է մտնում՝ ԿՁ:
Ձեռքին կրում է մի մեծ, փայլփլուն կաշվե պայուսակ:

- Վերոնիկա.- *(կանգնած ֆրանսիական պատուհանի առջև՝ Կ. անբարտավան):* Ջո՛ն:
Ջոն.- *(շրջվելով. ցնցված):* Վերոնիկա: *(Կանգնում է:)*
Վերոնիկա.- *(շարժվելով դեպի ցած՝ Կ)* Քեզ երկտող ուղարկեցի և խնդրեցի անմիջապես ինձ մոտ գաս: Դա չե՞ս ստացել:
Ջոն.- *(հաճությամբ, բայց՝ զուսպ):* Այո՛, ստացել եմ:
Վերոնիկա.- Այդ դեպքում ինչո՞ւ չեկար: Ես սպասում էի:
Ջոն.- Ներիր, ինձ համար հարմար չէր գալ այսօր առավոտյան:
Վերոնիկա.- *(մտտենալով Ջոնին՝ Ձ):* Կարո՞ղ եմ մի սիգարեթ խնդրել:
Ջոն.- Անշուշտ: *(Միգարեթ է առաջարկում իր տուփից):*

նախքան Ջոնը կվառեր՝ Վերոնիկան պայուսակից հանում է իր վառիչն ու վառում սիգարետը:

- Վերոնիկա.- Քեզ կանչեցի, որովհետև մեզ անհրաժեշտ է խոսել ու դասավորել մեր անելիքները: Խոսքս մեր ապագայի մասին է:
Ջոն.- Մի՞ թե մենք ապագա ունենք:
Վերոնիկա.- Բիարկե ապագա ունենք: Մենք կորցրել ենք տաս տարի. պատճառ չկա վատնել ավելին: *(Նստում է գահավորակի կենտրոնում ու պայուսակը դնում գահավորակի եզրին՝ Ա:)*
Ջոն.- *(հենվելով գահավորակին՝ Ա):* Ցավում եմ Վերոնիկա: Ըստ իս դու սխալ ուղու վրա ես: Ես իսկապես հաճույք ստացա կրկին հանդիպելով քեզ, բայց ինքդ էլ գիտես, որ մենք չենք պատկանում իրար, մեր աշխարհները տարբեր են:

Վերոնիկա.- Ինչ փույթ, Ջոն, ես սիրում եմ քեզ, դու էլ՝ ինձ: Մենք միշտ սիրել ենք իրար: Դու կամակոր եղար անցյալում, մի՛ եղիր հիմա:

Ջոնը անցնում է գահավորակի ետևից՝ Չ:

Լսի՛ր, կարիք չկա մեր ուղիները խաչաձևվեն: Ես երկար ժամանակով եմ հեռացել Նահանգներից: Երբ ավարտեմ ընթացիկ նկարահանումը, ելույթ պիտի ունենամ Լոնդոնի բեմում մի լուրջ դերով: Նոր ներկայացում է, որն էլլորթոնը հատուկ գրել է ինձ համար: Դա մեծ հաջողության երաշխիք է:

Ջոն.- *(քաղաքավարի):* Համոզված եմ դրանում:

Վերոնիկա.- *(բավարարված):* Իսկ դու կարող ես շարունակել բժշկությունը: Ինձ ասել են, որ դու մեծ հեղինակություն ես վայելում:

Ջոն.- *(շարժվելով ցած՝ Կ. բորբոքված):* Այո՛, որոշ հիվանդությունների կապակցությամբ, կոնսուլտանտի հոչակ եմ ձեռք բերել, եթե իհարկե դա քեզ հետաքրքրում է, բայց ենթադրում եմ, որ՝ ոչ:

Վերոնիկա.- Նպատակս այն է, որ մեզանից յուրաքանչյուրը կարող է մնալ իր գործին: Էլ սրանից լավ ի՞նչ կարող է լինել:

Ջոն.- *(Վերոնիկային տնտղելով սառնասրտորեն):* Դու իսկապես զարմանալի բնավորություն ունես: Մի՞թե չես հասկանում, որ ես ամուսնացած մարդ եմ, երեխաներ ունեմ:

Վերոնիկա.- *(բարձրանալով ու անցնելով Ջոնի Ա. Կողմը)* Լավ էլի, ես էլ այս պահին ամուսնացած կին եմ: Բայց այս խնդիրները կարող ենք հեշտությամբ լուծել: Մի լավ փաստաբան ամեն բան կկարգավորի: *(Մեղմ):* Ես միշտ ձգտել եմ ամուսնանալ քեզ հետ, սիրելի՛ս: Ինքս էլ չգիտեմ այս տանջող զգացումի պատճառը: *(Թները հանգուցում է Ջոնի պարանոցին:)* Բայց այդպես է:

Ջոն.- *(կոպտորեն վանում է նրան իրենից):* Ցավում եմ, Վերոնիկա: *(Մտտենում է բուխարիկին:)* Դա անկարելի է:

Վերոնիկա.- Բայց, ասում եմ քեզ, մի լավ փաստաբան կարող է հեշտությամբ կարգավորել...

Ջոն.- Ո՛չ մի փաստաբան չի կարգավորի ո՛չ մի բան: Ոչ մի ընդհանուր բան չկա իմ ու քո կյանքում:

Վերոնիկա.- *(մտտենալով Ջոնին՝ Ա ու նայելով նրան):* Նույնիսկ երեկ գիշերից հետո՞:

Ջոն.- Վերոնիկա, դու երեխա չես: Երկու ամուսին ես ունեցել և, կասկած չունեմ, մեծ թվով սիրելեաններ: Ի՞նչ իմաստ ունի՝ «երեկ գիշեր»-ը. պարզապես ոչինչ, ինքդ էլ գիտես:

Վերոնիկա.- Եթե դու քո դեմքը տեսնեիր երեկ երեկոյան... երբ ես ներս մտա այն պատուհանից... ասես չկար տարիների բաժանումը և մենք գտնվում էինք Ֆրանսիայի հարավում:

Ջոն.- Այո, ես մտքով սավառնում էի Ֆրանսիայի հարավում: *(Մեղմորեն):* Աշխատիր հասկանալ, Վերոնիկա: Երեկ գիշեր դու հայտնվեցիր ասես ուղիղ անցյալի խորքից... Ես քո մասին էի մտածում. խորհում էի այն մասին, թե իմ կարծածի չափով իսելացի եմ եղե՞լ, թե՞ պարզապես՝ երիտասարդ վախկոտի մեկը: Եվ հանկարծ... դու ինքդ... կատարված երազի պես... Բայց դու երազ էիր... Այսօր վերադարձել եմ ներկային՝ տաս տարով մեծացած: *(Մտտենում է գահավորակի ձախ կողմը:)* Նա, ում դու չես ճանաչում, և հավանաբար շատ էլ չի փափագում, որ ճանաչես իրեն...

- Վերոնիկա.- Դրանով ուզում ես ինձ ասել, որ կնոջդ գերադասում ես ինձնից:
Ջոն.- Այո՛... Այո՛, գերադասում եմ: *(Նստում է գահավորակի ձախ եզրին:)* Ես հանկարծ անդրադարձա, որ իմ իմացածից շատ ավելի եմ սիրում նրան: Երբ տուն էի վերադառնում երեկ գիշեր կամ լուսաբացի առաջին ժամերին, հանկարծ զգացի, թե որքան հիմարաբար եմ վտանգի ենթարկում այն բոլորը, ինչի կարիքն ունեմ իմ կյանքում: Բարեբախտաբար Գերդան քնած էր: Նա գաղափար անգամ չունեցավ, թե ես որ ժամին եմ տուն վերադարձել: Նա համոզված է, որ քո մտոից հեռացել եմ շատ շուտ:
- Վերոնիկա.- Քո կինը հենց այդպիսի դյուրահավատ մեկը պիտի լինի:
Ջոն.- Նա ինձ սիրում... և վստահում է:
Վերոնիկա.- Նա ապուշի մեկն է: *(Մտտենում է գահավորակին՝ 2:)* Ինչևէ, ես չեմ հավատում քո ոչ մի խոսքին: Դու ինձ ես սիրում:
Ջոն.- Ցավում եմ, Վերոնիկա:
Վերոնիկա.- *(կանգնած՝ Կ. թերահավատորեն):* Չե՞ս սիրում ինձ:
Ջոն.- Ես միանգամայն անկեղծ եղա քեզ հետ: Դու գեղեցիկ ու անչափ հրապուրիչ կին ես, Վերոնիկա՛: *(Կանգնում է ու գնում գահավորակի վերի աջ կողմը:)* Բայց ես քեզ չեմ սիրում:
Վերոնիկա.- *(մոլեգին):* Դու իմն ես, Ջոն՛, *(գնում է գահավորակի առջևը)* և միշտ էլ ինձ ես պատկանել: Անգլիա վերադառնալուց հետո անդադար քո մասին եմ մտածել: Մանրակրկիտ ծրագրել եմ հանդիպել քեզ: *(Ծնկած նստում է գահավորակի վրա:)* Կարծում ես, ինչո՞ւ վարձեցի այդ ապուշ տունը: Որովհետև իմացել էի, որ հանգստյան օրերին հաճախ այցելում ես անգրթելներին:
Ջոն.- Ուրեմն՝ երեկ երեկոյան ամեն բան ծրագրված էր: *(Անցնելով գահավորակի վերին կողմից, մտտենում է բազկաթոռի՝ Կ2 աջ կողմին:)* Ես նկատեցի, որ այսօր առավոտյան վառիչդ կարգին է:
Վերոնիկա.- *(կանգնում ու շրջվում է):* Դու ինձ ես պատկանում:
Ջոն.- *(գայրացած):* Ես ոչ մեկին էլ չեմ պատկանում: Այդ որտեղից է գլուխդ մտել, որ կարող ես տիրանալ ուզածդ մարդուն: Մի անգամ քեզ սիրեցի ու ցանկացա, որ ամուսնանաս ու կյանքդ կապես ինձ հետ: *(Մտտենում է բուխարիկին ու մեջքով կանգնում դեպի այն:)* Ինքդ չուզեցիր:
Վերոնիկա.- Իմ կյանքն ու կարիերան շատ ավելի կարևոր էին, քան քոնն էր: Ամեն մարդ կարող է բժիշկ դառնալ, *(սիգարեթը տրորում է կլոր սեղանին դրված մոխրամանի մեջ:)*
Ջոն.- Դու իրո՞ք կարծում ես, թե շատ կարևոր անձնավորություն ես:
Վերոնիկա.- *(մտտենում է Ջոնի աջ կողմին):* Եթե դեռևս չեմ հասել փառքի գագաթնակետին, ապա կհասնեմ:
Ջոն.- Համոզված չեմ: Ավելի շատ կասկածում եմ: Քո մեջ մի բան պակասում է: Վերոնիկա՛, ի՞նչ է դա... ջերմություն, վեհանձնություն... Դու ոչինչ չես տալիս, դու վերցնում ես, վերցնում ես, վերցնում ես ամբողջ ժամանակ:
Վերոնիկա.- *(խոսում է ցածր ձայնով բարկությունից ջղաձգվելով):* Դու իմ սիրտը կտորեցիր տասը տարի առաջ, հիմա էլ նույնը: Աստված իմ, դու վերջը կտառապես իմ մեղքով:
Ջոն.- Ցավում եմ, եթե անհանգստացրի քեզ, Վերոնիկա՛: Դու շատ լավիկն ես, սիրելիս, ու ժամանակին քեզ համար շատ եմ տառապել: Չե՞նք կարող միթե բավականանալ այդքանով:

Վերոնիկա.- Ո՛հ: (Մոտենում է ֆրանսիական պատուհաններին՝ Կ, շրջվում է ու կանգնում պատուհանի մեջ): Ջգուշացի՛ր, Ջո՛ն Քրիսթո: Ես քեզ ասում եմ ավելի, քան երբևէ կմտածեի՝ հնարավոր է ատել որևէ մեկի...

Ջոն.- (Անհանգստացած): Օ՛հ...

Վերոնիկա.- Եվ մի խաբվիր նրանով, թե ես հավատացի, որ դու անտեսում ես ինձ կնոջդ պատճառով: Այստեղ ուրիշ կինը կա:

Ջոն.- Ի՞նչ ուրիշ կին:

Վերոնիկա.- Նա, ով ներս մտավ այն դռնից երեկ երեկոյան ու նայեց քեզ: Հասկացի՛ր, Ջո՛ն. Եթե ես չկարողանամ տիրել քեզ, դու չես պատկանի ուրիշ որևէ մեկի:

դուրս է գալիս Կ-ից՝ Ջ, պայուսակը թողնելով գահավորակի վրա: Ջոնը մի պահ նայում է նրա հետևից, ապա մոտենում է գրասեղանին, վերցնում է կիսով չափ գրված նամակը, պատռում ու նետում զամբյուղի մեջ: Գաջընը ներս է մտնում՝ Ա, մոտենում է գահավորակին՝ Ջ, շրջվում է ու տեսնում Ջոնին:

Գաջըն.- Ներողություն, սը՛ր, դուք չգիտե՞ք՝ ուր է նորին ազնվափայլությունը:

Ջոն.- Կարծում եմ նրանք բոլորը դուրսը՝ թիրախների ծառուղում են:

Գաջըն.- Նրանք ավարտեցին հրաձգությունը որոշ ժամանակ առաջ, սը՛ր:

Ջոնը գրպանից հանում է Վերոնիկայի երկտողը, ճմրթում ու նետում է զամբյուղի ուղղությամբ, բայց դա շեղվելով ընկնում է մի կողմ:

Ջոն.- (մոտենալով խմիչքի սեղանի վերի գրապահարանին): Այդ դեպքում նրանք այգում մի տեղ են:

Գաջընը անցնում է գահավորակի առջևից, վերցնում է ճմրթված երկտողն ու զցում զամբյուղի մեջ. հետո վերցնելով զամբյուղը՝ դուրս է գալիս դռնից՝ Ջ: Ջոնը մի գիրք է ընտրում գրապահարանի մեջ, մոտենում է գահավորակին և նայում է բաց էջին: Լսվում է մի ձայն պատշգամբի խորքից՝ ԿՋ: Ջոնը գիրքը դնում է գահավորակին, գնում է պատշգամբ, նայում՝ Ջ, ապա հանկարծ բղավում է տազնապաճ:

Ինչո՞ւ... Ի՞նչ ես անում, ցած դիր այդ..., Ինչո՞ւ դու...

լսվում է ատրճանակի կրակոցի ձայն՝ Կ: Ջոնը երեքավով իջնում է աստիճաններից, փորձում է գնալ դեպի դուռը՝ Ջ, բայց գլորվում է հատակին՝ ԿՋ: Ձախ կողմից մի ատրճանակ է ցած ընկնում պատշգամբի հատակին: Դադար, որից հետո, շտապ ներս է մտնում Գերդան ցածից՝ Ջ: Ձեռքին իր կաշվե պայուսակն է. վագում է Ջոնի ձախ կողմը:

Գերդա.- Ջո՛ն... Օ՛հ, Ջո՛ն... (Անցնելով կենտրոնից մտնում է պատշգամբ, վերցնում է ատրճանակը, նայում դուրս՝ Ջ, ապա կանգնում է աստիճանների գլխին՝ նայելով առաջ:)

Գաջընը հապճեպ ներս է մտնում՝ Ջ: Մի վայրկյան անց ներս է մտնում Սըր Հենրին՝ Ա: Նրա հետևից գալիս է Միջը:

Սըր Հենրի.- (մոտենալով Ջոնին՝ Ա): Ի՞նչ է պատահել:

Գաջընը մոտենում է Ջոնին՝ Ջ:

Քրիստոս՝... Քրիստոս՝... Աստված իմ, այս ի՞նչ է պատահել... (Չոքում է Ջոնի կողքին):

Միջ.- (մոտենալով գահավորակի վերին) Գերդա՛... Ջոնը... Այս ի՞նչ է պատահել...

Գաջըն.- (Չոքելով Ջոնի կողքին՝ Ջ): Դր. Քրիստոսն, սը՛ր... Այս ի՞նչ է պատահել...

Սըր Հենրի.- (Բարձրացնելով Ջոնի գլուխն ու ուսերը): Նա վիրավորված է: (Փորձում է Ջոնի զարկերակը):

Ջոնը դեռ շնչում է: Գաջընը բարձրանում ու գնում է՝ Ջ:

Գաջըն.- Վիրավորվա՛ծ: Այդ ինչպե՛ս պատահեց:

Սըր Հենրի.- Բժիշկ կանչի՛ր, Գաջը՛ն, շուտ:

Գաջընը մոտենում է գրասեղանին ու վերցնում ընկալույչը:

Միջ.- Նա մահացե՞լ է:

Սըր Հենրի.- Ո՛չ:

Լեդի Անգրթելը ներս է մտնում՝ Ջ: Հենրիետան ներս է մտնում՝ Ա:

Հենրիեթա.- Կրակոցի ձայն լսեցի: (Չոքում է Ջոնի կողքին, ցած Ա:): Ջո՛ն... Ջո՛ն...

Էդուարդը ներս է մտնում՝ ԿՁ ու կանգնում ֆրանսիական պատուհանների աջ կողմում: Ջոնը բացում է աչքերն ու նայում Հենրիեթային:

Ջոն.- (Ճգնում է բարձրանալ. Պոռթկալով՝ բարձրաձայն): Հենրիեթա՛... Հենրիեթա՛... (Փլվում է:)

Սըր Հենրին փորձում է Ջոնի զարկերակը և հետո նայում է Հենրիեթային ու Գերդային:

Գերդա.- (ցած գալով ու մոտենալով բազկաթոռին՝ ԿՁ. հիստերիկ ձայնով): Նա մեռած է... մեռած է... Ջոնը մեռած է...

Հենրիեթան մոտենում է Գերդային՝ Ա և ասորճանակը վերցնում նրա ձեռքից: Լեդի Անգրթելը մոտենում է Գերդային՝ Ջ և թեք օղակում նրա մեջքին:

Ջոնը մեռած է...

վարագույրը սկսում է դանդաղ իջնել:

Գաջըն.- (լսավողի մեջ): Միացրեք ինձ Դր. Սըրդաքին:

Վ Ա Ր Ա Գ Ո Ի Յ Ր

Տեսիլ Բ

Բեմը նույն տեսարանն է: Նույն օրը՝ ավելի ուշ:

Երբ վարագույրը բացվում է, եղանակը փոխված է, դրսում քամի է և երկինքը՝ մթագնած: Բացի աջ կողմի ֆրանսիական պատուհանից, մյուս պատուհանները փակ են: Լեդի Անգրթելը նստած է գահավորակի աջ ծայրին և զբաղված՝ ձեռքի գործով: Միջը նստած է աթոռին՝ Ա: Էդուարդը նստած է բազկաթոռին՝ ԿՁ և զբաղված է «Թայմզ»-ի խաչքառը լուծելով: Հենրիեթան կանգնած է պատշգամբում՝ Կ: Քիչ հետո, Հենրիեթան վար է իջնում ու կանգ է առնում, երբ ժամացույցը ազդարարում է ժամը երկուսը: Ապա անցնելով գահավորակի առջևից դեպի աջ, նայում է պատուհանից դուրս՝ Ա:

Լեդի Անգրթել.- Ջգում էի, որ այնքան լավ եղանակը չէր հարատևի: Երանի իմանայի՝ ոնց տնօրինել ճաշի հարցը: Այս Տեսուչն ու իր հետ եկած անձնավորությունը... Որևէ մեկը մատո՞ւցել է նրանց, թե՞ կուտեն մեզ հետ:

Հենրիեթան շրջվում է:

Ոստիկանությունը առհասարակ այն չէ, ինչը պատկերված է գրքերում: Օրինակ՝ այս Տեսուչ Քոլքրիունը. նա մի ջենտլմեն է: Գիտեմ, դա չպիտի ասվի այս օրերին, որովհետև տհաճություն է պատճառում մարդկանց, բայց նա այդպիսին է:

Հենրիեթան մոտենում է գահավորակին վերին՝ Ձ:

(հանկարծակի): Սուրբ Ալբր՛նգ...

Էդուարդը և Հենրիեթան զարմացած նայում են Լեդի Անգրթելին:

Հենրիեթա.- Ի՞նչ Սուրբ Ալբրնգ: *(Գնում է դեպի խորշը:)*

Լեդի Անգրթել.- Չէ՛, չէ՛, Հենդրն ոստիկանական քոլեջը: Նա ոչնչով նման չի մեր տեղական Տեսուչ՝ Ջեկսընին, որը շատ լավն է, չնայած իր վատ առողջանությանն ու հաստ բեղերին...

Հենրիետան բացում է խորշի վարագույրը, միացնում է հոսանքը և կանգնելով կամարի ձախ կողմում՝ նայում է դուրս՝ արձանին՝ Ձ:

Միջ.- Նրանք ինչո՞ւ են Սքաթլենդ-Յարդից մարդ ուղարկել: Ես կարծում էի, որ առաջին հերթին տեղական ոստիկանությունն է միջամտում:

Էդուարդ.- Մա Մեթրոփոլիթեն շրջանն է:

Միջ.- Ա՛, հասկացա:

Հենրիետան մոտենում է բուխարիկին՝ բաց թողնելով խորշի վարագույրն և՝ միացված հոսանքը:

- Լեդի Անգրթել.- Չեմ կարծում, թե նրա կինը հոգում է իր ամուսնու մասին: Ենթադրում եմ՝ նա պատկանում է այն կանանց թվին, որոնք տունը միշտ մաքուր են պահում, սակայն գլուխ չունեն եփել-թխելու հետ:
- Էդուարդ.- Տեսուչ Քոլքրիստի կի՞նը:
- Լեդի Անգրթել.- Չէ՛, չէ՛, սիրելի՛ս, տեսուչ Ջեկսոնի: Չէի ասի, թե Քոլքրիստը ամուսնացած է: Դեռ ոչ: Նա բավականին գրավիչ է:
- Հենրիետա.- Երկար ժամանակ է, նրանք Հենրիի հետ ներսն են:
- Լեդի Անգրթել.- Ամենավատ ոճիրն այն է, որ խախտում է նաև ծառաների անդորրը:

Հենրիետան գահավորակի վերից մոտենում է պատուհանին՝ Ա:

- Մենք ճաշին պիտի բաղ ունենայինք: Իսկ սառը բաղը կարող է հաճելի լինել: Կարծում եմ հիմա ոչ ոք ուտելու ցանկություն չունի: Չէ՞: (*Դադար:*) Ոչ:
- Միջ.- Ամեն ինչ սարսափելի էր: (*Տնցվում է սարսուռից:*) Ահավոր է այստեղ պարզադիր նստելը:
- Լեդի Անգրթել.- Դե, սիրելիս, պետք է այստեղ նստենք, ուրիշ՝ ոչ մի տեղ:

Հենրիետան շրջվում է և անցնելով գահավորակի առջևից՝ մոտենում է բուխարիկին:

Նախ մեզ դուրս տարան ու լուսանկարեցին: Հետո ետ քշեցին ու ճաշասենյակը դարձրին իրենց շտաբը: Իսկ հիմա Տեսուչ Քոլքրիստը Հենրիի հետ գրասենյակում են:

դադար: Հենրիետան շրջվում է ու նայում բուխարիկի կրակարանին:

- Կարծո՞ւմ եք մեկը հոգացել է Գերդայի մասին: Որևէ բան մատուցարանով՝ գուցե մի սննդաբար սուպ:
- Միջ.- (*բարձրանալով ու մոտենալով պատուհանին՝ Ա: Լցված:*) Լյուսի՛, ինչքան գուրկ ես մարդկային զգացումներից: (*Նայում է պատուհանից դուրս:*)
- Լեդի Անգրթել.- (*զարմացած:*) Անգի՛նս, բոլորս էլ անհանգիստ ենք, բայց պիտի՞ մեկը մտածի կերակրի և այլ բաների մասին: Ներվայնանալը մարդուն սովաճացնում է, նույնիսկ հիվանդացնում:
- Միջ.- Այո՛, դա միակ բանն է, որ մարդ զգում է:
- Լեդի Անգրթել.- Օրաթերթերի մեջ սպանությունների մասին կարդալիս մարդու մտքովն անգամ չի անցնում, թե դրանք որքան սիրտ մաշող կամ անհանգստացուցիչ կարող են լինել: Մի այնպիսի զգացում ունեմ, որ ասես քայլել եմ տասնհինգ մղոնից ավելի: Հենց այն միտքը, որ գալ շաբաթ, նույնիսկ վաղը, մենք կհայտնվենք «Աշխարհի նորություններ»-թերթի էջերում...
- Էդուարդ.- Երբեք չեմ կարդում «Աշխարհի նորություններ»-ը:
- Լեդի Անգրթել.- Չե՞ս տեսել: Օհ, ես նայում եմ ամեն օր: Մենք դա իբր թե ստանում ենք ծառայողների համար: Բայց Գաջընը շատ փափկանկատ է, նա մինչև ուշ երեկո, դա չի տանում ծառայողների սպասասրահը: Պիտի դա կարդաս, Էդուա՛րդ, ու շճմես սպասուհիներին սիրահետող մեր հին գնդապետների քանակից:

Գաջընը ներս է մտնում՝ Զ: Մատուցարանով բերում է սուրճ և սենդվիչներ:

Ա՛հ, (*զնում է և նստում գահավորակի կենտրոնում:*)

- Գաջըն.- Կարո՞ղ եմ մի բան էլ տանել հարցաքննության մեջ գտնվող Սըր Հենրիին ու ոստիկանության տեսուչին:
- Լեդի Անգրթել.- Այո՛, այո՛, շնորհակալ եմ, Գաջըն: Ես մի քիչ անհանգիստ եմ Միսիս Քրիսթոյի համար:
- Գաջըն.- Միմընդզը, տիրուհի՛ս, արդեն նրա համար տարել է թեյ, բարակ շերտերով հաց ու կարագ և խաշած ձու: *(Շրջվում է ու գնում դեպի դուռը՝ Զ:)*
- Լեդի Անգրթել.- Շնորհակալություն, Գաջըն: Մոռացել էի ձկերի գոյության մասին, Գաջըն: Ինչ-որ մի բան պիտի անեի դրանց հետ:
- Գաջըն.- *(կանգնելով ու շրջվելով):* Ես դա արդեն արել եմ, տիրուհի՛ս: *(Շեշտելով):* ամեն ինչ կարգին է, կարծում եմ: Դուք անհանգստանալու պատճառ չունեք:

դուրս է գալիս Զ:

- Լեդի Անգրթել.- Զգիտեմ առանց նրա ինչ կանեի: Այս սննդարար սենդիվիչները հենց այն էր, ինչ հարկավոր էր... այնքան էլ անախորժ չեն՝ սովորական նստած ճաշի համեմատությամբ և դեռ...
- Միջ.- *(սկսում է լացել. Հիստերիկ):* Oh, Լյուսի՛, բավական է...

Լեդի Անգրթելը նայում է զարմացած: Էդուարդը կանգնում է, մոտենում է խմիչքի սեղանին, ձեռքի թուղթն ու գրիչը դնում այնտեղ, հետո մոտենում է Միջին ու թերցում նրա մեջքին, մինչ՝ նա հեկեկում է առանց խաղաղվելու:

- Էդուարդ.- Մի՛ ջ...
- Լեդի Անգրթել.- Խե՛ղճ, սիրելի՛ս, այս բոլորը չափից շատ է նրա համար:
- Էդուարդ.- Մի անհանգստացի՛ր, Մի՛ջ: Ամեն ինչ լավ է, արի, նստիր: *(Նրան տանում ու նստեցնում է գահավորակի աջ եզրին:)*
- Միջ.- Կներեք այսքան հիմար լինելուս համար:
- Էդուարդ.- Հասկանալի է:
- Միջ.- Ես թաշկինակս կորցրել եմ:

Լեդի Անգրթելը լցնում է չորս գավաթ սուրճ:

- Էդուարդ.- *(իր թաշկինակը Միջին տալով):* Ահա, վերցրու իմը:
- Միջ.- Շնորհակալ եմ:
- Էդուարդ.- *(մոտենալով կլոր սեղանին):* Եվ սուրճ խմիր:
- Միջ.- Ո՛չ, ես ոչինչ չեմ ուզում:
- Էդուարդ.- Ո՛չ, խմիր: *(Միջին մի գավաթ սուրճ է տալիս:)* Վերցրու և խմիր, քեզ ավելի լավ կզգաս:
- Լեդի Անգրթել.- Հենրիեթա՛, սո՞ւրճ:
- Հենրիեթա.- Այո՛, շնորհակալ եմ: Մեզանից մեկը չգնա՞ Գերդայի մոտ:

Էդուարդը մի գավաթ սուրճ է վերցնում ու տալիս Հենրիեթային:

- Լեդի Անգրթել.- Միրելի մանկի՛կս, մարդ չգիտի ինչ մտածի:
- Էդուարդը մոտենում է կլոր սեղանին, մի գավաթ սուրճ է վերցնում իր համար ու շարժվում՝ Կ:**

Նույնիսկ չգիտես, թե դա ինչպես կազդի. ի՞նչ կզգա մեկը, եթե հենց նոր սպանել է իր ամուսնուն: Պարզապես, չգիտես...
Հենրիեթա.- Չե՞ք կարծում՝ շատ հապճեպ է մեր այն ենթադրությունը, թե Գերդան է սպանել իր ամուսնուն:

Ճնշիչ լռություն: Էդուարդը անհանգիստ նայում է Լեդի Անգրթեյին: Լեդի Անգրթեյը քննախույզ նայում է Հենրիեթային՝ աշխատելով նրա ուշադրությունը գրավել ինչ-որ բանի վրա:

Էդուարդ.- Դե՛, մենք նրան գտանք կանգնած ամուսնու մարմնի մոտ՝ ատրճանակը ձեռքին: Ենթադրում եմ՝ ոչ մի կասկած չի մնում այլևս:
Հենրիեթա.- Մենք դեռ նրա բերանից ոչինչ չենք լսել:
Էդուարդ.- Ինձ թվում է՝ դա ինքնին մի փաստ է:

Հենրիեթան գնում է պատշգամբ:

Լեդի Անգրթեյ.- Հիշեցնեմ, որ նա շատ բորբոքված էր: Ջոնը ամեն բան անում էր չափից ավել բացարձակ կերպով: Վերջիվերջո, ամեն բան իր ձևն ունի, նպատակս՝ անհավատարմությունը...

Գերդան ներս է մտնում՝ Ձ: Նա շատ թույլ է ու զգզված: Ձեռքին իր կաշվե պայուսակն է:

Գերդա.- *(նայում է շուրջը ներողամտություն հայցող հայացքով):* Ես... Ես սրանից ավել պառկել չկարողացա: Շատ անհանգիստ եմ զգում ինձ:
Լեդի Անգրթեյ.- *(բարձրանալով ու մոտենալով Գերդային):* Իհարկե, իհարկե: *(Նրան տանում է ու նստեցնում գահավորակի ձախ եզրին):* Արի՛, արի՛ նստիր այստեղ, սիրելի՛ս: *(Գնում է գահավորակի վերի կողմը):* Մի՛ջ, այն փոքր բարձր...

Միջը ոտքի է կանգնում, գավաթը դնում է գրասեսեղանի վրա ու վերցնում աթոռի վրայի բարձիկն ու տալիս Լեդի Անգրթեյին:

Լեդի Անգրթեյ.- *(Գերդային):* Ոտքերդ դի՛ր վեր: *(Բարձիկը դնում է Գերդայի գլխի տակ):* Մենք հենց նոր ուզում էինք սենդվիչ ուտել: Դու չե՞ս ցանկանա:
Գերդա.- Ո՛չ, ո՛չ: Շնորհակալ եմ: Ես... Ես նոր եմ սկսում հասկանալ դա... Ի վիճակի չեի զգալ... չեմ հավատում, որ Ջոնը մեռած է, որ այլևս չեմ տեսնի նրան... ո՞վ կարող էր հավանաբար սպանել նրան:

բոլորը նայում են նրան շփոթված: Սըր Հենրին ներս է մտնում՝ Ձ: Նրան հետևում է տեսուչ Քոլքրեհունը, որը խոհուն ու հավասարկշռված անձնավորություն է՝ օժտված արտաքին հմայքով, հումորի զգացումով ու առինքնող անհատականությամբ: Նրա դերը չալիսի խաղացվի որպես՝ կոմեդիա: Սըր Հենրիի ձեռքին լցված ծխամորձ կա:

Սըր Հենրի.- *(մոտենալով բուխարիկին):* Տեսուչ Քոլքրեհունը ցանկանում է խոսել Գերդայի հետ, սիրելի՛ս: *(Շրջվում է):* Կարո՞ղ ես նրան վերև տանել ու... *(Նկատում է Գերդային ու խոսքը ընդհատում):*

Լեդի Անգրթել.- Մա Միսիս Քրիսթոն է, Սր. Քոլքրիուն:

տեսուչը մոտենում է գահավորակին՝ Ձ:

Գերդա.- *(ներվայնացած):* Այո՛... Այո՛... Ես... Դուք ցանկանում եք խոսել ինձ հետ Ջոնի մահվա՞ն ն կապակցությամբ:

Տեսուչ.- Չեմ ուզում ձեզ վիշտ պատճառել, Միսի՛ս Քրիսթոն, բայց կուզեի մի քանի հարցեր տալ: Դուք պարտադրված չեք պատասխանել դրանց մինչև այնքան ժամանակ, երբ պատրաստ լինեք: Դուք նույնպես իրավասու եք, նախքան որևէ բան ասելը, օգտվել ձեր փաստաբանի ներկայությունից:

Սըր Հենրի.- Ես էլ դա եմ խորհուրդ տալիս, Գերդա՛ :

Գերդա.- *(ոտքերը ցած դնելով ու ուղիղ նստելով):* Փաստաբա՞ն: Բայց ինչո՞ւ փաստաբան, փաստաբանը ի՞նչ կարող է իմանալ Ջոնի մահվան մասին:

Տեսուչ.- Ձեզ որևէ ծանուցում հանձնելուց առաջ...

Գերդա.- Ես կպատմեմ ձեզ: Ամեն ինչ անչափ արտասովոր է՝ վատ երազի նման: Ես նույնիսկ չեմ կարողանում լաց լինել: Ուղղակի ոչինչ չեմ զգում...

Սըր Հենրի.- Դա շոկ է:

Գերդա.- Գիտեք, ամեն բան կատարվեց շատ հանկարծակի: Ես վերադարձել էի տուն և այն պահին, երբ իջնում էի աստիճաններով իմ կաշվե պայուսակը վերցնելու, լսեցի կրակոցի ձայն... ներս մտա այստեղ ու տեսա... Ջոնին ընկած գետնին՝ գալարվելիս... և արյուն... արյուն...

Միջը մոտենում է աթոռին՝ Ա և նստում:

Տեսուչ.- Դա ո՞ր ժամին էր, Միսի՛ս Քրիսթոն:

Լեդի Անգրթելը և Միջը հայացքներ են փոխանակում:

Գերդա.- Չգիտեմ, թերևս տասներկուսն էր կամ տասներկուսն անց կեսը:

Տեսուչ.- Նախքան ցած իջնելը, դուք որտե՞ղ էիք:

Գերդա.- Իմ սենյակում:

Տեսուչ.- Դուք նո՞ր էիք տեղ հասել:

Գերդա.- Ո՛չ, մոտ երեք քառորդ առաջ: Ես դրսում էի և Սըր Հենրին բարեացակամորեն ինձ կրակել էր սովորեցնում: Մակայն ես վատ էի կրակում ու այնպես էլ չկարողացա խփել թիրախին:

Լեդի Անգրթելը և Միջը հայացքներ են փոխանակում:

Հետո վարժության նպատակով մի քիչ քայլեցի ու վերադարձա տուն՝ վերցնելու կաշվե պայուսակս, բարձրացա վերև, ցած իջա... Հետո... ասացի ձեզ... կրակոցի ձայն լսեցի ու ներս մտա այստեղ... ուր Ջոնին գտա մեռած:

Հենրիեթա.- *(աստիճաններից՝ Կ, ցած իջնելով):* Մեռնելիս: *(Մոտենում է խմիչքի սեղանին, ցած դնում սուրճի գավաթը, մի սիգարետ է վերցնում սեղանին դրված տուփից ու վառում ձեռքի դեռես վառ սիգարետով:)*

բոլորը նայում են Հենրիեթային:

Գերդա.- Ինձ թվաց՝ նա մեռած է: Արյուն կար... և ատրճանակը... ես դա վերցրի...
Տեսուչ.- Ինչո՞ւ դա վերցրիք, Միսի՛ս Քրիսթոս:

լարված կարճ դադար. բոլորը նայում են տեսուչին:

Գերդա.- Չգիտեմ:
Տեսուչ.- Դուք դրան չպիտի ձեռք տայիք, գիտե՞ք:
Գերդա.- Չպիտի ձե՞ռք տայի...

Միջը սիգարեթ է հանում իր պայուսակից:

Տեսուչ.- Հետո ի՞նչ պատահեց:
Գերդա.- Բոլորը ներս վազեցին: Ես ասացի՝ Ջոնը մեռած է, սպանել են Ջոնին: Բայց
ն՞վ կարող էր սպանած լինել նրան: Հավանորեն՝ ո՞վ կկամենար սպանել
նրան:

**Մըր Հենրին հանկարծ լուցկին չրթկացնում է ու վառում իր ծխամորճը: Էդուարդը
մի պահ նայում է նրան:**

Ջոնը տղամարդկանցից լավագույնն էր, անչափ լավ, անչափ բարի: Նա ա-
նում էր ձեռքից եկածը բոլորի համար: Նա գոհաբերում էր իրեն: Կարծո՞ւմ
եք՝ ինչու էին իր հիվանդները պաշտում նրան: Դա ինչ-որ պատահականու-
թյուն էր, այո՛, համոզված եմ...

Միջ.- Դա չէ՞ր կարող ինքնասպանություն լինել:

Միջը պրպտում է պայուսակը վառիչը գտնելու համար:

Տեսուչ.- Ո՛չ: *(Անցնում է գահավորակի առջևով ու մոտենում՝ Ա:)* Գնդակը արձակվել
է ամենաքիչը չորս ոտք հեռավորությունից:
Գերդա.- Այնուամենայնիվ, դա պատահականություն է եղել:
Տեսուչ.- Դա պատահականություն չէր, Միսի՛ս Քրիսթոս: *(Գրպանից հանում է իր վա-
ռիչն ու վառում Միջի սիգարեթը:)* Ձեր միջև որևէ անհամաձայնություն չը-
կա ը:
Գերդա.- Ջոնի և ի՞մ միջև: Ո՛չ:

Միջը վեր է կենում և գահավորակի վերնից մոտենում աստիճաններին՝ Կ:

Տեսուչ.- Դրանում համոզվա՞ծ եք:
Գերդա.- Նա մի քիչ սրտնեղվել էր ճանապարհին՝ այստեղ գալու ժամանակ, որով-
հետև ես շատ վատ էի փոխում շարժիչը: Ես...ես ճիշտ ձևը չգիտեմ. ամեն
անգամ նրա հետ մեքենայում միասին լինելիս ամեն բան սխալ եմ անում,
նյարդայնանում եմ:

Տեսուչ.- Չունեի՞ք ավելի լուրջ անհամաձայնություն, ասենք՝ գժտություն:
Գերդա.- Գժտությո՞ւն, իմ ու Ջոնի միջև: Ո՛չ, Տեսուչ, ո՛չ: Ջոնը և ես երբեք չենք վիճել:
Նա շատ լավ ու բարի էր: *(Սկսում է արտասվել:)* Ես նրան այլևս չեմ տեսնի:

Միջը մոտենում է գահավորակին՝ Ջ:

Լեդի Անգրթել.- } {{(Գերդային): Անգի'ս: (Շրջվելով դեպի Միջը:)} Մի'ջ, սիրելի'ս:
 Միջ.- } {{(Մոտենալով Գերդային ու օգնելով կանգնել): Ես նրան վերև
 } միասին {կտանեմ, Լյուսի':
 Տեսուչ.- } {Սա ամենն էր, Միսի'ս Քրիսթո:
 Գերդա.- } {Խնդրում եմ, թույլ տվեք սենյակս վերադառնալ...

Տեսուչը գլխով հավանություն է տալիս և շարժվում՝ Ա:

Միջ.- Արի', հանգստացի'ր: Քեզ ավելի լավ կզգաս:
 Լեդի Անգրթել.- Միմընդզին ասա... Տաք ջրի շիջ...

Միջը ուղեկցում է Գերդային դեպի դուռը՝ Ձ: Դուրս են գալիս միասին:

(Տեսուչին): Նա պաշտում էր Ջոնին:
 Տեսուչ.- Այո: (Գնում է ցած՝ Ձ): Այժմ ես կուզեի հերթականորեն խոսել ձեզ հետ: Լեդի'
 Անգրթել, չէի՞ք առարկի...
 Լեդի Անգրթել.- (դեմքը պայծառանալով): Ո՛չ, իհարկե ոչ, Տեսու՛չ: Ես ցանկանում եմ օգնել
 ձեզ՝ ինչով կարող եմ: (Հենվում է գահավորակին՝ Ձ:): Կարծում եմ բոլորս էլ
 պիտի համագործակցենք:
 Տեսուչ.- Մենք էլ անշուշտ այդ ենք կամենում:
 Լեդի Անգրթել.- (խորհրդավոր): Հիմնականում, սա իմ կյանքում առաջին սպանությունն էր:
 Տեսուչ.- Իսկապե՞ս:
 Լեդի Անգրթել.- Այո', իսկ ձեզ համար, իհարկե, դա հին պատմություն է: Չե՞՞ որ դուք
 անդադար սլանում եք այս ու այն կողմ, ձերբակալում մարդկանց, ուղարկում
 թոչնո՞ղ ջոկատներ:
 Տեսուչ.- Մենք այնքան էլ շարժունակ չենք, ինչպես թվում է առաջին հայացքից:
 Սըր Հենրի.- Կինս շատ է տարված կինոնկարներով, Տեսու՛չ:
 Տեսուչ.- Իրական կյանքում դա շատ ավելի տաղտկալի է, քան պատահա՞ծի վրա: (Լեդի/
 Անգրթելի առջևից անցնում է՝ ՁԿ:): Մենք ավելի շուտ ձանձրացուցիչ հար-
 ցերի տարափ ենք տեղում մարդկանց գլխին:
 Լեդի Անգրթել.- (փայլող դեմքով): Եվ այժմ դուք ցանկանում եք ինձ մեծ թվով հարցեր տալ:
 Շատ լավ, ես կանեմ ամեն բան ձեզ օգնելու համար մինչև այնքան ժամանակ,
 երբ դուք դադարեք հարցնել՝ այս ժամին ի՞նչ պատահեց, այն ժամին ո՞ր էի
 կամ ի՞նչ էի անում: Որովհետև պարզապես դրանք ես չեմ հիշում... Նույնիսկ,
 երբ փոքր էի...
 Սըր Հենրի.- Տեսուչին մի վիատեցրու այդ աստիճան, սիրելի'ս: (Մոտենում է դռան՝ Ձ ու
 բացում այն): Կարո՞ղ եմ ես էլ ընկերակցել ձեզ:
 Տեսուչ.- Անչափ ուրախ կլինեմ, Սը՛ր Հենրի:
 Սըր Հենրի.- Գիտե՞ք, երբեմն դժվար է ընկալել կնոջս դատողությունները. ես կարող եմ
 հանդես գալ մեկնաբանողի դերում:

Լեդի Անգրթելը անցնում է ու դուրս գալիս՝ Ձ: Տեսուչը և Սըր Հենրին դուրս են գալիս նրա ետևից: Հենրիեթան գնում է պատշգամբ՝ Կ և նայում պատուհանից դուրս: Էդուարդը լուռ դիտում է նրան: Հենրիեթան ոչ մի ուշադրություն չի դարձնում նրա վրա:

Էդուարդ.- Եղանակը տաք չէ երեկվա պես:
 Հենրիետա.- Չէ՛, չէ՛ սառն է. աշնանային ցուրտ:
 Էդուարդ.- Լավ է ներս գաս, կմրսես:
 Հենրիետա.- Մտածում եմ՝ գնամ քայլեմ:
 Էդուարդ.- Ես՝ ոչ:
 Հենրիետա.- Ինչո՞ւ:
 Էդուարդ.- *(մտտենալով բուխարիկին և դարավանդակին դնելով սուրճի գավաթն ու պնակը):* Դե՛, մի կողմից՝ շուտով անձրև կգա: Իսկ մյուս կողմից, նրանք դա... տարօրինակ կհամարեն:
 Հենրիետա.- Կարծում ես ինչ-որ ոստիկան քա՞րշ կգա իմ հետևից անտառում:
 Էդուարդ.- Իրոք, չգիտեմ: Ո՞վ է իմանում՝ նրանք ինչ են մտածում, թեև ամեն բան շատ բացահայտ է թվում:
 Հենրիետա.- Նկատի՞ ունես Գերդային:
 Էդուարդ.- Ի վերջո, բացի նրանից՝ ուրիշ էլ ո՞ւմ:
 Հենրիետա.- *(մտտենալով բազկաթոռին՝ ԿՁ)* Բացի նրանից ուրիշ էլ ո՞վ շարժանիթ ուներ սպանելու Ջոն Քրիսթոֆին: Դա՞՞ էս ուզում ասել:
 Էդուարդ.- Այո՛:
 Հենրիետա.- Գերդան շարժանի թ ուներ:
 Էդուարդ.- Գուցե նա բացահայտել էր նոր բաներ... վերջապես, անցյալ գիշեր... (Լռում է):
 Հենրիետա.- Ջոնը և Վերոնիկա Քրեյլը. դա՞՞ նկատի ունես:
 Էդուարդ.- *(քիչ շփոթված):* Դե՛, այո՛: *(Անձկալից:)* Ջոնը ասես խելագարված լիներ...
 Հենրիետա.- Նա այդպիսին էր: Իր պատանեկան տարիքի չբացահայտված կրքերը բան-տարկված մնալով սառնության կաղապարի մեջ՝ տարիներից հետո հանկարծ դուրս էին ժայթքել: *(Մտտենում է կլոր սեղանին ու սիգարետը սեղմում այնտեղ դրված մոխրամանի մեջ:)* Նա բացարձակ խենթ էր:
 Էդուարդ.- Վերոնիկան ուշագրավ տեսքով կին է՝ առանձնահատուկ իր տեսակի մեջ, բայց էս պատճառ չեմ տեսնում հանուն նրա գլուխ կորցնելու:
 Հենրիետա.- Չեմ կարծում այս առավոտյան Ջոնը գլուխը կորցրած լիներ:
 Էդուարդ.- *(շրջվելով ու նայելով կրակարանին):* Շատ անհամ պատմություն է:
 Հենրիետա.- Այո: *(Անցնում է գահավորակի աջ կողմը:)* Ինչևէ, էս գնում եմ քայլելու:
 Էդուարդ.- Այդ դեպքում էս էլ կգամ քեզ հետ:
 Հենրիետա.- Կնախընտրեի մենակ մնալ:
 Էդուարդ.- *(գնալով գահավորակի առջև):* Գալիս եմ քեզ հետ:
 Հենրիետա.- Դու չե՞ս հասկանում: Ուզում եմ մենակ մնալ իմ մեռածի հետ...
 Էդուարդ.- Կներես: *(դադար:)* Հենրիետա՛, էս դեռ քեզ ոչինչ չեմ ասել... Թերևս, դու էլ չէիր ցանկանա լսել... բայց ինքդ էլ գիտես, թե էս որքան ցավում եմ:
 Հենրիետա.- Ցավո՞ւմ ես: *(Հեզնական ժպիտով:)* Որ Ջոն Քրիսթոֆն էլ չկա՞...
 Էդուարդ.- *(շփոթված):* Ուզում եմ ասել... ցավում եմ քեզ համար: Գիտեմ, թե դա որքան մեծ հարված էր:
 Հենրիետա.- *(դառնություն):* Հարվա՞ծ: Օ՛հ... Բայց էս ամուր եմ, Էդուա՛րդ: Կդիմանամ հարվածին: Դա քեզ չցնցե՞ց: *(Գնում է գահավորակի ետևը՝ Զ:)* Ենթադրում եմ՝ դու ինչ զգացիր, երբ նրան տեսար հատակին փռված. կարծում եմ՝ ուրախություն: *(Մեղադրական տոնով:)* Դու ուրա՞խ էիր, չէ՞:
 Էդուարդ.- Իհարկե ոչ: Ոչ մի ընդհանուր բան չկար իմ ու Քրիսթոֆի մեջ, բայց...
 Հենրիետա.- Դուք ինձ ունեիք ընդհանուր: Դուք երկուսդ էլ սիրում էիք ինձ: Թեև դա ոչ մի կապ չէր ստեղծում ձեր երկուսի միջև, ճիշտ հակառակը:

- Էդուարդ.- Հենրիեթա՛, այդքան հեգնական մի՛ խոսիր: Ես իսկապես զգում եմ քո կորստի չափը, քո վիշտը:
- Հենրիեթա.- *(Թախծոտ):* Դա վի՞շտ է...
- Էդուարդ.- Ի՞նչ ես ուզում ասել:
- Հենրիեթա.- *(ինքն իրեն):* Շատ արագ, *(մտտենում է բուխարիկին)* դա անչափ արագ է կատարվում: Այս վայրկյանին ապրում ես, շնչում ես... և... հաջորդ վայրկյանին... մահ... վախճան և դատարկություն: Օ՛հ, այդ դատարկությունը: Իսկ այստեղ մենք սենդվիչ ենք ուտում, սուրճ ենք խմում և մեզ կոչում ենք՝ ողջ: Եվ Ջոնը, որ մեզանից յուրաքանչյուրից շատ ավելի ողջ էր, հիմա մեռած է: *(Անցնում է կենտրոն:)* Գիտես՝ այդ բառն եմ ասում ինքս ինձ քանիերորդ անգամ՝ մեռած, մեռած, մեռած, մեռած, մեռած...
- Էդուարդ.- *(մտտենալով Հենրիեթային և գրկելով նրա ուսերը):* Հենրիեթա՛, Հենրիեթա՛, բավական է, բավական է:
- Հենրիեթա.- *(վերագտնելով ինքնատիրապետումը. մեղմ):* Դու չէի՞ր սպասում, չէ՞, որ ես ինձ այսպես կզգամ: Ի՞նչ էիր կարծում, կարծո՞ւմ էիր, որ մեկ ձեռքիս թաշկինակ, իսկ մյուսը՝ քո ափի մեջ կնստեի ու լուռ կարտասվեի՞... Որ դա ուժգնորեն կցնցե՞ր ինձ, բայց հետո կսկսեի հաղթահարե՞լ...

Էդուարդը ձեռքերը հետ է քաշում:

- ...Եվ դու հոգատարությամբ կհանգստացնեի՞ր ինձ: Դու շատ լավն ես, Էդուարդ, *(անցնում է նրա մոտից ու նստում գահավորակի ձախ եզրին.)* Բայց դա բավական չէ:
- Էդուարդ.- *(խորապես նեղված):* Այո՛, դա հաճախ է ինձ ասվել:
- Հենրիեթա.- Չե՛ս տեսնում, այսօր ինչ դրություն է տիրում այստեղ: Բացի ինձնից ու Գերդայից ոչ ոք չի ազդվել Ջոնի մահից: Դու ուրախ ես, Միջն անհանգիստ է, Հենրին՝ մտահոգ: Իսկ Լյուսին փափկանկատորեն հաճույք է ստանում այս բոլորից: Մամուլի էջերից «աշխարհի նորությունները» իջել են իրական կյանքի մեջ: Կարո՞ղ ես զգալ, թե ինչպիսի ֆանտաստիկ մղձավանջ է տիրում այստեղ:
- Էդուարդ.- *(Գնալով վեր՝ Կ):* Այո՛, զգում եմ:
- Հենրիեթա.- Այս պահին ոչ մի բան իրական չի թվում ինձ բացի Ջոնից: Գիտեմ՝ գազանի պես եմ վարվում քեզ հետ, Էդուարդ, բայց ինձնից անկախ է ստացվում: Չեմ կարողանում համակերպվել այն մտքի հետ, որ այնքան առույգ ու կենսախիղճ Ջոնը մեռած է... *(Լռում է:)*
- Էդուարդ.- Եվ որ... Ես... *(Շրջվում է գահավորակի կողմը),* կիսով չափ մեռածս, դեռ կենդանի եմ...
- Հենրիեթա.- *(արագ բարձրանալով ու շուռ գալով Էդուարդի կողմը):* Ես դա չէի ուզում ասել, Էդուարդ:
- Էդուարդ.- Իսկ ես կարծում եմ, հենց դա էիր ուզում ասել, Հենրիեթա՛:

Հենրիեթան ձեռքը անհույս թափ է տալիս, շրջվում է ու դուրս գալիս՝ Ա, պատուհանը բաց թողնելով: Էդուարդը նայում է նրա հետևից, ասես, երազի մեջ: Միջը ներս է մտնում՝ Չ:

- Միջ.- Վո՛ւյյ, էստեղ ցուրտ է:
- Էդուարդ.- *(ակամայից):* Այո՛:

Միջ.- Ո՞ւր են մյուսները:
 Էդուարդ.- Չգիտեմ:
 Միջ.- *(գնալով վեր 'Կ):* Ինչ-որ բան սխալ է այստեղ: *(մոտենում է ֆրանսիական պատուհաններին և փակում բաց պատուհանը՝ Ա:)* Պատուհանը բա՞ց մնա, Էդուա՛րդ: *(Շոշափում է նրա ձեռքը:)* Դու ստոցակալել ես: *(Բռնում է ձեռքը ու նրան տանում բուխարիկի մոտ:)* Եկ այստեղ, ես հիմա բուխարիկը կվառեմ: *(Դարավանդակի վրայից վերցնում է լուցկիների տուփը, չոքում է ու կրակ է վառում:)*

Էդուարդ.- *(շարժվելով դեպի բազկաթոռը՝ ԿՁ. Խորապես ազդված):* Դու սիրելի մանկիկ ես, Մի՛ջ: *(Նստում է:)*

Միջ.- Չէ՛, ես մանկիկ չեմ: Արդյոք դեռևս կա՞ն Էյնզուիքի եղբվհների կոները:
 Էդուարդ.- Օ՛հ, այո՛, միշտ դրանցով լցված զամբյուղ կա դրված բուխարիկի կողքին:
 Միջ.- Ցանկալի՛ Էյնզուիք:
 Էդուարդ.- *(նայելով ֆրանսիական պատուհանների կողմը՝ Ա):* Մարդ չպիտի այնտեղ մենակ ապրի:

Միջ.- Հենրիեթան դո՞ւրս գնաց:
 Էդուարդ.- Այո՛:
 Միջ.- Ինչքան անմիտ է վարվել, անձրևում է:
 Էդուարդ.- Նա անհանգիստ է: Տեղյա՞կ էիր, որ նա և Ջոն Քրիսթոն...
 Միջ.- Իրար հետ հարաբերություն ունեին: *(Բարձրանում և լուցկիները դնում է դարավանդակի վրա:)* Այո՛, իհարկե:

Էդուարդ.- Բոլորը տեղյակ էին, կարծում եմ:
 Միջ.- *(շուռ գալով):* Բոլորը, բացի Գերդայից:
 Էդուարդ.- Գրողը տանի նրան...
 Միջ.- *(մոտենալով Էդուարդին և ծնկելով նրա ձախ կողմում):* Թանկագի՛նս, պետք չէ: *(Բռնում է նրա թևից:)*

Էդուարդ.- Նունիսկ մեռած՛ նա ձգում է Հենրիեթային իր կողմը...
 Միջ.- Պետք չէ, Էդուա՛րդ... Խնդրում եմ:
 Էդուարդ.- Նա շատ է փոխվել այն օրերից հետո, երբ գտնվում էր Էյնզուիքում:
 Միջ.- Մենք բոլորս էլ փոխվել ենք:
 Էդուարդ.- Ես չեմ փոխվել, ես նույնն եմ մնացել:
 Միջ.- Իսկ ե՞ս:
 Էդուարդ.- Դու չես փոխվել:
 Միջ.- *(նրա թևը բաց թողնելով ու մի կողմ նայելով. դժգոհ):* Որտեղի՞ց գիտես: Դու երբեք ինձ չես նայում:

Էդուարդը շժմած՝ ձախ ձեռքով բռնում է Միջի դեմքը:

Ես կի՛ն եմ, Էդուա՛րդ:

Գաջընը ներս է մտնում՝ Զ: Միջը կանգնում է:

Գաջըն.- Տեսուչը ցանկանում է ձեզ տեսնել ճաշասենյակում, սը՛ր:
 Էդուարդ.- *(կանգնելով):* Օ՛հ, այո՛, անպայման:

դուրս է գալիս՝ Ձ: Գաջընը դուռը փակում է նրա հետևից: Միջը մոտենում է բազկաթոռի՝ ԿՁ աջ կողմին: Հետևյալ դիալոգի ընթացքին, Գաջընը վերցնում է մատուցարանը և դրա մեջ շարում սրճի գավաթներն ու պնակները:

- Միջ.- Միսիս Քրիսթոն դեռ հանգստանում է:
Գաջըն.- Որքան գիտեմ, այո՛, օրիո՛րդ: Դր. Մըրդաքը դեղահաստեր նշանակեց և Միմընդզին հանձնարարված է երկու ժամը մեկ՝ մեկը խմեցնել նրան:
Միջ.- Կարծում եք՝ հարմա՞ր է մեզանից մեկնումեկը բարձրանա նրա մոտ:
Գաջըն.- Կարծում եմ դա բոլորովին անհրաժեշտ չէ, օրիո՛րդ, Միմընդզը միանգամայն վստահելի է:
Միջ.- Ես էլ եմ համոզված:
Գաջըն.- *(շարժվելով դեպի դուռը՝ Ձ):* Շնորհակալ եմ, օրիո՛րդ, շնորհակալ եմ:

դուրս է գալիս՝ Ձ, իր հետ տանելով մատուցարանն ու սրճի գավաթները: Միջը փակում է դուռը նրա հետևից: Հենրիեթան հայտվում է պատշգամբում՝ Ձ և թակում է փակ պատուհանը: Միջը վազում է՝ ներս թողնելով Հենրիեթային և նրա ետևից փակում է պատուհանը:

- Միջ.- Ինձ հանկարծակի բերիր: *(Գլխի շարժումով ցույց է տալիս աջ կողմը):* Կարծում էի այն կողմից կգաս:
Հենրիեթա.- *(մոտենալով բուխարիկին):* Ես անդադար պատվում էի տան շուրջը: Ինչ լավ է, որ կրակ ես վառել:
Միջ.- *(մոտենալով գահավորակին՝ Ձ. նախատական):* Այդ ի՞նչ օրի էիր գցել Էդուարդին:
Հենրիեթա.- *(անտարբեր):* Էդուարդի՞ն:
Միջ.- Այո՛: Քիչ առաջ, երբ ներս եկա, նա ասես երազի մեջ էր՝ անչափ մռայլ ու սառը:
Հենրիեթա.- *(շրջվելով):* Մի՛ջ... Մի՛ջ, եթե այդքան մտահոգ ես Էդուարդի համար, ինչո՞ւ չես հոգում նրա մասին:
Միջ.- Հոգա՞մ նրա մասին. ի՞նչ ես ուզում ասել:
Հենրիեթա.- *(անհամբերությամբ):* Ես ինչ իմանամ: Կանգնիր սեղանի վրա ու գոռա: Գրավի՛ր նրա ուշադրությունը: Մի՞թե չգիտես, որ Էդուարդի նման մեկին դա է հարկավոր:
Միջ.- *(նստելով գահավորակի ձախ եզրին):* Չեմ հավատում, որ Էդուարդը բացի քեզանից հետաքրքրվի ուրիշ մեկով:
Հենրիեթա.- Դա իր անխելքության հետևանքն է:
Միջ.- Թերևս, բայց այդպես է:
Հենրիեթա.- Նա մինչևիսկ չգիտի, թե ես որքան եմ փոխվել և շարունակում է պահպանել անցյալում իմ մասին ունեցած իր համարումը: Այժմ... Ես Էդուարդին տանել չեմ կարողանում:
Միջ.- Դու չես կարող ասել Էդուարդին: Ոչ ոք չի կարող ասել Էդուարդին:
Հենրիեթա.- Ես կարող եմ:
Միջ.- Բայց ինչո՞ւ:
Հենրիեթա.- Որովհետև նա անընդհատ ինձ հիշեցնում է մի շարք բաներ, որոնք կնախընտրեի մոռանալ:
Միջ.- Ի՞նչ բաներ:
Հենրիեթա.- Էյնզուիքը:

Միջ.- Էյնգուի քր: Դու փորձում ես մոռանա՞լ Էյնգուիքը:
Հենրիեթա.- Այո՛, այո՛, ես երջանիկ էի Էյնգուիքում, *(շարժվում է դեպի ԿԶ)* չե՞ս հասկա-
նում, չեմ դիմանում, երբ հենց այս իրավիճակում ինձ հիշեցնում են անցյա-
լում ունեցածու երջանիկ պահերը:

ներս է մտնում Լեդի Անգրթելը՝ Զ: Միջը կանգնում է:

(կոպիտ): Ես այլևս Էյնգուիք չեմ վերադառնա:

Հենրիեթան մոտենում է դռան՝ Զ, և անտեսելով Լեդի Անգրթելին և դուրս է գալիս:

Լեդի Անգրթել.- Նա ի՞նչ ասաց:
Միջ.- *(շարժվելով՝ Ա)* Ասաց, որ այլևս Էյնգուիք չի վերադառնա:
Լեդի Անգրթել.- *(դուռը փակելով):* Օհ, կարծում եմ կվերադառնա, սիրելի՛ս:
Միջ.- Ուզում ես ասել, նա... կամուսնանա՞ Էդուարդի հետ:
Լեդի Անգրթել.- Այո՛: *(Մոտենում է կլոր սեղանին, վերցնում է շոկոլադի տուփը և անցնում Միջի ձախ կողմը:)* Կարծում եմ: *(Զվարթ:)* Հիմա, երբ Ձոն Քրիսթոն խաղից դուրս է: Օ՛հ, այո՛, նա, կարծում եմ, կամուսնանա Էդուարդի հետ: Ամեն ինչ լավ է դասավորվում, չէ՞:
Միջ.- Թերևս Ձոն Քրիսթոն այդպես չէր մտածի:
Լեդի Անգրթել.- Ո՛չ: Դե՛, ես նրան նկատի չունեի:

**Տեսուչը ներս է մտնում՝ Զ: Նրան ընկերակցում է ոստիկանական սերժանտ՝ Փեն-
նին: Սերժանտը քաղաքացիական հագուստով է: Ձեռքին հուշատետր կա, որը
ստեպ-ստեպ բացում է ու նշումներ կատարում:**

Տեսուչ.- Օրիորդ Անգրթելը մոտերքո՞ւմ է:
Միջ.- Նա գնաց վերև, կարծում եմ, հագուստները փոխելու: Կանչե՞մ նրան:
Լեդի Անգրթել.- *(անցնելով՝ Զ):* Չէ, չէ, ես կգնամ: Ուզում եմ իմանալ Գերդան ինչպե՞ս է: *(Շո-
կոլադ է առաջարկում Տեսուչին:)* Քաղցրեղե՞ն, փափուկ միջուկով:
Տեսուչ.- Ոչ, շնորհակալ եմ:
Լեդի Անգրթել.- *(քաղցրեղեն է առաջարկում սերժանտին):* Կա և դոնդողովը:
Սերժանտ.- Ոչ, շնորհակալ եմ:

Լեդի Անգրթելը դուրս է գալիս՝ Զ: Սերժանտը փակում է դուռը:

Տեսուչ.- Դուք օրիորդ Հարվին եք, այո՞:
Միջ.- Այո՛, Մերջըրի Հարվի:
Տեսուչ.- Դուք այստեղ չե՞ք ապրում: *(Յույց տալով գահավորակը:)* Նստեցե՛ք:
Միջ.- Ո՛չ, ես բնակվում եմ Սթրեթմեր Մանշնզի համար 27-ում, դաբլյու... երկու:
Տեսուչ.- Իսկ դուք ազգակա՞ն եք:
Միջ.- *(նստելով գահավորակի աջ եզրին):* Մայրս Լեդի Անգրթելի զարմուհին էր:
Տեսուչ.- Դուք որտե՞ղ էիք, երբ հնչեց կրակոցը:
Միջ.- Պարտեզում:
Տեսուչ.- Ի՞նչ է, դուք բոլորդ ցրվել էիք ամեն մեկդ մի կո՞ղմ: *(Անցնելով գահավորակի
հետևից Ա կողմը:)* Լեդի Անգրթելը գալիս էր եղել ազարակից: Մը. Անգրթելը՝

անտառից: Դուք՝ պարտեզից: Տիկ. Քրիսթոն՝ ննջասենյակից: Սըր Հենրին՝ թիրախների ծառուղուց: Իսկ օրիորդ Հենրիեթա՞ն:

- Միջ.- Նա էլ պարտեզում էր, ինչ-որ տեղ:
- Տեսուչ.- *(անցնելով գահավորակի հետևից՝ Ձ կողմը):* Դուք բոլորդ էլ հաջողությամբ տիրացել եք բոլոր ուղղություններին: Իսկ այժմ, Միս Հարվի, կուզեի հանգամանորեն ինձ նկարագրեք, ի՞նչ տեսաք, երբ ներս մտաք այստեղ:
- Միջ.- *(ցույց տալով՝ ՁԿ):* Ջոն քրիսթոն պառկած էր այնտեղ: Արյուն կար... Միսիս Քրիսթոն կանգնած էր... ասորճանակը ձեռքին:
- Տեսուչ.- Եվ դուք եզրակացրիք, որ Միսիս Քրիսթոն է կրակել նրա վրա:
- Միջ.- Անկեղծ ասած՝ այո, այդպես մտածեցի:
- Տեսուչ.- Դուք երբևէ չկասկածեցիք:
- Միջ.- Ո՛չ, ոչ այդ պահին:
- Տեսուչ.- *(արագ):* Իսկ հիմա կասկածո՞ւմ եք: Ինչո՞ւ:
- Միջ.- Կարծում եմ, որովհետև հասկացա, թե ուղղակի շատ արագ եմ հանգել եզրակացության:
- Տեսուչ.- Սկզբում դուք ինչո՞ւ էիք այդքան վստահ, որ կրակողը նա է եղել:
- Միջ.- Որովհետև ասորճանակը նրա ձեռքում էր, կարծում եմ:
- Տեսուչ.- Բայց դուք պետք է նաև մտածեիք, որ նա կրակելու ինչ-որ շարժանքի պիտի ունենար: *(Քննախույզ նայում է Միջին:)*
- Միջ.- *(շփոթված):* Ես...
- Տեսուչ.- Ի՞նչ կասեք, Միսս Հարվի:
- Միջ.- Ես որևէ շարժանք չեմ տեսնում:
- Տեսուչ.- Այսինքն՝ որքան զիտեք, նրանք նվիրված ամուսիններ էին:
- Միջ.- Օ՛հ, այո՛:
- Տեսուչ.- Այդպես: *(Անցնում է գահավորակի առջևը՝ Ա:)* Շարունակենք: Ի՞նչ պատահեց հետո:
- Միջ.- Կարծում եմ... Այո՛: Սըր Հենրին մոտեցավ ու չոքեց նրա կողքին ու ասաց, որ նա դեռ չի մեռել: Կարգադրեց Գաջընին հեռախոսել բժշկին:
- Տեսուչ.- Գաջըն՞ն: Մպասավորը: Ուրեմն նա էլ կար:
- Միջ.- Այո՛, ներկա էր: Գաջընը գնաց դեպի հեռախոսը և ճիշտ այդ պահին Ջոն Քրիսթոն բացեց աչքերն ու աշխատեց ելնել: Հետո... հետո նա մեռավ: Մուկալի էր:
- Տեսուչ.- Մա՞ էր բոլորը:
- Միջ.- Այո՛:
- Տեսուչ.- *(շարժվելով՝ Ա):* Նա ոչինչ չասա՞ց մեռնելուց առաջ:
- Միջ.- Կարծում եմ ասաց՝ «Հենրիեթա»:
- Տեսուչ.- *(շուռ գալով):* Ասաց՝ «Հենրիեթա»:
- Միջ.- Նա... *(թելադրողական):* Հենրիեթան ճիշտ նրա դիմացն էր, երբ նա բացեց աչքերը: *(սպասողական նայում է տեսուչին՝ բացատրություն տալու՝ պահանջվելու դեպքում):*
- Տեսուչ.- Այդպե՛ս: Առայժմ, այսքան: Շնորհակալ եմ, Միսս Հարվի:
- Միջ.- *(Բարձրանալով ու մոտենալով դռան՝ Ձ)* Դե՛, ավելի լավ է ես գնամ ու գտնեմ Հենրիեթային: Լեդի Անգրթելը այնքա՛ն ցրված է, նա առհասարակ մոռանում է իր անելիքը:

Սերժանտը բացում է դուռը, Միջը դուրս է գալիս Ձ և Սերժանտը դուռը փակում է նրա ետևից:

Տեսուչ.- *(մտքերի մեջ):* Լեդի Անգրթելը շատ ցրված է:
Սերժանտ.- *(գնալով՝ Կ):* Եթե ինձնից հարցնեք, նա ցնդած է:

Տեսուչը ձեռքը պարզում է և Սերժանտը իր հուշատետրը տալիս է նրան:

Տեսուչ.- Ջարմանալի է, զարմանալի է: *(Մատը թեթև զարկում է հուշատետրի էջերին:)*
Հետաքրքիր հակասություն՝ ըստ Լեդի Անգրթելի՝ *(կարդում է)* «Նա ինչ-որ
բան մրմնջաց նախքան մեռնելը, բայց ինքը չկարողացավ հասկանալ թե
ինչ»:

Սերժանտ.- Գուցե նա խուլ է:

Տեսուչ.- Ը՛, ո՛չ: Չեմ կարծում: Համաձայն Սըր Հենրիի ասության՝ Ջոն Քրիսթոն բարձր
ձայնով գոչել է՝ «Հենրիեթա»: Նույն բանն ասաց Միս Հարվին, երբ տվեցի այս
հարցը, իհարկե, ոչ առաջին անգամ: Էդուարդ Անգրթելը նշեց՝ Քրիսթոն
մեռավ առանց մի բառ ասելու: Գաջընը ստույգ չի հիշում: *(Գնում է գա-
հավորակի առջև:)* Նրանք բոլորն էլ մի բան գիտեն, Փեննի՛, բայց մեզ չեն
ասում: *(Նստում է գահավորակի աջ եզրին:)*

Սերժանտ.- Մենք դա դեռ կպարզենք: *(Մոտենում է Տեսուչին:)* Ենթադրո՞ւմ եք, թե իր
կինն է սպանել նրան: *(Տեսուչից վերցնում է իր հուշատետրը և գնում է
գահավորակի աջ կողմը:)*

Տեսուչ.- Կանայք հաճախ անառարկելի պատճառներ ունեն սպանելու իրենց ամու-
սիններին, որով՝ ակամայից սկսում ես կասկածել նրանց:

Սերժանտ.- Ակնհայտորեն բոլորն այն կարծիքի են, թե դա նրա կնոջ գործն է եղել:

Տեսուչ.- Կամ, գուցե, նրանք անխտիր **ցանկանում են** այդպես մտածել:

Սերժանտ.- Ուղղակի՞ իմաստով:

Տեսուչ.- Ինչ-որ ընտանեկան համերաշխության մթնոլորտ է տիրում այս տանը: Բոլորը
արյունակիցներ են: Այստեղ օտարը միայն Միսիս Քրիսթոն է: Այո՛, ես
կարծում եմ, նրանք կուրախանան, եթե վստահ լինեն, որ դա նրա գործն է ե-
ղել:

Սերժանտ.- *(շարժվելով գահավորակի վեր.ից՝ Կ):* Բայց դուք այնքան էլ վստահ չեք:

Տեսուչ.- Հիմնականում, նրանցից յուրաքանչյուրը կարող էր կրակել: Այս գործում ոչ
ոք ալիքի չունի: *(Բարձրանում ու կանգնում է գահավորակի աջ կողմում):*
Հնարավոր չէ ճշտել ոչ ժամանակը, ոչ էլ վայրը: Հենց միայն նայիր տան
մուտքերին ու ելքերին: Կարող ես կրակել պատշգամբից, շրջանցես դռակը
և՛ *(մատնանշելով պատուհանը՝ Ա)* ներս մտնել այս պատուհանից: Կամ,
մտածիր՝ դիմացի դռնից, միջանցքից, մյուս դռնից: Եվ եթե ասես, որ եկել ես
ազարակից կամ խոհանոցից կամ նշանառության ծառուղուց, ոչ ոք չի կա-
րող ճշտել հավակնությունդ: *(Նայում է պատուհանից՝ Ա դուրս:)* Տան շրջա-
կայքը պատված է թփերով ու աճած բուսականությամբ: Այստեղ կարող ես
ժամերով պահմտոցի խաղալ: *(Մոտենում է գահավորակի վերինին:)* Խնդրո
առարկա ատրճանակը մեկն է նրանցից, որոնք օգտագործվել են նշանա-
ռության փորձին: Բոլորն էլ կարող էին դա վերցնել ու բոլորն էլ ձեռք տված
լինել, թեև դրա վրայի ավելի պարզ մատնահետքերը պատկանում են Միսիս
Քրիսթոնին ու Հենրիեթա Անգրթելին: *(Գնում է գահավորակի ձախ կողմը:)*
Ամեն բան գալիս ու հանգում է այն հարցին, թե ինչ տեսակի անձնավորու-

- թյուն էր Ջոն Քրիսթոն: *(Գնում է գահավորակի առջև):* Եթե մեկի մասին իմանաս շատ բան, ապա կարող ես գուշակել, թե ով է սպանել նրան:
- Սերժանտ.- Մենք այդ տեղեկությունները կքաղենք Լոնդոնում, Հարլի Սթրիթում: Քարտուղար, սպասավոր...
- Տեսուչ.- *(նստելով գահավորակի ձախ եզրին):* Որևէ հաջողության հասա՞ր տան սպասավորների մոտ:
- Սերժանտ.- Դեռ ոչ: Նրանք շատ զգուշավոր են դարձել: Ցավոք սրտի, այստեղ խոհարարուհու օգնական չկա, իսկ ինձ հաջողությունը ժպտացել է հենց նրանց խոսեցնելիս: *(Անցնելով բազկաթոռի՝ ԿՁ կողքով մոտենում է բուխարիկին:)* Այստեղ օրավարձով աշխատող մի սպասուհի կա, որի հետ հույսեր եմ կապում: Կուզեի մի քիչ էլ զբաղվել նրանով, սը՛ր, եթե ինձ պետք չունեք:

Տեսուչը գլխի շարժումով հավանություն է տալիս: Սերժանտը ժպտում ու դուրս է գալիս՝ 2: Տեսուչը բարձրանում է տեղից, մոտենում պատուհանին՝ Ա, մի պահ նայում է դուրս, հետո շրջվում է, գնում է վեր՝ Կ և դուրս է գալիս պատշգամբ: Մի քանի րոպեից, մոտենում ու նստում է գահավորակին: Նա զգում է, որ իր հենված բարձի տակ ինչ-որ իր կա: Բարձր շարժում է և վերցնում Վերոնիկայի կարմիր պայուսակը: Բացում է պայուսակը, նայում ներսը խոր զարմանքի արտահայտությամբ: Փակում է պայուսակը, բարձրանում է տեղից, գնում է գահավորակի ձախ կողմը պայուսակը ձեռքում ձռձռելով: Դրսից՝ 2, ձայներ լսելով՝ նա անմիջապես պայուսակը դնում է նախկին տեղը գահավորակի վրա ու ծածկում բարձով:

- Միջ.- *(դրսից՝ 2):* Օ՛հ, դու այստեղ ես, Հենրիեթա՛: Տեսուչը ցանկանում է տեսնել քեզ:
- Հենրիեթա.- *(դրսից՝ 2):* Ծնորհակալ եմ, Մի՛ջ: Լյուսին հենց նոր ինձ ասաց: Հիմա գնում եմ նրա մոտ:
- Միջ.- *(դրսից՝ 2):* Լավ, ես կարծում էի նա կմոռանա:

Տեսուչը գնում է գահավորակի աջ կողմը: Հենրիեթան ներս է մտնում՝ 2:

- Հենրիեթա.- *(Օսծկելով դուռը):* Դուք ցանկանում էիք ի՞նձ տեսնել: *(Մոտենում ու նստում է գահավորակի ձախ եզրին:)*
- Տեսուչ.- Այո, Միս Անգրթել: Դուք էլ ազգական եք, այնպես չէ՞:
- Հենրիեթա.- Այո՛, մենք բոլորս զարմիկներ ենք: Մի քիչ խառնաշփոթ է, որովհետև Լեդի Անգրթելը ամուսնացել է իր հեռու զարմիկի հետ և իրականում ինքն էլ մի Անգրթել է:
- Տեսուչ.- Ընտանեկան հավաքույթ՝ բացառությամբ Դոկտոր և Միսիս Քրիսթոնների:
- Հենրիեթա.- Այո՛:
- Տեսուչ.- *(շարժվելով վեր՝ Կ):* Կուզեի՞ք ինձ ներկայացնել ձեր տեսակետը կատարվածի մասին:
- Հենրիեթա.- Ես ծաղիկների պարտեզում էի: (Ցույց է տալիս՝ Ա:) Այն կողմը՝ ոչ շատ հեռու տնից: Ես լսեցի կրակոցի ձայնը և կռահեցի, որ դա գալիս է տան միջից, այլ ոչ թե թիրախների ծառուղուց: Դա ինձ տարօրինակ թվաց ու ներս մտա:
- Տեսուչ.- Ո՞ր պատուհանից:
- Հենրիեթա.- *(ցույց տալով՝ Ա):* Այս մեկից:
- Տեսուչ.- Կնկարագրեի՞ք ձեր տեսածը:

- Հենրիթա.- Մըր Հենրին և Գաջընը՝ սպասավորը, կոացել էին Ջոն Քրիսթոֆի վրա: Միսիս Քրիսթոն կանգնած էր նրանց կողքին՝ ձեռքին բռնած ատրճանակը:
- Տեսուչ.- *(գնալով գահավորակի աջ կողմը):* Եվ դուք որոշեցիք, որ նա է կրակել:
- Հենրիթա.- Իսկ ինչո՞ւ պիտի այդպես կարծեի:
- Տեսուչ.- Ուրեմն՝ դա ձեր մտքովը չանցավ:
- Հենրիթա.- Ո՛չ, չանցավ:
- Տեսուչ.- Իսկ ի՞նչ մտածեցիք:
- Հենրիթա.- Ուղղակի չեմ կարծում, որ այդ պահին մտածում էի: Ամեն բան անսպասելի էր: Մըր Հենրին Գաջընին ասաց, որ բժիշկ կանչի, և նա գնաց դեպի հեռախոսը:
- Տեսուչ.- Ո՞վքեր կային սենյակում:
- Հենրիթա.- Կարծում եմ բոլորը: Բայց՝ ո՛չ, Էդուարդը եկավ ինձանից հետո:
- Տեսուչ.- Ո՞ր կողմից:
- Հենրիթա.- Պատշգամբից:
- Տեսուչ.- Հետո՞ :
- Հենրիթա.- Հետո... Ջոնը մեռավ:
- Տեսուչ.- Նախքան մեռնելը նրա գիտակցությունը տե՞ղն էր:
- Հենրիթա.- Ը՛, այո՛: Նա բացեց իր աչքերը:
- Տեսուչ.- Որևէ բան ասա՞ց:
- Հենրիթա.- *(կարճ դադարից հետո):* Նա ասաց՝ «Հենրիթա»:
- Տեսուչ.- Դուք նրան լավ էիք ճանաչո՞ւմ:
- Հենրիթա.- Շատ լավ, անշուշտ:
- Տեսուչ.- Նա այլ բան չասա՞ց:
- Հենրիթա.- Ո՛չ:
- Տեսուչ.- *(անցնելով գահավորակի հետևից դեպի դրա ձախ կողմը):* Ի՞նչ պատահեց հետո:
- Հենրիթա.- Թույլ տվեք հիշեմ... Ա՛հ, այո. Գերդան ճչաց: Նա օրորվում էր և ձեռքում այս ու այն կողմ շարժում ատրճանակը: Ես վախեցա, որ դա կպարպվի: Մոտեցա, նրա ձեռքից վերցրի ատրճանակն ու փորձեցի նրան նստեցնել գահավորակի վրա:
- Տեսուչ.- *(մոտենալով բուխարիկին):* Դուք առանձնապես մոտ էիք Դր. Քրիսթոֆի՞ն, թե՞ Միսիս Քրիսթոֆին:
- Հենրիթա.- Այդ հարցին դժվար է պատասխանել:
- Տեսուչ.- *(համակրալից ու մեղմ):* Ավելի ճի՞շտ, Մի՛սս Անգրթել:
- Հենրիթա.- *(վճռակամ):* Շատ լավ, կարճ կկապեմ: Ես Ջոն Քրիսթոֆի հոմանուհին էի, ա՞յդ էիք ուզում իմանալ, այո՞ :
- Տեսուչ.- *(մոտենալով Հենրիթային):* Շնորհակալ եմ, Մի՛սս Անգրթել: *(Հանում է իր տուփը և սիգարեթ առաջարկում Հենրիթային. քաղաքավարի:)* Վախենում եմ ստիպված լինենք ճշտել բոլոր մանրուքները:
- Հենրիթա.- *(սիգարեթ վերցնելով. չոր):* Եթե այս անձնական փաստը կապ չունի գործին, և չեմ էլ հասկանում ինչո՞վ կարող է կապ ունենալ, ապա ի՞նչ անհրաժեշտություն կա դարձնելու հանրության սեփականությունը: Եվ ոչ միայն հանուն ինձ. դա ավելորդ ցավ կպատճառի Միսիս Քրիսթոֆին:
- Տեսուչ.- *(վառելով Հենրիթայի սիգարեթը):* Միսիս Քրիսթոն տեղյակ չէ՞ր ձեր և իր ամուսնու հարաբերությունների մասին:
- Հենրիթա.- Ամեննին:

- Տեսուչ.- Դուք համոզված եք դրանում:
- Հենրիեթա.- Միանգամայն:
- Տեսուչ.- *(անցնելով գահավորակի հետևից դրա աջ կողմը):* Դուք և Դր. Քրիսթոն երբ-վանի՞ց էիք սիրահարված:
- Հենրիեթա.- Ես նրա հոմանունին դարձա վեց ամիս առաջ: Չէի ասի, թե դա սիրահարու-թյուն էր:
- Տեսուչ.- *(բունն հետաքրքրությամբ նրան նայելով):* Համոզված չեմ, որ հասկանում եմ ձեզ, Մի՛ սու Անգրթել:
- Հենրիեթա.- Կարծում եմ կհասկանաք, եթե խորանաք:
- Տեսուչ.- Ապահարզանի հարց կա՞ր մեջտեղում:
- Հենրիեթա.- Իհարկե՛ն չ: Իմ նպատակս էլ հենց դա է: Ձոն Քրիսթոն հարաբերություններ ուներ նաև այլ կանանց հետ: Ես մեկն էի... շարքի մեջ: Չեմ կարծում, որ նա բացի իր կնոջից հոգ տարած լիներ մի ուրիշ կնոջ նկատմամբ: Մակայն Միսիս Քրիսթոն այնպիսի մեկը չէր, որ ամուսինը կարողանար կիսվել նրա հետ իր մասնագիտության առումով: Ձոն Քրիսթոն զբաղված էր մի բարդ հիվանդության ուսումնասիրությամբ:

Տեսուչը նստում է գահավորակի աջ եզրին:

Նա շատ փայլուն նկարագրով անձնավորություն էր և իր գիտաշխատություն-նր դարձել էր իր կյանքի գերագույն նպատակը: Նա սովորություն ուներ գալ իմ արվեստանոցը և խոսել ինձ հետ այդ թեմայով: Հիմնականում, դա շատ վեր էր իմ իմացությունից, բայց ես ձեռք բերեցի ու կարդացի որոշ հրատա-րակություններ այդ թեմայով: Ուստի ավելի լավ էի հասկանում իրեն ու իմ հարցերը, թեկուզև ոչ մասնագիտական, օգնում էին նրան ձևավորելու իր սե-փական գաղափարները: *(Խոսում է բնական, ասես ընկերոջ հետ):* Հետո... հանկարծ... ես կանգնեցի Ձոնի և նրա գաղափարների միջև: Ես սկսեցի ազ-դել նրա վրա որպես՝ կին: Նա չէր ուզում սիրահարվել ինձ. նա մի անգամ սիրահարվել էր երիտասարդ տարիքում, և դրանից մնացած վախը թույլ չէր տալիս նորից սիրահարվել: Ո՛չ, նա ձգտում էր միայն պահել պարզ հարա-բերություն՝ իր ունեցած մյուս հարաբերությունների նման: Ձոնը մտածում էր, որ ինձ հետ պարզ հարաբերություն պահպանելու դեպքում կարող էր ուզած պահին ինձ դուրս մղել իր ներաշխարհից ու ոչ մի գնով չշեղվել իր աշխատանքից:

- Տեսուչ.- Եվ դա ձեզ բավարարո՞ւմ էր:
- Հենրիեթա.- Ո՛չ, ո՛չ, հարկավ ոչ: Բայց ուրիշ էլք չունեի: Ես սիրում էի Ձոն Քրիսթոնին և տանում այն բոլորը, ինչը հաճելի էր նրան:
- Տեսուչ.- Հասկանում եմ, դա այդպես է:
- Հենրիեթա.- Ես մոռացել էի, որ դուք մի ոստիկան եք:
- Տեսուչ.- Ոստիկանները չեն տարբերվում մյուս մարդկանցից: Մենք ունկնդրում ենք նույնիսկ խնդրին չվերաբերող խոստովանությունները, գուցե, որովհետև մենք հանձնառու չենք քահանաների պես:
- Հենրիեթա.- Այո՛, այո՛, ենթադրում եմ՝ դուք շատ բաներ ունեք ուսումնասիրելու մարդկա-յին ներաշխարհում: *(Բարձրանում է և սիգարետը սեղմում կլոր սեղանի մոխրամանի մեջ: Հետևյալ նախադասությունը շատ էլ ճշմարտանման չի հնչում:)* Հիմա դուք հասկանում եք, թե ինչո՞ւ Ձոնը «Հենրիեթա» ասաց մեռ-նելուց առաջ:

Սերժանտը ներս է մտնում ձախից:

- Տեսուչ.- Դա շատ կարևոր չէ, Մի'սս Անգրթել: *(Բարձրանում և կանգնում է գահավորակի մոտ՝ Ա:)* Իսկ դուք ինչո՞ւ ասորձանակը վերցրիք Միսիս Քրիսթոֆի ձեռքից:
- Հենրիեթա.- Ես ձեզ ասացի, մտքովս անցավ, որ նա ուր որ է կուշաթափվի:
- Տեսուչ.- Դա այն ասորձանակներից մեկը չէ՞ր, որ օգտագործվել էր նշանառության փորձի ժամանակ: Դրա վրայի միակ պարզ հետքերը պատկանում են Միսիս Քրիսթոֆին ու բնականաբար՝ ձեզ: *(Դադար:)* Լավ կլինե՞ր՝ ոչ ոք դրան ձեռք չտար:
- Հենրիեթա.- Այդ պահին ո՞վ էր մտածում նման բանի մասին: Ա՞յս էր բոլորը, պարո՞ն Տեսուչ:
- Տեսուչ.- Այո՛, Մի'սս Անգրթել, ներկայիս այսքանը բավական է:

Սերժանտը բացում է դուռը: Հենրիեթան դուրս է գալիս՝ 2: Սերժանտը դուռը փակում է նրա ետևից:

- Սերժանտ.- Հասա՞ք որևէ արդյունքի:
- Տեսուչ.- Նա եղել է Քրիսթոֆի սիրուհին: Նա ինձ ասաց, որ այդ պատճառով է Ջոն Քրիսթոֆն մեռնելուց առաջ «Հենրիեթա» գոչել:
- Սերժանտ.- *(անցնելով գահավորակի ձախ կողմը):* Վատ չի հնչում:
- Տեսուչ.- Եթե ճշմարիտ է:
- Սերժանտ.- Քրիսթոֆն ուրիշ ի՞նչ պատճառ կարող էր ունենալ վանկարկելու նրա անունը:
- Տեսուչ.- Դա կարող էր լինել նաև... ամբաստանություն:
- Սերժանտ.- Ուզում եք ասել նա՞ է եղել սպանության հեղինակը:
- Տեսուչ.- *(մոտենալով բուխարիկին):* Հավանական է:
- Սերժանտ.- Ես փողս դնում եմ նրա կնոջ վրա: Եթե Միսիս Քրիսթոֆն բացահայտել է իր ամուսնու և Հենրիեթայի կապը, դա հենց այն շարժառիթն է, ինչը փնտրում ենք:
- Տեսուչ.- Հենրիեթա Անգրթելը ասաց, որ նա անտեղյակ էր այդ մասին:
- Սերժանտ.- Դուք չեք կարող վստահ լինել: Մեկը երևի հուշել է Միսիս Քրիսթոֆին:
- Տեսուչ.- *(Մտնելով խորշի մեջ ու նայելով դուրս քանդակին):* Նա չէր կարող իր զգացումները թաքցնել երկար ժամանակ. այդ տեսակի կին չէ:
- Սերժանտ.- Իսկ մյուսները: Նրանք ենթադրում եմ՝ անմեղ են:
- Տեսուչ.- Առերևույթ, ոչ մի պատճառ չկա, որ նրանցից որևէ մեկը Ջոն Քրիսթոֆի մահը ցանկանար: *(Շրջվում է և անցնելով գահավորակի ետևից մոտենում է գրասեղանին:)* Բայց կան այլ հանգամանքներ, որոնց մասին դեռևս լուր չունենք: Նրանք բոլորն էլ զգույշ են իրենց արտահայտություններում:
- Սերժանտ.- Քրիսթոֆին վերացնելու նպատակով որևէ ծանրակշիռ շարժառիթ չեմ տեսնում Լեդի Անգրթելի ու Սըր Հենրիի պարագային:
- Տեսուչ.- Ոչ էլ երիտասարդ աղջկա՝ Միս Հարվիի: Բայց հիշիր Էդուարդ Անգրթելի պատասխանը այն հարցին, թե՞ Ջոն Քրիսթոֆն նախքան մեռնելը ոչինչ չասա՞ց. «ոչ մի բան»: Կտրուկ հերքում մի իրողության, որի ճշտության մեջ համոզված ենք: Թե՛ Սըր Հենրին և թե՛ Միս Հարվին ասում են, որ Ջոն Քրիսթոֆն բարձր ձայնով գոչել է «Հենրիեթա»:
- Սերժանտ.- Դուք կարծում եք՝ Էդուարդ Անգրթելը սիրո՞ւմ է Հենրիեթային:

- Տեսուչ.- Ես այդ կարծիքին եմ:
- Սերժանտ.- Եվ իր ամեն ինչ անում է, որպեսզի նրան չխառնի՞ այս գործին:
- Տեսուչ.- Այո՛, ճիշտ է:
- Սերժանտ.- Վստահաբար դա է, որ կա:
- Տեսուչ.- *(հետևից հենվելով գահավորակին):* Եվ ըստ այնմ, Փեննի՛, դա նոր կասկած է առաջացնում:
- Սերժանտ.- Էդուարդ Անգրթե՞ լը:
- Տեսուչ.- *(նստելով գահավորակի աջ եզրին):* Այո՛, նա ներվային է: Եթե նա չափից ավել է տարված Հենրիթայով ու հասկացել է, որ Հենրիթան եղել է Ջոն Քրիսթոֆի սիրուհին ապա նա պատկանում է այն խաղաղ մարդկանց թվին, որոնք իրենց ցուցադրում են ճիշտ այն պահին, երբ ոչ ոք դա չի սպասում:
- Սերժանտ.- Հույս ունենալով տիրանալ աղջկան՝ մյուսներին չեզոքացնելու գնով:
- Տեսուչ.- Մենք երկուսս էլ գիտենք նման դեպքեր:
- Սերժանտ.- Ուրեմն ձեր կարծիքով հաշվի մեջ են երեքը՝ Հենրիթա Անգրթելը, Էդուարդ Անգրթելը և կինը:
- Տեսուչ.- Օ՛հ, ես չեմ հասել որևէ եզրակացության, Փեննի՛, չեմ հասել: *(Բարձի տակից հանում է Վերոնիկա Քրեյի պայուսակն ու բարձր պահում:)* Ի՞նչ կասես, սրա մասին:
- Սերժանտ.- *(մոտենալով գահավորակի ձախ կողմին):* Կանացի պայուսակ է:
- Տեսուչ.- Անկասկած:
- Սերժանտ.- Մենք դա հայտնաբերեցինք, երբ խուզարկում էինք այս սենյակը: *(նայում է հուշատետրին:)* Երկու փառուդ, տաս շիլինգ թղթադրամ, յոթ շիլինգ կանխիկ, սովորական շրթներկ, դիմափոշու տուփ և ռուժ, արծաթե վառիչ, ասեղնագործված թաշկինակ առանց սկզբնատառերի: Բոլորն էլ շատ էլեգանտ: Պատկանում է կանանցից մեկին: Բայց թե ո՞ւմ, չգիտեմ:

Տեսուչը վեր է կենում՝ պայուսակը ձեռքին, մոտենում է բուխարիկին ու սեղմում գանգը:

- Տեսուչ.- Ես շատ ուշադրություն չդարձրի սրա վրա, որովհետև ըստ-իս՝ էական չէր:
- Սերժանտ.- Դու կարծում ես, սա պատկանում է այս տան մեջ գտնվող կանանցից մեկի՞ն:
- Տեսուչ.- *(շարժվելով վեր՝ Կ):* Ես այդպես եմ ենթադրում: Մի՞ թե կա որևէ այլ պատճառ հակառակը պնդելու:
- Տեսուչ.- Կա միայն դրա գեղագիտական ընկալման պատճառը: *(Գնում է գահավորակի ձախ կողմը:)* Դա Լեդի Անգրթելի ճաշակով չէ: Շատ թանկ է փոքրիկ Միսս Հարվիի համար: Շատ մոդայիկ՝ Միսիս Քրիսթոֆի և շատ աչք ծակող Հենրիթա Անգրթելի համար: Չի թվում նաև, թե դա պատկանում է այս տան սպասուհիներից որևէ մեկին: *(նայում է պայուսակին):* Դա համարում եմ անչափ հետաքրքրական:
- Սերժանտ.- *(հենվելով բուխարիկի դարավանդակին):* Դժվար չէ գտնել դրա տիրոջը, բայց ինչպես ասացի՝ պարունակությունը շատ սովորական է:
- Տեսուչ.- Համոզվա՞ծ ես, որ դա պարունակում էր այն բոլորը, ինչը թվարկեցիր:
- Սերժանտ.- Կարծում եմ՝ այո՛, սը՛ր:

Փաջընը ներս է մտնում ձախից:

- Փաջըն.- Չանգահարեցի՞ք, սը՛ր:

Տեսուչ.- Այո՛ : Կարո՞ղ ես ասել, թե այս պայուսակը ումն է պատկանում:
 Գաջըն.- *(մտտենալով Տեսուչին՝ 2)*: Վախենում եմ, որ ոչ, սը՛ր: Չեմ մտաբերում, որ դա տեսած լինեմ: Դա կարող եմ ստուգել տիրուհու անձնական սպասուհու հետ, սը՛ր: Հավանաբար, նա ինձանից ավելի լավ կհմանա:
 Տեսուչ.- Շնորհակալ եմ:

Գաջընը շրջվում է, մտտենում է դրան՝ 2, հետո տատանվում է ու շուտ գալիս:

Գաջըն.- Հենց նոր մի բան մտքովս անցավ, սը՛ր, եթե դա արժի արտահայտել:
 Տեսուչ.- Անշուշտ, իհարկե:
 Գաջըն.- *(Գնալով՝ Կ2)*: Դա հավանորեն Վերոնիկա Քրեյնինն է:
 Սերժանտ.- *(մտտենալով Գաջընի ձայն կողմին)*: Վերոնիկա Քրեյն՝ Կինոա՞ստղ: Մի՞ թե նա աշխարհի այս մասում է:
 Գաջըն.- *(խեթ նայելով Սերժանտին. Տեսուչին)*: Նա բնակվում է արահետից մի հարյուր յարդ վեր՝ Դավթոթոգ անունով կոտեջում:
 Տեսուչ.- Միսիս Քրեյն այստեղ եղե՞լ է:
 Գաջըն.- Նա այստեղ էր երեկ երեկոյան, սը՛ր:
 Տեսուչ.- Եվ նա կրում էր ա՞յս պայուսակը:
 Գաջըն.- Ո՛չ, նա երեկոյան զգեստով էր և ձեռքին սպիտակ գույնի ակնագարդ պայուսակ կար: Բայց կարծում եմ՝ Միսիս Քրեյնը հնարավոր է այստեղ է եղել այսօր առավոտյան՝ կարճ ժամանակով:
 Տեսուչ.- Ե՞րբ:
 Գաջըն.- Մոտավրապես օրվա կեսին, սը՛ր:
 Տեսուչ.- Դու նրան տեսե՞լ ես:
 Գաջըն.- Ինքս ոչ, սը՛ր:
 Տեսուչ.- Շատ լավ, բայց ո՞վ է տեսել:
 Գաջըն.- *(բարկացկոտ նայելով Սերժանտին)*: Սպասուհու օգնականը նրան տեսել էր ննջասենյակի պատուհանից, սը՛ր: Աղջիկը կինոյի ջերմ երկրպագու է և շատ ոգևորված էր:
 Սերժանտ.- Ես կխոսեմ այդ աղջկա հետ:

դուրս է գալիս՝ 2:

Տեսուչ.- Լեդի Անգրթելը չասաց, որ Միսիս Քրեյնը այստեղ է եղել այսօր առավոտյան:
 Գաջըն.- Չեմ կարծում տիրուհին տեղյակ էր Միսիս Քրեյնի այցելության մասին:
 Տեսուչ.- Այդ դեպքում, նա ո՞ւմ էր եկել տեսնելու:
 Գաջըն.- Այդ հարցին, սը՛ր, դժվարանում եմ պատասխանել:

Տեսուչը գահավորակի հետևից անցնում է դրա աջ կողմը:

Ըհը... *(Հագում է:)*

Տեսուչ.- *(շրջվելով դեպի Գաջընը)*: Այո՞:
 Գաջըն.- Առավոտյան Դավթոթոգից մի երկտող բերեցին Դր. Քրիսթոյին: Դր. Քրիսթոն ասաց, որ պատասխան չի լինելու:
 Տեսուչ.- Այդպես: Ի՞նչ եղավ այդ երկտողը:
 Գաջըն.- Կարծում եմ՝ կկարողանամ դա կարգի բերել ձեզ համար, սը՛ր: Ես թղթերի գամբյուղի միջից հանել եմ որոշ ճմրթված գրություններ:

Տեսուչ.- Ծնորհակալ եմ, Գաջը՛ն: Ես ինձ միանգամայն պարտավորված կզգայի, եթե ինձ բերեիր այդ բոլորը միասին:

Գաջըն.- *(շուռ գալով ու գնալով դեպի դուռը՝ 2):* Լսում եմ, սը՛ր:

Տեսուչ.- Ես այնպես հասկացա, որ Դր. Քրիսթոն ճանաչում էր Միսիս Քրեյին:

Գաջըն.- Ինձ էլ է թվում, սը՛ր: Նա երեկ երեկոյան գնաց նրան տեսնելու... ընթրիքից հետո: *(Նայում է սպասողական:)*

Տեսուչ.- Նա ե՞րբ վերադարձավ:

Գաջըն.- Այդ հարցին, սը՛ր, չեմ կարող պատասխանել: Կատարելով Սըր Հենրիի կարգադրությունը՝ ժամը տասներկու անց քառորդ ընդհատեցի, երբ պատկում էի քնելու, բաց թողեցի կողաշենքի դուռը:

Տեսուչը պայուսակը դնում է գրասեղանի վրա:

Մինչև այդ ժամը Դր. Քրիսթոն չէ՞ր վերադարձել:

Վերոնիկան ներս է մտնում՝ 2 Կ:

Վերոնիկա.- Ես հենց նոր լսեցի լուրը: Դա ահավոր է... իսկապես՝ ահավոր: *(գնում է գահավորակի հետևը:)* Դո՛ւք...

Տեսուչ.- Տեսուչ Քոլքրիստին՝ Սքաթլենդ-Յարդից:

Վերոնիկա.- Իսկ Ջոնը սպանվե՞լ է:

Գաջընը հապճեպ դուրս է գալիս՝ 2:

Տեսուչ.- Օ՛հ, այո՛, Միսի՛ս Քրեյ, նա սպանվել է:

Վերոնիկա.- Ուրեմն՝ դուք գիտեք, թե ես ով եմ: *(Գնում է գահավորակի առջևից դրա ձախ կողմը:)*

Տեսուչ.- Ես անչափ գնահատում եմ լավ կինոն:

Վերոնիկա.- Ինչպիսի մեծահոգություն ձեր կողմից: *(Նստում է գահավորակի ձախ ծայրին:)* Ես հիմա Անգլիայում գտնվում եմ նկարահանման նպատակով:

Տեսուչ.- Դր. Քրիսթոն ձեր ընկերներից էր:

Վերոնիկա.- Տարիներ կլինե՞ր նրան չէի տեսել: Երեկ երեկոյան եկա այստեղ լուցկի խնդրելու և երբ ներս մտա՝ առաջին մարդը, ում նկատեցի՝ Դր. Քրիսթոն էր:

Տեսուչ.- Դուք ուրախացա՞ք նրան տեսնելով:

Վերոնիկա.- Ես շատ ուրախ էի: Միշտ էլ հաճելի է հանդիպել հին ընկերներին:

Տեսուչ.- Որքան տեղյակ եմ, նա երեկ երեկոյան այցելեց ձեզ:

Վերոնիկա.- Այո՛. ես նրան խնդրեցի գալ ընթրիքից հետո, եթե դա հնարավոր էր: Մենք անչափ հաճելի խոսակցություն ունեցանք հին օրերի և հին ընկերների մասին:

Տեսուչ.- *(մոտենալով բուխարիկին):* Նա ե՞րբ հեռացավ:

Վերոնիկա.- Ճիշտն ասած՝ չգիտեմ: Մենք երկար ժամանակ զրուցում էինք:

Տեսուչ.- Հին օրերի՞ մասին:

Վերոնիկա.- Այո՛, իհարկե շատ բաներ էին տեղի ունեցել երկուսիս կյանքում:

Տեսուչը գնում է՝ Կ և փակում պատուհանը:

Ես հասկացա, որ նա մեծ հաջողության է հասել իր մասնագիտության մեջ:
Հետո իմացա, որ ամուսնացել է:

Տեսուչ.- *(շարժվելով 'Ա):* Դուք չէ՞ք ճանաչում նրա կնոջը:
Վերոնիկա.- Ո՛հ, ո՛հ, նա մեզ ներկայացրեց իրար երեկ երեկոյան, այստեղ: Ես նրա ասած-
ներից կռահեցի, թեև ոչ բացեիքաց, այլ անուղղակիորեն, որ շատ երջանիկ չէ
իր ամուսնական կյանքում:

Տեսուչ.- Ը՛, իսկապե՞ս:
Վերոնիկա.- Կարծում եմ՝ նրա կինը մեկն է այն անարտահայտիչ կանանցից, որոնք հակ-
ված են խանդոտ լինելու:

Տեսուչ.- *(մոտենալով գահավորակին 'Ա):* Իսկ խանդելու համար նա շարժառիթ ու-
նե՞ր:

Վերոնիկա.- Ը՛, դա ինձնից մի հարցրեք: Ես լոկ կարծում եմ, որ վերջերս մի ընդհարում էր
տեղի ունեցել նրանց միջև: Խանդը մարդկանց մղում է այսպիսի ահավոր
քայլերի:

Տեսուչ.- Դուք այն կարծիքի եք, որ նա սպանվե՞լ է իր կնոջ ձեռքով:
Վերոնիկա.- Օ՛հ, ես իսկապես ոչինչ չգիտեմ: Ես լսեցի իմ սպասուհուց, որ կնոջը գտել են
կանգնած նրա կողքին ու դեռևս ատրճանակը ձեռքին բռնած: Բայց, անշուշտ,
դրանք գավառական անհիմն պատմություններ են:

Տեսուչ.- *(հենվելով գրասեղանին):* Պարզվում է, որ այս մեկը ճշմարիտ է:
Վերոնիկա.- Ը՛, ես կարծում եմ նրա կինը որոշ բաներ է լսել Դր. Քրիսթոֆի և այն արձանա-
գործ կնոջ մասին:

Սերժանտը ներս է մտնում՝ 2: Ձեռքում բռնել է ճմրթված երկտողերը:

Տեսուչ.- Ինձ կներեք:

**Սերժանտը անցնելով կլոր սեղանի առջևից մոտենում է Տեսուչին և նրան հանձնում
ճմրթված երկտողերը:**

Վերոնիկա.- Խնդրեմ:
Սերժանտ.- *(կողմ՝ Տեսուչին):* Նա վերադարձել է ժամը երեքին: *(Գնում է վեր 'Կ):*
Վերոնիկա.- Ճիշտն ասած՝ ես եկա... եկա...
Տեսուչ.- *(վերցնելով պայուսակը):* Անշուշտ վերցնելու ձեռք պայուսակը: Մա ձե՞րն է:
Վերոնիկա.- *(շփոթված):* Օ՛հ, այո՛, (կանգնում է) շնորհակալ եմ:
Տեսուչ.- Մի վայրկյան:

Վերոնիկան նորից նստում է իր տեղը՝ գահավորակին:

(Նայում է երկտողերը, հետո մոտենում է գահավորակին՝ 2Կ): Դր. Քրիսթոն
տուն է վերադարձել այսօր առավոտյան ժամը երեքին: Դա ինչ-որ անպատ-
շաճ ժամ չէ՞:

Վերոնիկա.- Մենք խոսում էինք հին օրերի մասին:
Տեսուչ.- Արդեն ասել եք:
Վերոնիկա.- Դա իմ կարծածից շատ ավելի երկար տևեց:
Տեսուչ.- Այդ վերջի՞ն անգամն էր, որ տեսաք Դր. Քրիսթոֆին:
Վերոնիկա.- *(արագ):* Այո՛:
Տեսուչ.- Լիովին համոզված ե՞ք, Միսի՛ս քրեյ:

- Վերոնիկա.- Իհարկե, վստահ եմ:
Տեսուչ.- Ի՞նչ կասեք ձեր այս պայուսակի մասին:
Վերոնիկա.- Ը՛, դա երևի թողել եմ անցյալ երեկոյան, երբ եկա լուցկի տանելու:
Տեսուչ.- Դա մի քիչ մեծ և ծանր չէ՞ երեկոյան այցելության համար: *(Դադար:)* Կարծում եմ՝ դա թողել եք այստեղ այսօր առավոտյան:
Վերոնիկա.- Ի՞նչից եք դա եզրակացնում:
Տեսուչ.- *(մտտենալով բուխարիկին ու պայուսակը դնելով դարավանդակի վրա):* Մասամբ ելնելով ձեր այս երկտողերից: *(Ձեռքով հարթում է երկտողը և կարդում:)* «Խնդրում եմ գաս այս առավոտ, քեզ պետք է տեսնեմ, Վերոնիկա»: *(Քիչ կտրուկ:)* Միսիս Քրեյ: Դր. Քրիսթոն, համոզված եմ, ասել է, որ պատասխան չի լինելու: Նա չի եկել ձեզ մոտ, ուստի դուք եք եկել այստեղ նրան տեսնելու: *(բարձրանալով ու մտտենալով բազկաթոռին՝ ԿԶ: Փոխելով վերաբերմունքը):* Որքա՛ն դուք խորաթափանց եք: Դուք տեղյակ եք ամեն ինչից:
Տեսուչ.- Ոչ այնքան՝ բոլորից: Իսկ ի՞նչ պատահեց, երբ դուք այստեղ եկաք: Դուք վիճեցի՞ք:
Վերոնիկա.- Մենք... Ը՛... դժվար է դա վիճել անվանել: *(Հառաչում է և նստում բազկաթոռին՝ ԶԿ:)* Խեղճ Ջոն:
Տեսուչ.- Ինչո՞ւ «Խեղճ Ջոն»:
Վերոնիկա.- Ես չէի ուզում ձեզ ասել: Թվում է՝ հարմար չէ:
Տեսուչ.- Այո՞:
Վերոնիկա.- Ջոնը գժվել էր... լրիվ գժվել: Տարիներ առաջ նա սիրահարված էր ինձ: Նա... նա ուզում էր թողնել իր կնոջն ու երեխաներին... Նա ինձնից պահանջում էր բաժանվել ու ամուսնանալ իր հետ: Իսկապես, ահավոր է նույնիսկ մտածելը, թե մի կին կարող է ինչ աստիճան ազդել տղամարդու վրա:
Տեսուչ.- Դա կարող է պատահել՝ շատ հանկարծակի և անսպասելի:
Վերոնիկա.- Գիտեմ՝ գրեթե անհավատալի է: Բայց հավանական է, գիտե՞ք, չմոռանալ... սպասել, հուսալ և ծրագրել: Կան նման տղամարդիկ:
Տեսուչ.- *(նայելով Վերոնիկային մոտիկից ու անցնելով բազկաթոռի հետևից դրա աջ կողմը):* Նաև՝ կանայք:
Վերոնիկա.- Այո՛... այո՛, կարծում եմ: Դե՛, նա այդպիսին էր: Ես ձևացնում էի, որ լուրջ չեմ ընդունում իր ասածները: Ասացի, որ գժվել է: Նույն արտահայտությունները նա արել էր նաև անցյալ գիշեր: Դրա համար էլ ուղարկեցի երկտողը, որովհետև չէի կամենում խնդիրը թողնել առկախ վիճակում: Եկա նրան հասկացնելու, որ իր առաջարկությունը անհնար է: Բայց նա ինձ չէր լսում: Եվ հիմա նա մեռած է: Եվ ես ինձ կործանված եմ զգում:

Մերժանոր հագում է:

- Տեսուչ.- Այո՞, Մերժա՛նտ:
Մերժանտ.- *(հենվելով գահավորակին: Դիմելով Վերոնիկային):* Ստացածս տեղեկության համաձայն, դուք երբ դուրս էիք գալիս այն պատուհանից, ձեզ լսել են, որ ասում էիք *(նայում է հուշատետրի մեջ)*. «Ես քեզ ասում եմ ավելի, քան երբևէ կմտածեի՝ հնարավոր է ատել որևէ մեկի...»:
Վերոնիկա.- Վստահ եմ, որ նման բան չեմ ասել: Դուք այդ ո՞ւմ եք հավատ ընծայում՝ ծառանե՞րի խոսքերին:

- Սերժանտ.- Ձեր երկրպագուներից մեկը, Միսի՛ս Քրեյ, դեգերում էր մոտերքում ձեզանից ստորագրություն վերցնելու հույսով: *(Կարևորելով:)* Նա լսել էր այս սենյակում ընթացող խոսակցության մեծ մասը:
- Վերոնիկա.- *(բարձրանալով. գայրացած):* Բոլորը սուտ է: *(Տեսուչին:)* Կարո՞ղ եմ պայուսակ վերցնել:
- Տեսուչ.- *(մոտենալով բուխարիկին):* Անշուշտ, Միսի՛ս Քրեյ: *(Պահելով պայուսակը:)* Բայց վախենում եմ ստիպված լինեմ պահել ատրճանակը:
- Վերոնիկա.- Ատրճանակ՞ը:

Տեսուչը մի թաշկինակ է հանում գրպանից, փռում է ավի մեջ, ապա բացելով պայուսակը միջից հանում է մի ատրճանակ:

- Տեսուչ.- Չգիտեի՞ք, որ ձեր պայուսակի մեջ ատրճանակ կա:
- Սերժանտ.- *(մի քայլ վերցնելով դեպի Տեսուչը):* Բայց...

Տեսուչը հայացքով սաստում է Սերժանտին:

- Վերոնիկա.- Այնտեղ ատրճանակ չկար, դա իմը չէ, ես դրա մասին գաղափար անգամ չունեմ:
- Տեսուչ.- *(տնտղելով ատրճանակը):* Երեսունութ Սմիթ և Ուետոն՝ նույն տրամաչափի, որից արձակվել է փամփուշտը և սպանել Ջոն Քրիսթոֆին:
- Վերոնիկա.- *(գայրացած):* Մի կարծեք, որ ձեզ կհաջողվի զրպարտել ինձ: *(Մոտենում է Տեսուչին:)* Ես կխոսեմ իմ փաստաբանի հետ... Ինչպե՞ս եք համարձակվում...
- Տեսուչ.- *(մեկնում է պայուսակը):* Ահա ձեր պայուսակը, Միսի՛ս Քրեյ:

Վերոնիկան նրա ձեռքից ճանկում է պայուսակը: Բարկացած ու վախեցած նայում է երկուսին:

- Վերոնիկա.- Էլ ոչ մի բառ չեմ ասի:
- Տեսուչ.- Խելամիտ էլ կվարվեք:

Վերոնիկան շրջվում է, խեղում Սերժանտին և ապա հապճեպ դուրս է գալիս պատուհանից՝ ԿՁ: Տեսուչը նայում է նրա ետևից, ճոճում է ատրճանակը, որը զգուշորեն բռնել է թաշկինակով:

- Սերժանտ.- *(հենվելով բազկաթոռի՝ ԿՁ աջ թիկնակին):* Բայց, սը՛ր, ես...
- Տեսուչ.- Ոչ մի բայց, Փեննի՛: Բանը այնպես չէ, ինչպես թվում է՝ մնացած բաներն էլ: *(Մոտենում է բազկաթոռին՝ ԿՁ և դանդաղորեն նստում:)*

Սերժանտը բացում է բերանը բողոքելու մտադրությամբ:

(Ձեռքի շարժումով լռեցնում է Սերժանտին): Հասկացա՛, հասկացա՛, հիմա կարծում եմ...

Վարագույր

Արար երրորդ

Բենը նույն տեսարանն է: Հաջորդ օրը՝ երկուշաբթի առավոտյան:

Երբ վարագույրը բացվում է, հաճելի առավոտ է: Բաց են ֆրանսիական պատուհանները: Բուխարիկի կրակարանում փոքրիկ կրակ է վառվում: Գաջընը ներս է ուղեկցում Տեսուչին և Մերժանտին:

Գաջըն.- Ես կհայտնեմ Սըր Հենրիին, որ դուք այստեղ եք, սը՛ր:

դուրս է գալիս՝ Զ:

Մերժանտ.- *(հպանցիկ նայում է կլոր սեղանին):* Միրուն ծաղիկներ են: *(Գնում է դեպի բուխարիկը):*

Տեսուչ.- *(գնալով վեր՝ Կ և կանգնելով ֆրանսիական պատուհանի մեջ):* Այո՛:

Մերժանտ.- *(շուտ գալով նայում է բուխարիկի վերը կախված նկարին):* Ես հավանում եմ այս նկարը: Գեղեցիկ տուն է: Տեսնես ո՞ւմն է:

Տեսուչ.- Դա Լեդի Անգրթեյլի հին տունն է:

Մերժանտ.- Հիմա՞ էլ, թե՞ վաճառվել է՝ այս օրերին վաճառվող ամեն բանի նման:

Տեսուչ.- Ո՛չ, գիտե՞ս, դա պատկանում է Էդուարդ Անգրթեյլին՝ ժառանգաբար:

Մերժանտ.- *(շրջվելով):* Իսկ ինչո՞ւ ոչ Սըր Հենրիին: Նա տիտղոս ունի:

Տեսուչ.- Նա թեև տիտղոս ունի, բայց ընդամենը հեռու զարմիկ է:

Մերժանտ.- Երևում է՝ դուք ծանոթ եք այս ընտանիքին:

Տեսուչ.- *(գնալով ներքև՝ Ա):* Ես աշխատել եմ հայտնաբերել այն բոլորը, ինչը կարող էի՝ մտածելով, թե դա կնպաստի գործի բացահայտմանը:

Մերժանտ.- Լավ չեմ հասկանում՝ ինչպե՞ս: *(Գնում է՝ ԶԿ:)* Ինչևէ, մի տեղ հասե՞լ ենք, թե՞ դեռ ոչ:

Տեսուչ.- Ոչ լիովին, թերևս: Ավելի շուտ՝ դեռ չենք հասել:

Դորիսը ներս է մտնում վերևից՝ ԿԶ:

Դորիս.- *(կանգնելով ֆրանսիական պատուհանների մեջ):* Մ՛ս...

Մերժանտ.- Բարև:

Դորիս.- *(շարժվելով՝ Կ: Դավադիր):* Այս կողմից եկա, որպեսզի Մր. Գաջընը հետքս չգտնի: Այնտեղ խոսում էին, որ, առհասարակ, խելամիտ է գործ չունենալ ոստիկանության հետ: Իսկ ես ասում եմ, թող հաղթի արդարադատությունը:

Մերժանտ.- Այ, կեցցես, աղջիկ: Իսկ ո՞վ ասաց, որ ընդունված է գործ չունենալ ոստիկանության հետ:

Դորիս.- *(շրջվելով դեպի Մերժանտը):* Միսիս Մեդուեյը՝ խոհարարուհին: Նա ասաց, ամեն դեպքում հաճելի չէ, երբ ոստիկանություն կա տանը, մի երևույթ, որի նմանը անցյալում երբեք չի պատահել իր հետ և որ ինքը վախենում է՝ չկարողանա թեթև ձեռքով անուշեղեն թխել: *(Կանգ է առնում շունչ քաշելու համար:)* Եվ եթե տիրուհու խաթեր չլինեն, նա կտար իր հրաժարականը, բայց չի

կարող թողնել տիրուհուն դժվար կացության մեջ: (*Մոտենում է գահավորակի ձախ կողմին: Դիմելով Տեսուչին:*) Նրանք բոլորը համակրում են տիրուհուն:

Սերժանտ.- Շատ լավ, արի վերադառնանք արդարադատության մասին ասածիդ:
Դորիս.- (*շուտ գալով ու մոտենալով Սերժանտին:*) Դա այն է, ինչը ես տեսել եմ իմ սեփական աչքերով:

Սերժանտ.- Ընդ որում, դրանք շատ գեղեցիկ աչքեր են:
Դորիս.- (*արմունկով մշտում է Սերժանտին:*) Օ՛հ, շարունակենք: Այսպես, շաբաթ օրը կեսօրից հետո, դա սպանության մռայլ օրն էր, գնացի փակելու ննջասենյակի պատուհանները, որովհետև եղանակը անձրևային էր. ակամայից նայեցի ձաղերից այն կողմ և ի՛նչ տեսա...

Սերժանտ.- Ի՞նչ տեսար:
Դորիս.- Տեսա Մր. Գաջընին՝ կանգնած դիմացի միջանցքում մի ատրճանակ ձեռքին, շատ յուրահատուկ տեսքով: Իսկապես շժմեցի:

Տեսուչ.- Գաջընի՞ն:
Դորիս.- (*մոտենալով գահավորակի ձախ կողմին:*) Այո՛, սը՛ր: Եվ եզրակացրի, որ գուցե մարդասպանը նա է:

Տեսուչ.- Գաջընը...
Դորիս.- (*գահավորակի առջևից մոտենալով Տեսուչի ձախ կողմին:*) Հուսով եմ՝ ճիշտ վարվեցի՝ գալով ձեզ մոտ, բայց թե ինչ կասեն ինձ ծառայողների սպասասարահում, չգիտեմ... Սակայն ինչ որ է... թող...

Դորիս.- { } Հաղթի արդարադատությունը:
{ **միասին** } (*գնալով գահավորակի առջևը:*)

Սերժանտ.- { } Հաղթի արդարադատությունը:

Սերժանտ.- Դու շատ ճիշտ ես վարվել, աղջի՛կ:
Դորիս.- Եվ այն ինչ զգում եմ... (*Խոսքը կտրում է ու լարում լսողությունը:*) Մեկը գալիս է: (*արագ շարժվում է վեր՝ Կ:*) Ես թռչում եմ, իբր թե զբաղված եմ լվացքով:

Դուրս է գալիս կենտրոնից՝ Զ:

Սերժանտ.- (*գնալով վեր՝ Կ և նայելով Դորիսի հետևից:*) Գործին շատ օգնող աղջիկ է: Սա հենց նա է, ով դեգերում էր մոտերքում վերցնելու Միսիս Քրեյի ստորագրությունը:

Մըր Հենրին ներս է մտնում՝ Զ:

Տեսուչ.- Բարի լույս, Մը՛ր Հենրի:
Մըր Հենրի.- (*մոտենալով գահավորակին՝ Զ:*) Բարի լույս, Տեսու՛ւչ:
Սերժանտ.- Բարի լույս, սը՛ր:

Մըր Հենրին գլխի շարժումով պատասխանում է Սերժանտին:

Մըր Հենրի.- (*Տեսուչին:*) Դուք ցանկացել եք տեսնե՞լ ինձ:
Տեսուչ.- (*շարժվելով՝ ԿԶ:*) Մենք պետք ունենք որոշ հավելյալ ցուցմունքների:
Մըր Հենրի.- Այո՛ :
Տեսուչ.- Դուք զենքերի մի պատկառելի հավաքածու ունեք՝ մեծ մասամբ փիսթոլներ և ատրճանակներ: Կուզեի իմանալ բոլորն իր տեղո՞ւմ են, թե՞ ոչ:

- Սըր Հենրի.- *(նստելով գահավորակի ձախ եզրին):* Ուղղակի չեմ հասկանում: Ես արդեն ձեզ ասել եմ, որ շաբաթ օրը ես վերցրի երկու ատրճանակ ու մեկ փխսթոլ ու հետո տարա թիրախների ծառուղին: Ավելի ուշ, անդրադարձա, որ պակասում է մեկ երեսունութ Սմիթ և Ուեստն: Ես տեսա այդ կորած ատրճանակը Միսիս Քրիսթոֆի ձեռքին՝ սպանությունից անմիջապես հետո:
- Տեսուչ.- Դա միանգամայն ճիշտ է, Սը՛ր Հենրի: Միսիս Քրիսթոֆի ասությամբ՝ նա այդ ատրճանակը վերցրել էր հատակից՝ ընկած իր ամուսնու մարմնից ոչ հեռու: Մենք բնականաբար ենթադրեցինք, որ Դր. Քրիսթոֆի վրա հավանաբար կրակել են այդ ատրճանակից:
- Սըր Հենրի.- Ուզում եք ասել, **դա չէ՞ր եղել...**
- Տեսուչ.- Քիչ առաջ, Սը՛ր Հենրի, ստացվեց մեր ռազմատեխնիկական մասնագետի տեղեկանքը, ըստ որի՝ Դր. Քրիսթոֆին սպանող գնդակը չի արձակվել այդ ատրճանակից:
- Սըր Հենրի.- Դուք ինձ շշմեցնում եք:
- Տեսուչ.- Այո՛: Դա շատ տարօրինակ է: Գնդակը նույն տրամաչափի է, բայց այդ մեծ հավանականությամբ արձակվել է այլ ատրճանակից:
- Սըր Հենրի.- Իսկ կարո՞ղ եմ հարցնել՝ ինչո՞ւ եք ենթադրում, որ սպանության զենքը վերցվել է իմ հավաքածուի միջից:
- Տեսուչ.- Չեմ ենթադրում, Սը՛ր Հենրի, բայց դա պետք է ստուգել ուրիշ տեղ փնտրելուց առաջ:
- Սըր Հենրի.- *(բարձրանալով ու գնալով՝ Ձ):* Այո՛, հասկացա: Ես մի քանի բոպեից ձեզ տեղյակ կպահեմ այն մասին, ինչը ձեզ հետաքրքրում է:

դուրս է գալիս՝ Ձ:

- Սերժանտ.- Նա ոչինչ չգիտի:
- Տեսուչ.- *(գնալով վեր՝ Կ):* Այդպես է թվում: *(Գնում է պատշգամբ ու կանգնած նայում է դուրս՝ Ձ:)*
- Սերժանտ.- Ե՞րբ է կայանալու հետաքննության ակտը:
- Տեսուչ.- Ժամը տասներկուսին: Դեռ անհազին ժամանակ կա:
- Սերժանտ.- Ուղղակի՞ ըստ պատշաճի վկայություններ ու գործի հետաձգում: Դա, կարծում եմ, Գլխավոր Դատախազն է կազմակերպել:

Միջը մտնում է՝ Ձ: Նա հագել է իր գլխարկն ու ժակետը: Ձեռքին կրում է պայուսակը, ձեռնոցները և ճամպրուկը:

- Տեսուչ.- *(շրջվելով):* Դուք մեկնո՞ւմ եք, Մի՛սս Հարվի:
- Միջ.- *(անցնելով՝ Կ):* Ես անմիջապես պետք է քաղաք ուղևորվեմ հետաքննությունից հետո:
- Տեսուչ.- Իսկ ես կուզեի խնդրել ձեզանից այսօր չհեռանալ այստեղից:
- Միջ.- Բայց դա շատ դժվար է: Գիտե՞ք, ես աշխատում եմ հագուստեղենի խանութում և եթե մինչև երկուսն անց կետը այնտեղ չլինեմ, դա ցավալի հետևանքներ կունենա ինձ համար:
- Տեսուչ.- Ցավում եմ, Մի՛սս Հարվի: Դուք նրանց ասեք, որ ենթարկվում եք ոստիկանության կարգադրությանը:
- Միջ.- Ասեմ ձեզ, դա չի օգնի: *(Գահավորակի առջևից մոտենում է գրասեղանին, ձեռնոցներն ու պայուսակը դնում է դրա վրա և կանգնում է ճամպրուկը դնե-*

լով՝ գրասեղանից վեր՝ հատակին։) Ը՛, շատ բարի, կարծում եմ ավելի լավ է հենց հիմա հեռախոսեմ ու հարցը փակեմ: (Վերցնում է ընկալուչը: Ընկալուչի մեջ:)
Այո...

Լսելի է հեռախոսավարի ձայնը:

Հեռախոսավար.- Համարը, խնդրեմ:
Միջ.- Ռիջենտ՝ չորս, վեց, ինն, երկու, խնդրում եմ:
Հեռախոսավար.- Ձեր համարը:
Միջ.- Դաուֆիլդ՝ երկու, երկու, մեկ:

Տեսուչը գնում է գահավորակի ձախ կողմը և նայում է Սերժանտին:

Հեռախոսավար.- Դաուֆիլդ՝ երկու, երկու, մե՛կ: Գիծը կուշանա շուրջ քսան րոպեով:
Միջ.- Օ՛հ:
Հեռախոսավար.- Հետևե՛մ գծին:
Միջ.- Այո՛, խնդրում եմ, դուք կգանգե՞ք ինձ:
Հեռախոսավար.- Այո՛:
Միջ.- Շնորհակալ եմ: *(Կախում է ընկալուչը:)*

ներս է մտնում Սըր Հենրին՝ Ձ:

Սըր Հենրի.- Մեզ մենակ կթողնե՞ս, Մի՛ջ:
Միջ.- Անշուշտ... բայց ես զանգի եմ սպասում: *(Վերցնում է ճամպրուկն ու շարժվում՝ Ձ:)*
Սըր Հենրի.- Քեզ լուր կտամ, երբ զանգեն, իհարկե եթե չմոռանան:

Միջը դուրս է գալիս՝ Ձ: Սըր Հենրին մոտենում է ու փակում դուռը նրա ետևից:

(մոտենում է Տեսուչին՝ Ձ): Մի այլ երեսուներթ Սմիթ և Ուեստն, որը ցուցադրվում էր սրճագույն կաշվե պատյանով անհետացել է իմ գրասենյակից:
Տեսուչ.- *(դուրս հանելով մի ատրճանակ իր գրպանից):* Սա է՞, Սը՛ր Հենրի:

Սըր Հենրին զարմանում է, վերցնում է ատրճանակը Տեսուչի ձեռքից ու հանգամանորեն քննում:

Սըր Հենրի.- Այո՛... Այո՛, սա է: Որտեղի՞ց գտաք:
Տեսուչ.- Դա կարևոր չէ այս պահին: Բայց Դր. Քրիսթոն սպանվել է այս ատրճանակից արձակված գնդակով: Կարո՞ղ եմ խոսել ձեր սպասավորի հետ, Սը՛ր Հենրի: *(Ձեռքը երկարացնում է ատրճանակը ետ վերցնելու համար:)*
Սըր Հենրի.- *(ատրճանակը հանձնում է Տեսուչին):* Իհարկե: *(Շրջվում է, մոտենում բուխարիկին ու սեղմում զանգի կոճակը:)* Ցանկանում եք այստե՞ղ խոսել նրա հետ:
Տեսուչ.- *(ատրճանակը դնելով գրպանը):* Եթե դուք համաձայն եք, Սը՛ր Հենրի:
Սըր Հենրի.- Ուզում եք գնա՞մ, թե՞ մնամ: Ես կգերադասեի մնալ: Գաջընը հին և արժանի սպասավոր է:
Տեսուչ.- Ես ևս կգերադասեի, որ մնաք, Սը՛ր Հենրի:

Գաջընը ներս է մտնում՝ 2:

Գաջըն.- Դո՞ւք զանգահարեցիք, Սը՛ր Հենրի:
Սըր Հենրի.- Այո՛, Գաջըն: *(Մատնանշում է Տեսուչին:)*

Գաջընը քաղաքավարությամբ նայում է Տեսուչին:

Տեսուչ.- Գաջը՛ն, վերջերս քո տրամադրության տակ եղե՞լ է արդյոք մի փիսթոլ կամ մի ատրճանակ:

Սըր Հենրին նստում է բազկաթոռին՝ Կ2:

Գաջըն.- *(մտտենալով Տեսուչին՝ 2. անվրդով):* Չեմ կարծում, սը՛ր: Ես որևէ զենք չունեմ:
Սերժանտ.- *(կարդում է հուշատետրից):* «ակամայից նայեցի ճաղերից այն կողմ և տեսա Սր. Գաջընին՝ կանգնած դիմացի միջանցքում մի ատրճանակ ձեռքին...»

Գաջընը հակազդում է սեղմելով բռունցքները:

...շատ յուրահատուկ տեսքով...»:

Տեսուչը նայում է Սերժանտին, որն անմիջապես լռում է:

Գաջըն.- Դա միանգամայն ճիշտ է, սը՛ր, ցավում եմ, որ դա վրիպեց իմ հիշողությունից:
Տեսուչ.- Գուցե մեզ ավելի ստույգ պատմես, ինչ որ պատահել է:

Գաջըն.- Անշուշտ, սը՛ր: Դա շաբաթ օրը կեսօրից անց ժամը մեկին էր: Սովորաբար այդ ժամին ես ճաշը մատուցում եմ, սակայն քիչ առաջ պատահած սպանությունը հունից հանել էր տան բնականոն կարգը: Երբ անցնում էի դիմացի միջանցքով, նկատեցի, որ Սըր Հենրիի փիսթոլներից մեկը, դա մի փոքրիկ Դրինջըր էր, սը՛ր, դրված էր այնտեղ գտնվող կաղնե փայտից պատրաստված սնդուկի վրա: Ես մտածեցի, որ ճիշտ չէ դա թողնել այնտեղ ընկած, ուստի վերցրի, տարա տիրոջ գրասենյակը և դրեցի իր տեղը: Պետք է ավելացնեմ նաև, սը՛ր, որ չեմ կարծում այդ պահին իմ արտաքին տեսքը յուրահատուկ լիներ...

Տեսուչ.- *(մտտենալով գահավորակին՝ Ա):* Ասացիր, որ դա տեղավորեցիր Սըր Հենրիի հավաքածուի՞ մեջ: *(Անցնում է գահավորակի առջևից ու կանգնում դեմքով դեպի բեմը):* Հիմա դա այնտե՞ղ է:

Գաջըն.- Իմ համոզմամբ, այո՛, սը՛ր: Ես կարող եմ դա հեշտությամբ ստուգել:

Տեսուչ.- *(մտտենալով գահավորակին՝ 2 և գրպանից հանելով ատրճանակը:)* Այս ատրճանակը չէ՞ր:

Գաջըն.- *(մտտենալով Տեսուչին՝ 2 և նայելով ատրճանակին):* Օ՛հ, ոչ, սը՛ր, սա երեսունութ Սմիթ և Ուեստոն է, այն մյուսը մի փոքրիկ փիսթոլ էր, մի Դրինջըր:

Տեսուչ.- Թվում է՛ դու բավականին քաջատեղյակ ես զենքերից:

Գաջըն.- Ես մասնակցել եմ 1914-18 թվերի պատերազմին, սը՛ր:

Տեսուչ.- Ուրեմն՝ քո ասելով՝ այս Դրինջըր տեսակի փիսթոլը դու գտար դրված կաղնու փայտից պատրաստված սնդուկի վրա:

Գաջըն.- Ճիշտ այդպես, սը՛ր:

Լեդի Անգրթելը ներս է մտնում վերից՝ ԿԶ: Տեսուչը մոտենում է գահավորակի աջ կողմին:

Լեդի Անգրթել.- *(Չարժվելով՝ Կ):* Ինչ հաճելի է տեսնել ձեզ, Սր. Քոլքրիստին: Ի՞նչ է փիսթոլի ու Գաջընի մասին այս բոլորը: Ես տեսա մանկիկ Դորիսին, սուկալի արտասովելիս: Աղջիկն իրավունք ունի ասելու այն, ինչը տեսել է սեփական աչքերով, եթե իրոք տեսել է: Ես զգում եմ, որ ճիշտն ու սուտը ինձ էլ մոլորեցնում է. տանելի է, երբ սուտը հաճելի է իսկ ճշմարտությունը՝ տհաճ, բայց շփոթեցնող՝ հակառակ պարագային, եթե դուք անդրադառնում եք, թե ինչ եմ ուզում ասել: Դու նրանց ի՞նչ էիր ասում այս փիսթոլի մասին, Գաջը՛ն:

Գաջըն.- *(հարգալից, բայց շեշտադրությամբ):* Փիսթոլը ես գտա միջանցքում, տիրուհի՛ս, բայց պատկերացում չունեմ, թե դա ով էր դրել այնտեղ: Սա այն բոլորն է, ինչը ես ասացի Տեսուչին և նա լրիվ հասկացավ ինձ:

Լեդի Անգրթել.- *(Գաջընին՝ մեղմորեն զուխն օրորելով):* Դրա կարիքը չկար, Գաջը՛ն: Ես այդ մասին կխոսեմ Տեսուչի հետ:

Գաջըն.- Բայց...

Լեդի Անգրթել.- Ես գնահատում եմ քո միտումը, Գաջը՛ն. գիտեմ, որ դու միշտ ձգտում ես մեզ զերծ պահել անհանգստությունից ու զլիսացավանքներից: *(Խիստ:)* Առայժմ բավական է:

Գաջընը տատանվում է, հպանցիկ նայում է Սըր Հենրիին, խոնարհվում է ու դուրս գալիս՝ Զ: Սըր Հենրին լրջացած է երևում:

Լեդի Անգրթելը մոտենում է գահավորակին, նստում և հեզորեն ժպտում Տեսուչին:

Մի իսկապես մեծ բարեհոգություն էր Գաջընի կողմից: Միանգամայն ավատական, հասկանալի էր, այո՛, «ավատական»-ը այստեղ ամենաճիշտ բառն է: Ես այնպես եմ հասկանում, որ դուք որոշ հավելյալ տեղեկություններ ունեք խնդրի մասին:

Լեդի Անգրթել.- Իհարկե: Գաջընը ամենևին էլ զենքը չի գտել միջանցքում: Դա նա գտել էր ձվերը վերցնելիս:

Տեսուչ.- Ձվե՛րը:

Լեդի Անգրթել.- Այո՛, զամբյուղի միջից: *(Համոզված է, որ այժմ ամեն բան պարզ է:)*

Սըր Հենրի.- Կարո՞ղ է մի քիչ ավելի մանրամասն բացատրես, սիրելի՛ս, տեսուչ Քոլքրիստինը և ես դեռ գլխի չենք ընկել:

Լեդի Անգրթել.- Օ՛հ, գիտե՛ք, զենքը գտնվում էր զամբյուղի մեջ... ձվերի տակը:

Տեսուչ.- Ի՞նչ ձվեր և ի՞նչ զամբյուղ, Լեդի՛ Անգրթել:

Լեդի Անգրթել.- Չամբյուղը ես վերցրել էի ազարակ գնալիս: Չենք դրա մեջ էր. ես ձվերը շարեցի դրա վրա ու մոռացա գոյությունը: Երբ մենք գտանք խեղճ Ջոն Քրիսթոֆին սպանված, այնպես էի ցնցված, որ զամբյուղը ձեռքիցս կզցեի, եթե Գաջընը... ձվերը փրկելու համար չբռնեք դա ճիշտ ժամանակին...

Սըր Հենրին դանդաղ մոտենում է բուխարիկին:

Հետո ես նրան ասացի, որ թվական գրի ձվերի վրա, որպեսզի դուք թարմերը ուտեք հներից առաջ... բայց նա ասաց, որ ինքն արդեն դա արել է, և հիշում

եմ, որ նույնիսկ հուզված էր: Նա գտել էր զենքը, հասկանո՞ւմ եք, ու տարել, դրել Հենրիի գրասենյակը: Նրա կողմից՝ հիանալի և հավատարիմ, բայց նաև հիմար արարք, որովհետև, անշուշտ, տեսուչ, դուք միայն ձգտում եք լսել ճշմարտությունը:

Տեսուչ.- *(անցնելով գահավորակի հետևից՝ Կ: Խիստ):* Էականն ինձ համար ճշմարտությունն է:

Լեդի Անգրթել.- Իհարկե: Այո՛, բոլորը շատ տխուր են: Այս հարցաքննություննե՛րը մարդկանցից...

Տեսուչը գնում է գահավորակի ձախ կողմը:

Ես չեմ կարծում՝ ով էլ լիներ Ջոն Քրիսթոֆի վրա կրակողը, իսկապես դա արել էր սպանելու նպատակով...

Տեսուչը և Սերժանտը նայում են իրար:

... ուզում եմ ասել՝ միտումնավոր: Եթե դա Գերդան էր (լիովին համոզված եմ, որ նա չի եղել) իսկապես շատ կգարմանայի, որ նա չի վրիպել, մի բան, որը սպասելի էր նրանից:

Տեսուչը անցնում է գահավորակի հետևից՝ Ա:

Իսկ եթե նա է կրակել, ապա հավանաբար հիմա սոսկալի գոջում է այդ պատճառով: Շատ վատ է երեխաների համար՝ տեսնել հորը սպանված ու մորը՝ կախաղանի վրա... *(Նախատական:)* Երբեմն կասկածում եմ, թե դուք՝ ոստիկաններդ, արդյոք կարևորություն տալի՞ս եք նման նրբություններին:

Տեսուչ.- *(անցնելով գահավորակի հետևից՝ Ջ. շփոթված):* Մենք չենք պատրաստվում այս պահին իրականացնել որևէ ձերբակալություն, լեդի՛ Անգրթել:

Լեդի Անգրթել.- *(շողացող ժպիտով):* Դե՛, դա շատ խելամիտ է: Ես հաճախ զգում եմ, որ դուք շատ խելամիտ անձնավորություն եք, Մր. Քոլքրիստ:

Տեսուչ.- Ը՛ր... շնորհակալ եմ, լեդի՛ Անգրթել *(Կանգ է առնում՝ Կ և շրջվում:)* Հիմա ուզում եմ սա պարզել: *(Գնում է ցած՝ ՋԿ:)* Դուք կրակում էիք ա՛յս ատրճանակով:

Լեդի Անգրթել.- Փիսթոլով:

Տեսուչ.- Ա՛հ, այո՛. Գաջընը ասաց: Դուք դրանով կրակում էիք թիրախի՞ն:

Լեդի Անգրթել.- Օ՛հ, ո՛չ: Ես այդ վերցրի Հենրիի գրասենյակից նախքան ազարակ գնալս:

Տեսուչ.- *(նայելով Սըր Հենրիին և ապա բազկաթոռին՝ ԿՋ):* Կարո՞ղ եմ նստել:

Սըր Հենրիին հաստատում է գլխի շարժումով:

(նստում է): Ինչո՞ւ, լեդի՛ Անգրթել:

Լեդի Անգրթել.- *(անսպասելի ցնծությամբ):* Գիտեի, որ դա կհարցնեք ինձանից: Եվ դրա համար մի պատասխան կգտնվի, անշուշտ: *(Նայում է Սըր Հենրիին:)* Չի՞ գտնվի, Հենրի՛:

Սըր Հենրի.- Ես էլ անկասկած այդ մտքին եմ, սիրելի՛ս:

Լեդի Անգրթել.- Այո՛, ակնհայտորեն ես մի բան մտածել էի, երբ վերցրի այդ փոքրիկ Դրինջըրը և դրեցի իմ ձվերի զամբյուղի մեջ: (Հույսով նայում է Սըր Հենրիին:) Չգիտեմ՝ դա ինչպես եղավ:

Սըր Հենրի.- Իմ կինը ծայրահեղ մոռացկոտ է, տես՛ւ՛չ:

Տեսուչ.- Այդպես էլ երևում է:

Լեդի Անգրթել.- Ինչի՞ համար էի վերցրել այս փիսթոլը:

Տեսուչ.- Ամենափոքրիկ գաղափարն անգամ չունեմ, լեդի՛ Անգրթել:

Լեդի Անգրթել.- *(կանգնելով)*: Ես եկա այստեղ... սա քո գրասենյակն է Հենրի... այնտեղ, պատուհանը, այստեղ՝ բուխարիկը: Ես Միմընդի հետ խոսում էի բարձերի ծածկոցների մասին... մի րոպե թողնենք բարձերի ծածկոցները. պարզ հիշում եմ, որ մոտեցա *(գնում է դեպի գրասենյակը)*, բուխարիկին... և մտածեցի, որ անհրաժեշտ է նոր կրակախառնիչ գնել... դուք թերևս շատ երիտասարդ եք, որ հասկանաք՝ թե այս բոլորը ինչ է նշանակում...

Տեսուչը և Սերժանտը հայացքներ են փոխանակում:

Եվ ես հիշում եմ, բացում եմ գորոցն ու վերցնում Դրինջըրը... դա ձեռքի սիրուն մի փոքրիկ զենք է... միշտ սիրել եմ դա... և դրեցի ձվերի զամբյուղի մեջ: Հետո ես... Ո՛չ, ուրիշ բաներ էլ կային իմ ձեռքում... (Մոտենում է գահավորակին ու նստում)... Ձեռուտ կապող... Եվ հույս ունեի, որ Միսիս Մեյուելը կպատրաստի մի շքեղ սև փուղինգ:

Սերժանտ.- *(չկարողանալով զսպել իրեն)*: Սև փուղի՞նգ:

Լեդի Անգրթել.- Այո՛, շոկոլադով, ձվով և կրեմով: Ջոն Քրիսթոն լավ անուշեղեն էր սիրում:

Տեսուչ.- *(մոտենալով գահավորակին՝ Չ)*: Դուք փիսթոլը լցրի՞ք:

Լեդի Անգրթել.- *(մտածելով)*: Ը՛, լցրի՛: Իսկապես շատ անհեթեթ է, որ չեմ կարողանում հիշել: Բայց կարծում եմ պիտի լցրած լինեի, դուք չե՞ք կարծում, տես՛ւ՛չ:

Տեսուչ.- Ես կարծում եմ... կուզեի մի քանի բառ խոսել Գաջընի հետ: *(Շրջվում է ու մոտենում դռան՝ Չ)*: Երբ դուք մի քիչ ավելի լավ մտաբերեք ամեն բան, գուցե հետո կպատմե՞ք ինձ, լեդի՛ Անգրթել:

Սերժանտը մոտենում է դռան՝ Չ:

Լեդի Անգրթել.- Իհարկե: Երբեմն որոշ բաներ մարդ մտաբերում է միանգամից, այդպես չե՞, տես՛ւ՛չ:

Տեսուչ.- Այո՛:

դուրս է գալիս՝ Չ: Սերժանտը հետևում է նրան: Ժամացույցը ազդարարում է ժամը տասնմեկը:

Սըր Հենրի.- *(մոտենալով գահավորակին՝ Չ)*: Դու փիսթոլը ինչն՞ով վերցրիր, Լյուսի՛:

Լեդի Անգրթել.- Իսկապես, չգիտեմ, Հենրի... Ես մի պատահար էի կանխազգում աղոտ կերպով,

Սըր Հենրի.- Պատահա՞ր...

Լեդի Անգրթել.- Այո՛, այնքան հեշտ է սայթաքել հողից դուրս եկած արմատների վրա քայլելիս... Միշտ մտածել եմ, որ պատահարը ամենապարզ ձևն է, որ կարող է պատճառ դառնալ նման մի սպանության: Իհարկե, մարդ հետո շատ կզղջա և իրեն կմեղադրի... *(Չայնր մարում է:)*

Սըր Հենրի.- Իսկ ո՞վ պիտի զոհ գնար պատահարի հեկանքով:
Լեդի Անգրթեյլ.- Ջոն Քրիսթոն, անշուշտ:
Սըր Հենրի.- *(նստելով նրա ձախ կողքին)*: Աստծո սիրույն, Լյուսի՛ :

Լեդի Անգրթեյլի տոնը փոխվում է հանկարծ: Վերանում է պարզությունը տեղը տալով ֆանաստիզմի:

Լեդի Անգրթեյլ.- Օ՛հ, Հենրի՛, ես սարսափելի մտատանջվում էի Էյնգուիքի համար:
Սըր Հենրի.- Այդպե՛ս: Ուրեմն՝ այս բոլորը Էյնգուիքի պատճառով էր: Դու չափից ավել ես մտածում Էյնգուիքի մասին, Լյուսի՛ :

Լեդի Անգրթեյլ.- Դու և Էդուարդը Անգրթեյլների վերջին շատավիղն էք: Եթե Էդուարդը չամուսնանա, ամեն բան ձեռքից կգնա... Նա շատ համառն է... Նրա երկարավուն գլուխը ճիշտ իմ հորն է հիշեցնում: Ես զգում էի, որ Հենրիեթան կամուսնանար Էդուարդի հետ, եթե միայն Ջոնը չկանգներ նրա ճանապարհին: Հենրիեթան իսկապես համակրում էր նրան, բայց երբ մարդը մեռնում է, շուտ էլ մոռացվում է: Ուրեմն՝ ամեն բան հանգում էր նրան... թե ինչպես պիտի ազատվել Ջոն Քրիսթոնից...

Սըր Հենրի.- *(սարսափած)*: Լյուսի՛ ... Այդ դո՞ւ ես...

Լեդի Անգրթեյլ.- *(հր սովորական տոնով)*: Սիրելի՛ս, սիրելի՛ս, չլինի՞ մի պահ կարծեցիր, թե ես եմ կրակել Ջոնի վրա: *(Ծիծաղում է, բարձրանում տեղից, մոտենում է բուխարիկին ու վերցնում շոկոլադի տուփը)*: Ճիշտ է, պատահարի գաղափարը ծնվել էր իմ գլխում... Բայց հետո մտաբերեցի, որ նա մեր հյուրն է: *(Գնում է՝ Կ)*: Հյուր չեն հրավիրում, որ հետո թաքնվեն մի թփի հետև ու կրակեն նրա վրա: *(Անցնում է գահավորակի ետևն ու հենվում թիկնակին)*: Ուստի, դու իզուր մի մտահոգվիր, Հենրի՛ :

Սըր Հենրի.- *(խոպտոված)*: Ես միշտ մտահոգվում եմ քեզ համար, Լյուսի՛ :

Լեդի Անգրթեյլ.- *(մի շոկոլադ վերցնելով տուփի միջից)*: Դրա կարիքը չկա, սիրելի՛ս: Տե՛ս՝ ինչ է գալիս. բացի ր:

Սըր Հենրին բացում է բերանը:

(շոկոլադը դնում է Սըր Հենրիի բերանը): Եվ առանց մեր կողմից մի քայլ անելու՝ Ջոնը չեզոքացվեց: Դա ինձ հիշեցրեց մեկին, որն ինձ շատ վատ կոպտեց ու վիրավորեց Բոմբեյում տեղի ունեցած մի երեկույթի ընթացքին: *(Մոտենում է պատուհանին՝ Ա)*: Հիշո՞ւմ ես: Երեք օր անց նա մնաց գնացքի տակ...

դուրս է գնում՝ Ա: Հեռախոսը զանգահարում է: Սըր Հենրին բարձրանում է, մոտենում հեռախոսին ու վերցնում ընկալուչը:

Հեռախոսավար.- Ձեր Ռիջենթի պատվերը, սը՛ր:

Սըր Հենրի.- *(ընկալուչի մեջ)*: Ալո... այո՛, Ռիջենթի՞ :

Միջը ներս է մտնում՝ Ձ:

Միջ.- Ի՞նձ համար է:

Սըր Հենրի.- Այո՛ :

Միջը մոտենում է ու վերցնում ընկալուչը Սըր Հենրիի ձեռքից: Սըր Հենրին դուրս է գալիս՝ Ա:

Միջ.- *(ընկալուչի մեջ):* Բարև, այդ Մադամն է:
Չայն.- Ոչ, ես Վերան եմ:
Միջ.- Կարող եմ Մադամի հետ խոսել:
Չայն.- Ընկալուչը պահի՛ր, հենց հիմա:

կարճ դադար: Հետո լսվում է ուրիշ Չայն հեռախոսի միջից:

Չայն.- Այո, Մադամ Հենրին է խոսում:
Միջ.- Սա Միսս Հարվին է:
Չայն.- Ինչո՞ւ այստեղ չես: Դու կգաս այսօր կեսօրից հետո, այո՞:
Միջ.- Ո՛չ, ո՛չ, կարծում եմ չեմ կարող գալ կեսօրից հետո:

Էդուարդը ներս է մտնում՝ ԿՁ և գնում Կ):

Չայն.- Օ՛հ, միշտ այս արդարացումները:
Միջ.- Ո՛չ, ո՛չ սա արդարացում չէ:

Էդուարդը ակնարկով հարցնում է, թե արդյոք կարո՞ղ է մնալ:

(Միջը ասիով ծածկում է ընկալուչը: Էդուարդին): Ո՛չ...ո՛չ, մի՛ գնա: Խոսում եմ խանութի հետ:
Չայն.- Բա ի՞նչ է:
Միջ.- *(Ընկալուչի մեջ):* Մի պատահար է տեղի ունեցել:

Էդուարդը մի օրաթերթ է վերցնում կլոր սեղանի վրայից ու նստում գահավորակի ձախ եզրին:

Չայն.- Մի պատահա՞ր: Մի ստիր ու պատրվակներ մի բեր:
Միջ.- Ո՛չ, ես չեմ ստում ու պատրվակներ չեմ բերում: Այսօր չեմ կարող վերադառնալ: Ինձ արգելված է հեռանալ այստեղից: Դա ոստիկանության կարգադրությունն է:
Չայն.- Ոստիկանությա՞ն:
Միջ.- Այո՛, ոստիկանության:
Չայն.- Ի՞նչ ես արել:
Միջ.- Ես մեղավոր չեմ: Այսպիսի դիպվածներ լինում են:
Չայն.- Դու որտե՞ղ ես:
Միջ.- Դաուֆիլդում:
Չայն.- Ուր սպանությո՞ւն է տեղի ունեցել:
Միջ.- Այո՛, դուք թերթո՞ւմ եք կարդացել:
Չայն.- Իհարկե: Սա շատ վատ է: Ի՞նչ կասեն իմ հաճախորդները, երբ իմանան, որ դու էլ խառնված ես եղել սպանության մեջ:
Միջ.- Ես ոչ մի մեղք չունեմ:
Չայն.- Այս բոլորը անհանգստացուցիչ է:
Միջ.- Ոճի՛րն այդպիսին է:

- Չայն.- Դա քեզ համար երևի շատ ուշագրավ է, շատ հաճելի, որ գտնվում ես ուշադրության կենտրոնում, լուսարձակի տակ...
- Միջ.- Կարծում եմ՝ դուք անարդարացի եք:
- Չայն.- Եթե այսօր չվերադառնաս, կկորցնես աշխատանքդ: Շատ աղջիկներ կան, որ ուրախ կլինեին քո տեղը զբաղեցնելու:
- Միջ.- Խնդրում եմ դա մի ասեք, ես շատ եմ ցավում:
- Չայն.- Կվերադառնաս վաղը կամ այլևս չհամարձակվես նորից հայտնվել:

Միջը դնում է ընկալուչը: Հագիվ է գսպում լացը:

- Էդուարդ.- Ո՞վ էր:
- Միջ.- Իմ գործատերը:
- Էդուարդ.- Դու նրան գրողի ծոցը պիտի ուղարկեիր:
- Միջ.- Եվ ինքս ինձ վտարե՞ի գործից:
- Էդուարդ.- Չեմ կարողանում դիմանալ լսելով քո այդքան... կամակատար տոնը:
- Միջ.- Դու չես հասկանում՝ ինչ ես ասում: *(Գնում է գահավորակի ետևը)*: Անկախ լինելու համար անհրաժեշտ է ունենալ նաև անկախ եկամուտ:
- Էդուարդ.- Աստված իմ, Մի՛ջ, ուրիշ աշխատանքներ էլ կան... հետաքրքիր աշխատանքներ:
- Միջ.- Այո՛, դու ամեն օր «Թայմզ»-ում կարդում ես հայտարարություններ այդ մասին:
- Էդուարդ.- Այո՛:
- Միջ.- Երբեմն, Էդուա՛րդ, դու ստիպում ես ինձ կորցնել ինքնատիրապետումս: Դու ախր ի՞նչ գիտես գործերի մասին: Կարծում ես՝ գործը դրված է այնտեղ, որ վերցնես ու տիրանա՛ս: Իր տանելի ժամերի համեմատությամբ այս աշխատանքի համար լավ են վճարում: Ես դա գտա պատահաբար:
- Էդուարդ.- Օ՛հ, էլի փող:
- Միջ.- *(գնալով գահավորակի Ձ կողմը)*: Այո՛, փող: Դա այն է, ինչով ես գոյատևում եմ: Աշխատանքն է պահում ինձ: Հասկանո՞ւմ ես:
- Էդուարդ.- Հենրիին և Լյուսին կուզեին...
- Միջ.- Այդ մասին խոսել ենք արդեն: Անշուշտ կուզեին: *(Մոտենում է բուխարիկին)*: Դա լավ չէ, Էդուա՛րդ: Դու Անգրթել ես, Հենրիին և Լյուսին էլ Անգրթել են, բայց ես կիսով չափ եմ Անգրթել: Իմ հայրը հասարակ, փոքր բիզնեսմեն էր... Ազնիվ, աշխատասեր ու թերևս ոչ շատ բանիմաց մեկը: Ես երևի նրան եմ քաշել, որ չեմ սիրում ապավինել ուրիշների աջակցությանը: Երբ հայրս վնասվեց, նրա պահանջատերները մեկ փառնոց պարտքի դիմաց վերցնում էին քսան շիլինգ: Ես նման եմ նրան: Ես հաշվի եմ նստում փողի ու պարտքի հետ, դու դա չես հասկանում, Էդուա՛րդ: Դա քո և Լյուսիի համար կարևորություն չունի: Լյուսիի ընկերներից յուրաքանչյուրը կարող է անորոշ ժամանակով մնալ նրա մոտ և նա այդ մասին երբևէ չի էլ մտածի... Ինքն էլ, անհրաժեշտ պարագային, կկարողանա գնալ ու մնալ իր ընկերների մոտ առանց որևէ պարտավորություն զգալու: Բայց ես տարբեր եմ:
- Էդուարդ.- *(բարձրանալով)*: Դու, սիրելի՛, ծիծաղելի մանկի՛կ: *(Թերթերը դնում է կլոր սեղանի վրա)*
- Միջ.- Գուցե ծիծաղելի եմ, բայց մանկիկ չեմ:

- Էդուարդ.- *(մոտենալով բուխարիկին ու կանգնելով Միջի ետևը):* Բայց սխալ է, երբ դու ստիպված ես դիմակայելու կոպտությանն ու վիրավորանքներին: Աստված իմ, Մի՛ջ, որքան կուզեի քեզ դուրս քաշել այս բոլորից... քեզ տանել Էյնզուիք:
- Միջ.- *(բռնկված ու լացակումած):* Դու ինչո՞ւ ես ասում այդ հիմար խոսքերը, երբ ինքդ էլ դա նկատի չունես: *(նստում է փուֆիկի վրա)* Կարծո՞ւմ ես՝ կյանքս ավելի դյուրին կդառնար, եթե ընկալուչի մեջ սպառնալի կամ բղավեի այն հույսով, որ աշխարհում մի Էյնզուիք կա: Կարծո՞ւմ ես՝ շնորհակալ եմ քեզանից, որ այդտեղ կանգնել ու շաղակրատում ես, թե կուզես ինձ դուրս քաշել այս բոլորի միջից... Դա շատ մեծահոգաբար է հնչում քո կողմից, բայց բացարձակապես ոչինչ չի նշանակում:
- Էդուարդ.- Մի՛ջ...
- Միջ.- Դու գիտե՞ս, որ ես պատրաստ եմ հենց այս վայրկյանին իմ հոգին վաճառել, միայն թե լինեմ Էյնզուիքում: Ես պաշտում եմ Էյնզուիքը շատ ավելի, քան դա կարող եմ տեղավորել ուղեղիս մեջ: Դու շատ դաժան ես, Էդուա՛րդ, որ լավ խոսքեր ես շոայլում, առանց խորանալու դրանց իմաստի մեջ:
- Էդուարդ.- Բայց ես ասում եմ այն, ինչը նկատի ունեմ: *(Շարժվում է կենտրոն և դեմ առ դեմ կանգնում Միջի առջև):* Արի՛, Մի՛ջ, արի հենց հիմա իմ մեքենայով գնանք Էյնզուիք:
- Միջ.- Էդուա՛րդ...
- Էդուարդ.- *(Միջին քաշելով դեպի իրեն):* Արի՛, Մի՛ջ: Մենք գնում ենք Էյնզուիք: Գնո՞ւմ ենք, թե չե՞, ի՞նչ կասես, հը՞...
- Միջ.- *(Հիստերիկ ծիծաղելով):* Ես դրդում եմ քեզ, որ ստես, այդպես չե՞:
- Էդուարդ.- Ո՛չ, դա սուտ չէ:
- Միջ.- *(ձեռքով թփթփացնելով Էդուարդի թևին ու մոտենալով գահավորակին՝ 2):* Հանգստացիր, Էդուա՛րդ: Ամեն դեպքում ոստիկանությունը դա թույլ չի տա:
- Էդուարդ.- Այո՛, ես էլ եմ կարծում:
- Միջ.- *(նստելով գահավորակի ձախ ծայրին):* Էդուա՛րդ, ցավում եմ, որ բղավեցի քեզ վրա:
- Էդուարդ.- *(հանդարտ):* Դու իսկապես սիրո՞ւմ ես Էյնզուիքը, չե՞:
- Միջ.- Ես վաղուց համակերպվել եմ այնտեղ չգնալու փաստի հետ, բայց մի՞թե կարող եմ անդադար չհիշեցնել ինձ Էյնզուիքի գոյությունը:
- Էդուարդ.- Հասկանալի է, որ մենք չենք կարող դուրս նետվել ու սլանալ այնտեղ այսօր առավոտյան: Բայց առաջարկում եմ, որ գաս ու մշտապես հաստատվես Էյնզուիքում:
- Միջ.- Մշտապե՞ս:
- Էդուարդ.- Ես քեզ առաջարկում եմ ինձ հետ ամուսնանա, Մի՛ջ:
- Միջ.. Ամուսնանա՞լ...
- Էդուարդ.- Գիտե՞ս՝ ես շատ ռոմանտիկ մեկը չեմ, տաղտկալի եմ: Կարդում եմ այնպիսի գրքեր, որոնք, կարծում եմ, դու կհամարես ձանձրալի, գրում եմ որոշ ձանձրացուցիչ գրություններ կալվածների մասին ու պարապ թրև եմ գալիս ագարակում: Բայց մենք երկար ժամանակ ճանաչում ենք իրար և թերևս Էյնզուիքը կփրկի ինձ: Կգա՞ս, Մի՛ջ:
- Միջ.- Ամուսանանլու և ապրելու քե՞զ հետ: *(բարձրանում է տեղից):*
- Էդուարդ.- Իսկ դու հակվա՞ծ չես այդ գաղափարին:

Միջ.- *(ծնկում է գահավորակի ձախ եզրին ու հենվելով թիկնակին՝ դեպի էդուարդը: Ընդհատ):* Էդուա՛րդ, օ՛հ, Էդուա՛րդ... դու ասես ողջ դրախտն ես ինձ հրամսնում բռան մեջ...

Էդուարդը վերցնում ու համբուրում է նրա ձեռքերը: Լեդի Անգրթելը ներս է մտնում՝ Ա:

Լեդի Անգրթել.- *(ներս մտնելով):* Կարծիքս բաղեղների մասին այն է, որ եթե նրանց չաճեցնես խուրձերով, ապա չես ստանա գեղեցիկ...

Միջ.- *(վեր կենալով ու շրջվելով դեպի Լեդի Անգրթելը):* Էդուարդն ու ես ամուսնանում ենք:

Լեդի Անգրթել.- *(սալշած):* Ամուսանան՞ում եք: Դու և Էդուա՛րդը: Բայց, Մի՛ջ, ես երբեք չեի երազ... *(Վերագտնում է իրեն, մոտենում է Միջին, համբուրում նրան, հետո ձեռքը պարզում է էդուարդին:)* Օ՛հ, սիրելի՛ս, ես շատ ուրախ եմ: *(Սեղմում է էդուարդի ձեռքը և դեմքը պայծառանում է:)* Ես այնքան երջանիկ եմ: Դու կմնաս այստեղ ու ձեռք կքաշես այդ անտանելի խանութից: Դուք կարող եք ամուսնանալ այստեղ... Հենրիին ամուսնության արարողության ընթացքին քո հոր դերը կստանձնի:

Միջ.- Միրելի՛ Լյուսի, ես էլ եմ փափագում ամուսնանալ այստեղ:

Լեդի Անգրթել.- Բեժ գույնի սատին հարսի հագուստ, փղոսկրե կազմով աղոթագիրք, ոչ մի բուկետ: Իսկ հարսնաքո՛ւյր:

Միջ.- Օ՛հ, ո՛չ, ես չեմ ցանկանում մեծ հարսանիք անել:

Էդուարդ.- Ուղղակի շատ անաղմուկ պսակադրություն, Լյուսի՛:

Լեդի Անգրթել.- Ես լրիվ հասկանում եմ ինչ ես ուզում ասել, սիրելի՛ս: Մինչև հարսնաքույրերի լավ ընտրություն չանես, նրանք երբեք կարգին չեն հարմարվի մեկը մյուսի հետ: Պարզ արտաքինով մեկը կփչացնի ողջ էֆեկտը՝ սովորաբար փեսայի քույրը: Իսկ երեխաները... երեխաները ամենից վատն են: Խախտում են երթը, ճչում են դայակի համար: Ես երբեք չեմ հավատացել, որ հարսը կարող է հանգիստ մտքով ընթանալ դեպի խորան, երբ վստահ չէ, թե ինչ է կատարվում իր հետևում:

Միջ.- Կարիք չկա, որ հարսանեկան թափոք լինի ու մեկը գա իմ հետևից: Ես կարող եմ պսակվել ուղղակի մի ժակետով ու սովորական փեշով:

Լեդի Անգրթել.- *(բարձրանալով ու գնալով՝ ՉԳ):* Օ՛հ, ո՛չ, Մի՛ջ... դա նման է այրի կնոջ պսակադրության: Բեժ գույնի սատին հագուստ, և քեզ կտանեն Միրեի մոտ:

Միջ.- Ես թերևս ի վիճակի չլինեմ Միրեի մոտ գնալու:

Լեդի Անգրթել.- Անգի՛նս, Հենրիին ու ես կտանք քո օժիտը:

Միջ.- *(մոտենալով Լեդի Անգրթելին ու համբուրելով նրան):* Միրելի՛ս: *(Շրջվում է, մոտենում է էդուարդին և բռնում նրա ձեռքերը:)*

Լեդի Անգրթել.- Միրելի՛ Միջ, սիրելի՛ Էդուարդ, հուսով եմ Հենրիի շավարի ուսակապերը երկար չլինեն: Ես կուզեի նա հաճույք ստանա: Գալով ինձ՝ ես կրհագնեմ... *(փակում է աչքերը:)*

Միջ.- Ի՞նչ, Լյուսի՛:

Լեդի Անգրթել.- Հիդրանժայի կապույտ... և արծաթագույն կոշիկներ: Որոշված է: Ինչ ցավալի էր Չոն Քրիսթոֆի մահը, և հիմնականում՝ ոչ անհրաժեշտ... Բայց որքան արտասովոր հանգստյան օրեր ունեցանք: *(Մոտենում է Միջին և էդուարդին՝ Չ:)* Նախ ոճիք, հետո ամուսնություն, հետո այս, հետո այն:

Տեսուչը և Սերժանտը ներս են մտնում՝ Ձ:

(շրջվում է): Եկե՛ք... Եկե՛ք, այս երիտասարդ գույգը հենց նոր նշանվեց ամուսնության նպատակով:

Տեսուչ.- Իսկապե՞ս: Շնորհավորում եմ:

Էդուարդ.- Անչափ շնորհակալ եմ:

Լեդի Անգրթել.- *(մոտենալով դռան՝ Ձ):* Կարծում եմ՝ ես պիտի պատրաստվեմ հետաքննության համար: Անչափ անհամբեր եմ դարձել, որովհետև նախապես ներկա չեմ եղել որևէ հետաքննության ակտի:

Դուրս է գալիս՝ Ձ: Սերժանտը փակում է դուռը: Էդուարդը և Միջը դուրս են գալիս՝ Ա:

Սերժանտ.- *(գնալով՝ Ա):* Մարդ պիտի սրտինը ասի. նա շատ տարօրինակ մեկն է: *(Գլխով ցույց է տալիս աջ պատուհանը:)* Իսկ այն երկո՞ւսը: Ուրեմն՝ տղան հետաքրքրված է եղել նրանով, այլ ոչ թե այն մյուսով:

Տեսուչ.- Այդպես է երևում:

Սերժանտ.- Դե՛, այս հանգամանքը նրան ինքնին մաքրագերծում է: Իսկ ո՞վ է մնում տակը:

Տեսուչ.- Մենք միայն Գաջընին լսեցինք, որի ասությանմբ Լեդի Անգրթելի զամբյուղում եղած ատրճանակը հենց նրա ասածն էր: Դեռևս ամեն ինչ անորոշ է: Գիտե՞ս, Փեննի՛, մենք մոռացել ենք ատրճանակի պատյանի գոյությունը:

Սերժանտ.- Պատյանի՞:

Տեսուչ.- Մըր Հենրին ասաց, որ ատրճանակը սովորաբար պահվում էր մի սրճագույն կաշվե պատյանի մեջ: Ո՞ւր է այդ պատյանը:

Մըր Հենրին ներս է մտնում՝ Ձ:

Մըր Հենրի.- Ինձ թվում է՝ ժամանակն է մեկնելու համար: *(Գնում է դեպի պատուհանը՝ Ա:)* Բայց, ասես, բոլորն անհետացել են՝ դրդված արտակարգ պատճառներից: *(Նայում է պատուհանից դուրս ու կանչում:)* Էդուա՛րդ, Մի՛ջ:

Լեդի Անգրթելը ներս է մտնում՝ Ձ: Հագել է իր գլխարկն ու բաճկոնը: Ձեռքին աղոթագիրք կա, նաև՝ մեկ սպիտակ ու մեկ մոխրագույն ձեռնոց:

Լեդի Անգրթել.- Իմ տեսքն ինչպիսի՞ն է. պատշա՞ճ եմ հագնվել:

Մըր Հենրի.- Միրելի՛ ս, դու աղոթագրքի կարիք չունես:

Լեդի Անգրթել.- Բայց ես մտածում էի, որ պիտի երդվենք:

Տեսուչ.- Հետաքննչական գերատեսչությունում երդումը անհրաժեշտ չէ վկայության համար, լեդի՛ Անգրթել: Ինչևէ, ամեն դեպքում, այսօր կպահպանվի պաշտոնականությունը:

Սերժանտը մոտենում է դռան՝ Ձ:

Տեսուչ.- Դե՛, ինձ կներեք, մենք պիտի մեկնենք:

Դուրս է գալիս՝ Ձ: Սերժանտը դուրս է գալիս նրա հետևից:

Լեդի Անգրթել.- *(մոտենալով բուխարիկին):* Դու, ես և Գերդան կգնանք Դայմլերով, Էդուարդը կվերցնի Միջին ու Հենրիեթային:
 Սըր Հենրի.- *(գնալով՝ Կ):* Իսկ Գերդան ո՞ւր է:
 Լեդի Անգրթել.- Հենրիեթան նրա հետ է:

Էդուարդ և Միջը ներս են մտնում՝ Ա: Միջը գրասեղանի վրայից վերցնելով իր պայուսակն ու ձեռնոցները, անցնում է գահավորակի հետևը: Էդուարդը գահավորակի հետևից մոտենում է Սըր Հենրիին՝ Ա:

Սըր Հենրի.- Դե՛, այս ի՞նչ լսեցի ձեր երկուսի մասին: *(Սեղմում է Էդուարդի ձեռքը:)*
 Հրաշալի նորություն է: *(Մոտենում է Միջին՝ Ձ ու համբուրում նրան:)*
 Էդուարդ.- Շնորհակալ եմ, Հենրի՛:
 Միջ.- Շնորհակալ եմ, Հենրի՛:
 Լեդի Անգրթել.- *(նայելով իր ձեռնոցներին):* Իսկ ի՞նչը ստիպեց ինձ վերցնել մեկ սպիտակ ու մեկ մոխրագույն ձեռնոց: Տարօրինակ է:

դուրս է գալիս՝ Ձ:

Էդուարդ.- *(գնալով վերև՝ Կ):* Գնամ մոտեցնեմ մեքենան:

դուրս է գալիս վերևից՝ ԿՁ:

Միջ.- *(նստելով գահավորակին):* Դու իսկապես ուրա՞խ ես:
 Սըր Հենրի.- Դա ամենալավ նորությունն էր, որ լսում եմ երկար ժամանակից հետո: Դուք չգիտեք, թե դա ինչ է նշանակում Լյուսիի համար: Ինչպես գիտես, նա նկատի է ունենում նաև Էյնգուիքը:
 Միջ.- Նա ուզում էր, որ Էդուարդը ամուսնանա Հենրիեթայի հետ: *(Մտախոհ:)* Նրա համար կարևոր չէ, որ ինձ վիճակվեց...
 Սըր Հենրի.- Իհարկե՛ ո՛չ: Նա միայն ցանկանում էր, որ Էդուարդն ամուսնանա: Եթե ինձանից հարցնես, դու Հենրիեթայից շատ ավելի լավ կին կլինես նրա համար:
 Միջ.- Միշտ Հենրիեթան է եղել Էդուարդի հետ:
 Սըր Հենրի.- *(մոտենալով բուխարիկին):* Դու այդ մասին ոչինչ մի ասա ուստիկանությանը: *(Շախմորձը լցնում է բուխարիկի վրա դրված ծխախոտատուփից):* Դա թերևս ամենաարդարացուցիչ երևույթն է, որ նա նշանվել է քեզ հետ, որով վերանում են նրա հանդեպ եղած բոլոր կասկածները:
 Միջ.- *(բարձրանալով):* Կասկածնե՛րը, Էդուարդի՞ ց...
 Սըր Հենրի.- Չհաշված Գերդային, ես կասեմ, համար մեկ կասկածյալը նա է, այն պարզ դատողությամբ, որ ատում էր Ջոն Քրիսթոփին:
 Միջ.- *(անցնելով՝ Կ և գնալով վերև՝ Ձ):* Հիշում եմ... Սպանության հաջորդ երեկոյան... Ուրեմն՝ այդ պատճառով է... *(Դեմքին հայտնվում է հուսալքվածություն ու թախիծ:)*

Հենրիեթան ներս է մտնում՝ Ձ:

Հենրիեթա.- Օ՛հ, Հենրի, ես Գերդային վերցնում եմ ինձ հետ: *(Մոտենում է կլոր սեղանին ու վերցնում է իր պայուսակն ու ձեռնոցները:)* Նա մի քիչ ներվային դրության

մեջ է... և կարծում եմ Լյուսիի մեկ խոսքն անգամ նրան կտապալի: Մենք հիմա կմեկնենք:

Մըր Հենրի.- *(մոտենալով դռան 'Ձ)*: Այո՛, մենք էլ պիտի շարժվենք:

դուրս է գալիս՝ Ձ, դուռը բաց թողնելով:

Հենրիեթա.- *(դրսից՝ կանչելով)*: Պատրա՞ստ ես, Լյուսի՛: *(հագնելով ձեռնոցները)*: Շնորհավորում եմ, Մի՛ջ: Բարձրացա՞ր սեղանին ու բղավեցի՞ր նրա վրա:

Միջ.- *(հանդիսավոր)*: Կարծում եմ՝ այո՛:

Հենրիեթա.- Ես քեզ ասացի, դա այն էր, ինչի կարիքն ունեի Էդուարդը:

Միջ.- *(մոտենում է ռադիորնդունիչին)*: Չեմ կարծում՝ բացի քեզանից Էդուարդը իսկապես սիրի ուրիշ մեկի:

Հենրիեթա.- Օ՛հ, հիմար մի եղիր, Մի՛ջ:

Միջ.- Հիմար չեմ: Դա ամեն մարդ գիտի:

Հենրիեթա.- Էդուարդը չէր խնդրի քեզանից ամուսնանալ իր հետ, եթե դա չցանկանար:

Միջ.- *(միացնելով ռադիորնդունիչը)*: Գուցե նա այդպես է վարվել ելնելով... շրջա-
հայեցողությունից...

Հենրիեթա.- Ի՞նչ ես ուզում ասել:

Գերդա.- *(դրսից՝ Ձ. կանչում է)*: Հենրիեթա՛:

Հենրիեթա.- *(մոտենալով դռան 'Ձ)*: Գալիս եմ, Գերդա՛:

Դուրս է գալիս՝ Ձ: Ռադիորնդունիչը տաքանալուց հետո սկսում է երաժշտություն սփռել: Լսվում է «La Fille aux Cheveux de Lin»-ը: Միջը մոտենում է բուխարիկին, ձեռնոցները դնում է դարավանդակի վրա և նայում իրեն հայելու մեջ: Էդուարդը ներս է մտնում վերնից՝ ԿՁ:

Էդուարդ.- *(գնալով՝ ՁԿ)*: Մեքենան դուրսն է:

Միջ.- Եթե դեմ չես, ես կգնամ Լյուսիի հետ:

Էդուարդ.- Բայց, ինչո՞ւ...

Միջ.- Նա կորցրել է որոշ բաներ... և դեսուդեն է ընկնում... Ես կօգնեմ նրան... *(Գնում է ցած՝ Ձ)*:

Էդուարդ.- *(խոցված)*: Միջ, բա՞ն է պատահել: Սա ի՞նչ է նշանակում:

Միջ.- Հիմա դա կարևոր չէ, մենք պիտի ներկա լինենք հետաքննությանը:

Էդուարդ.- Չէ՛, մի բան կա:

Միջ.- Ինձ մի՛... մի՛ անհանգստացրու:

Էդուարդ.- Մի՛ջ, մի՞ թե միտքդ փոխել ես: Գուցե քեզ շա՞տ եմ շտապեցնում. ի վերջո, չե՞ս ուզում ամուսնանալ ինձ հետ:

Միջ.- Չէ՛, չէ՛... Մենք պետք է սպասենք, մինչև ամեն բան պարզվի:

Էդուարդ.- Դրանով ի՞նչ ես ուզում ասել:

Միջ.- Եթե իրադրությունը այդ է պահանջում, դու կարող ես նշանվել ինձ հետ, բայց հետո մենք դա կկարողանանք չեղյալ հայտարարել: (Մեջքով շրջվում է նրա կողմը):

Էդուարդը մի պահ ապշում է, բայց տիրապետում է իրեն ու խոսում է միապաղաղ տոնով:

Էդուարդ.- Այդպես... նույնիսկ Էյնզուիթի խաթեր... դու չես ուզում ամուսնանալ:
 Միջ.- *(շրջվելով):* Դա չի օգնի, Էդուա՛րդ:
 Էդուարդ.- Ո՛չ: Կարծում եմ՝ դու ճիշտ ես: *(շրջվում է, դեմքով դեպի՝ Ձ:)* Ավելի լավ է դու
 գնաս: Մյուսները սպասում են:
 Միջ.- Դու չե՞ս գալիս...
 Էդուարդ.- Կհետևեմ ձեզ: Վարժվել եմ մեքենան մենակ վարելուն:

Միջը դուրս ր գալիս՝ ԿՁ: Էդուարդը դուրս է գալիս՝ Ձ: Մի քանի րոպե անց նա
 վերադառնում է՝ ձեռքին մի ատրճանակ: Փակում է դուռը, մոտենում է ռադիոն-
 դուխիչին ու անջատում այն, մոտենում է բուխարիկին ու վերցնում Միջի ձեռնոց-
 ները դարավանդակի վրայից ու դնում իր գրպանը: Հետո գնում է ՁԿ և բացում է
 ատրճանակը ստուգելու դրա լցված լինելը: Երբ չխկոցով բացում է շնիկը, Միջը
 ներս է մտնում՝ ԿՁ:

Միջ.- Էդուա՛րդ... դու դեռ այստե՞ղ ես:
 Էդուարդ.- *(ջանում է բնական երևալ):* Ա՛խ, Մի՛ջ, դու ինձ վախեցրիր:
 Միջ.- *(անցնելով գահավորակի ետևից):* Վերադարձա վերցնելու ձեռնոցներս: *(Հեն-
 վում է թիկնակին ու նայում բարձի տակը):* Դրանք մի տեղ թողեցի: *(նայում է
 բուխարիկի դարավանդակին և նկատում ատրճանակը Էդուարդի ձեռքին:)*
 Էդուա՛րդ, ի՞նչ ես անում այդ ատրճանակով:

Էդուարդ.- Մտածեցի գնամ ու կրակեմ թիրախներին:
 Միջ.- Թիրախների՞ն: Բա հետաքննություն՞ ւնը:
 Էդուարդ.- Հետաքննություն՞ ւնը, այո՛, իհարկե, ես մոռացել էի:
 Միջ.- *(մի քայլ մոտենում է նրան):* Էդուա՛րդ, սա ի՞նչ է նշանակում: *(Մոտենում է
 նրա աջ կողմը):* Աստվա՛ծ իմ... *(խլում է ատրճանակը նրա ձեռքից և մո-
 տենում բուխարիկին:)* Տո՛ւր ինձ ատրճանակը... Դու խենթացել ես: *(ատրճա-
 նակը դնում է դարավանդակի վերի հարկի ծայրին:)*

Էդուարդը նստում է բազկաթոռին՝ ՁԿ:

(շրջվում է): Ինչպե՞ս կարողացար: *(Շնկում է Էդուարդի ձախ կողքին):* Ինչո՞ւ,
 ինչո՞ւ, Էդուա՛րդ: Հանուն ձեռքիթայի՞ն:
 Էդուարդ.- *(գարնացած):* Ձեռքիթայի... Դա վերջացած հարց է:
 Միջ.- Իսկ ինչո՞ւ, ասա ինձ, ինչո՞ւ...
 Էդուարդ.- Ամեն ինչ շատ անհույս է:
 Միջ.- Խոսի՛ր, սիրելի՛ս, օգնի՛ր ինձ հասկանալ:
 Էդուարդ.- Ես լավը չեմ, Մի՛ջ: Երբեք հաջողակ մեկը չեմ եղել: Կանայք հիանում են Դր.
 Քրիսթոֆի նման հաջողակ տղամարդկանցով: Բայց ես... Նույնիսկ հանուն
 Էյնզուիթի էլ դու չուզեցիր ամուսնանալ ինձ հետ:
 Միջ.- Դու կարծում էիր, որ քեզ հետ ես ամուսնանում էի Էյնզուիթի՞ պատճառով:
 Էդուարդ.- Դրախտը բռանդ մեջ էր թվում... բայց դու չկարողացար համակերպվել իմ
 գոյության հեռանկարի հետ այնտեղ:
 Միջ.- Դա ճիշտ չէ, դա ճիշտ չէ: Այ դու հիմար... Դու չե՞ս հասկանում: Ես քեզ եմ
 ուզում, ոչ թե Էյնզուիթը: Ես պաշտում եմ քեզ, միշտ եմ պաշտել: Քեզ միշտ
 սիրել եմ վաղուց, քո սիրո հիվանդն եմ եղել:
 Էդուարդ.- Դու սիրո՞ւմ ես ինձ:

- Միջ.- Իհարկե, սիրում եմ քեզ, քեզ՝ սիրելի ապուշ: Երբ դու առաջարկեցիր ամուսնանալ քեզ հետ, ես գտնվում էի դրախտում:
- Էդուարդ.- Այդ դեպքում, ինչո՞ւ...
- Միջ.- Որովհետև հիմար էի: Իմ գլուխն մտել էր, որ դու այդպես ես վարվում ուստիկանության պատճառով:
- Էդուարդ.- Ուստիկանությա՞ն:
- Միջ.- Ես կարծում էի... գուցե... դու ես սպանել Ջոն Քրիսթոֆին:
- Էդուարդ.- Ե՛ս...
- Միջ.- Հանուն Հենրիեթայի... Հետո մտածեցի, որ նշանվում ես ինձ հետ հետքը կորցնելու նպատակով: Օ՛հ, ես պիտի խելագար լինեի: *(Բարձրանում է:)*
- Էդուարդ.- *(բարձրանում է):* Չեմ կարող ասել, որ ցավում եմ Քրիսթոֆի մահվան համար... *(մոտենում է բուխարիկին)* Բայց իմ մտքով անգամ չէր անցնի սպանել նրան:
- Միջ.- Գիտեմ: *(Մոտենում է նրա աջ կողմին:)* Ես կատարյալ ապուշ եմ: *(Գլուխը դնում է նրա կրծքին:)* Բայց ես ահավոր խանդում էի Հենրիեթային:
- Էդուարդ.- *(գրկելով նրան):* Դու խանդելու պատճառ չունես: Ես սիրում էի Հենրիեթային, երբ աղջիկ էր: Բայց այն օրը քո սիրո կայծը հրդեհեց իմ հոգին: Ես հասկացա, որ Հենրիեթա-կինը օտարացած է, որին չեմ ճանաչում: Երբ դու ասացիր, որ նայեմ քեզ, քեզ տեսա ասես առաջին անգամ՝ ոչ թե մանկիկ Միջին, այլ հասուն կին դարձած Միջին՝ ջերմ ու կենսախիհն...
- Միջ.- Օ՛հ, Էդուա՛րդ:
- Էդուարդ.- Այլևս մի լքիր ինձ, Մի՛ջ:
- Միջ.- Երբե՛ք, խոստանում եմ, երբե՛ք:

դրսից լսվում է մեքենայի շշակի ձայն:

Քաղցրս, Էդուա՛րդ, պիտի գնանք, նրանք սպասում են: Ես ինչի՞ համար էի հետ եկել. ձեռնոցներս...

Էդուարդը գրպանից հանում է Միջի ձեռնոցներն ու պարզում նրան:

Օ՛հ, սիրելի՛ս:

վերցնում է ձեռնոցները, շրջվում ու դուրս գալիս վերևից՝ԿԶ: Էդուարդը հետևում է նրան: Լույսերը մարում են, որի ընթացքում փակ է միայն խորշի վարագույրը: Դադար վեց վայրկյան տևողությամբ, որից հետո լուսերը վառվում են: Ենթադրվում է մեկ ժամի անցում, որի ընթացքում եղանակը փոթորկվում ու երկինքը մթազնում է: Գերդան ու Հենրիեթան ներս են մտնում ԿԶ: Հենրիեթան օգնում է Գերդային: Երկուսն էլ պայուսակ են կրում:

- Հենրիեթա.- *(ներս մտնելով):* Լավ դիմացանք փոթորիկին: Աստվա՛ծ իմ, մթնել է գիշերվա նման: (Կլոր սեղանի առջևից անցնելիս, միացնում է լուսամփոփը:) Քեզ լա՛վ ես զգում, վստա՞հ: *(Գերդային առաջնորդում է դեպի գահավորակը:)* Նստիր այստեղ ու ոտքերդ դիր վերև: *(Իր պայուսակը դնում է գրասեղանի վրա:)*

Գերդան նստում է գահավորակի ձախ ծայրին: Հենրիեթան մոտենում է կլոր սեղանին:

- Գերդա.- Շատ եմ ցավում քեզ այնքան նեղություն պատճառելու համար: Չգիտեմ՝ ինչու եմ այսքան թուլացել:
- Հենրիեթա.- *(բրենդի և ջուր լցնելով)*: Ով ասես կթուլանար: Այնտեղ օդը շատ ծանր էր:
- Գերդա.- Հուսով եմ բավարար վկայություն տվեցի: Շատ շփոթված էի:
- Հենրիեթա.- Իրոք լավ էր:
- Գերդա.- Դատախազը շատ բարի գտնվեց: Օ՛հ, սիրելի՛ս, ես շատ ուրախ եմ. ամեն ինչ վերջացավ, եթե միայն գլուխս չցավեր:
- Հենրիեթա.- *(վերցնելով խմիչքը և մոտենալով գահավորակի առջև)*: Դու պետք ունես խմիչքի: *(Ձեռքի բաժակը պարզում է Գերդային:)*
- Գերդա.- Օ՛հ, ոչ, շնորհակալ եմ, ինձ համար ոչ:
- Հենրիեթա.- Իսկ ես խմելու պահանջ եմ զգում: Դու էլ վատ չի լինի մեկը խմես:
- Գերդա.- Չէ՛... իսկապես:

Հենրիեթան մոտենում է կլոր սեղանին, մեկ կում խմում է և բաժակը դնում սեղանի վրա:

- Կուզեի... բայց գուցե նեղություն պատճառեմ...
- Հենրիեթա.- *(գնալով գահավորակի աջ կողմը)*: Գլխիցդ հանիր նեղություն տալը, Գերդա՛: Ավելի շատ ի՞նչ կուզեիր:
- Գերդա.- Թեյ, մեկ գավաթ տաք թեյ:
- Հենրիեթա.- *(գնալով՝ ՁԿ)*: Մի՞րով:
- Գերդա.- Բայց դա նեղություն է, սպասավորները...
- Հենրիեթա.- *(մոտենալով բուխարիկին)*: Ոչ մի խնդիր չկա: *(Ձեռքը երկարացնում է գանգին, բայց հետ է քաշում:)* Մոռացել էի, Գաջընը դեռ հետաքննության մեջ է:
- Գերդա.- Կարևոր չէ:
- Հենրիեթա.- Հենց հիմա կգնամ խոհանոց ու կխնդրեմ Միսիս Մեդուելից:
- Գերդա.- Կարող է նրա դուրը չկա, որ խնդրեն իրենից:
- Հենրիեթա.- Նրա համար դա կարևոր չէ: Նա չի սիրում պատասխանել գանգին:
- Գերդա.- Դու շատ հոգատար ես իմ հանդեպ:

Հենրիեթան դուրս է գալիս՝ Ձ: Կայծակ, որին հաջորդում է ամպի որոտ: Գերդան վախեցած բարձրանում է, մոտենում է պատուհանին՝ Ա, նայում դուրս և գնում վերև՝ Կ: Հետո գնում է՝ ՁԿ և սուկումով նայում հատակի այն մասին, ուր սպանված ընկած էր Ջոնը: Շունչը ետ է բերում, մոտենում է գահավորակին, նստում է և սկսում լուռ արտասվել:

Հենրիեթան ներս է մտնում՝ Ձ:

- Օ՛հ, Ջո՛ն... Ջո՛ն... չեմ կարողանում դիմանալ:
- Հենրիեթա.- Թեյնիկը կրակին է. մի քանի վայրկյանից պատրաստ կլինի: *(Մոտենում է գահավորակի ձախ կողմին: Մեղմ:)* Օհ, Գերդա, մի լացիր, ամեն ինչ այժմ վերջացած է:
- Գերդա.- Բայց ես ի՞նչ պիտի անեմ: Ի՞նչ կարող եմ անել առանց Ջոնի:
- Հենրիեթա.- Մտածիր երեխաների մասին:
- Գերդա.- Այո, գիտեմ, բայց միշտ Ջոնն էր ամեն քանի համար որոշում կայացնողը:

- Հենրիեթա.- Գիտեմ: *(Մի պահ տատանվում է, հետո անցնում է գահավորակի ետևը, ձեռքերը դնում է Գերդայի ուսերին ու նրան հենում գահավորակի մեջքին:)* Մի հարց, Գերդա՛: *(Դադար:)* Դու ո՞ւր դիրք պատյանը:
- Գերդա.- *(նայելով առաջ):* Պատյա՞նը:
- Հենրիեթա.- Երկրորդ ատրճանակը, որ վերցրել էիր Հենրիի գրասենյակից պատյանի մեջ էր: Պատյանն ի՞նչ արիր:
- Գերդա.- *(բառը կրկնում է առերևույթ ապշույթյամբ):* Պատյա՞նը:
- Հենրիեթա.- *(պահանջողական):* Դու ինձ պիտի ասես: Բացի դրանից, ամեն բան կարգին է: Ուրիշ ոչինչ չկա, որով նրանք կարողանան քեզ մերկացնել: Գուցե կասկածեն, սակայն ոչինչ չեն կարող ապացուցել: Բայց այդ պատյանը վտանգավոր է. դա դեռ քե՞զ մոտ է:

Գերդան հաստատում է գլխի թեթև շարժումով:

- Գերդա.- Ո՞ւր ես դրել:
- Հենրիեթա.- Ես դա կտրտեցի փոքրիկ մասերի ու դրեցի իմ կաշվե պայուսակի մեջ: *(մոտենալով կլոր սեղանին ու վերցնելով կաշվե պայուսակը):* Սրա՞ մեջ:

Գերդան շուռ է գալիս և հաստատում գլխով:

(մոտենում է գրասեղանին, միացնում է սեղանի լամպը և կաշվե պայուսակից հանում կաշվե սրճագույն կտորտանքներ): Ես դրանք կվերցնեմ ու կանհետացնեմ: *(Դնում է իր պայուսակի մեջ:)* Շատ խելացի միտք ես արել:

Գերդան առաջին անգամ խոսում է ոգևորված, բարձր ձայնով՝ ձևացնելով, թե այնքան էլ ողջամիտ մեկը չէ:

- Գերդա.- Ես այնքան էլ հիմար չեմ, ինչքան մարդիկ կարծում են: Դու ե՞րբ հասկացար, որ ես եմ սպանել Ջոնին:
- Հենրիեթա.- *(իր պայուսակը դնելով գրասեղանի վրա):* Ես անմիջապես գլխի ընկա, *(գնալով գահավորակի աջ կողմը)* երբ Ջոնը մեռնելուց առաջ ինձ ասաց՝ «Հենրիեթա», ես հասկացա դրա իմաստը: Ես միշտ ընկալել եմ Ջոնի ուզածը: Այդ պահին նա ինձնից պահանջեց, որ պաշտպանեմ քեզ, մի կերպ գերծ պահեմ քեզ այս խնդրից: Նա քեզ սիրում էր, սիրում էր շատ ավելի, քան ինքն էր կարծում:
- Գերդա.- *(լացում է):* Օ՛հ, Ջո՛ն... Ջո՛ն:
- Հենրիեթա.- *(նստելով գահավորակին՝ Գերդայի աջ կողմը):* Ես գիտեմ, սիրելի՛ս, ես գիտեմ: *(Թևով օղակում է Գերդային:)*
- Գերդա.- Բայց դու չգիտես իրողությունը: Ամեն բան... սուտ էր: Ես պետք է սպանեի նրան: Ես էլ էի նրան սիրում, իմ սերը նրա հանդեպ հասնում էր պաշտամունքի աստիճանի: Ես համոզված էի, որ նա վեհանձն ու ազնիվ է: Բայց նա այդպիսի մեկը չէր:
- Հենրիեթա.- Նա մարդ էր, Աստված չէր:
- Գերդա.- *(Չայքսացած):* Ամեն բան սուտ էր: Երեկոյան, երբ այդ դերասանուհին եկավ այստեղ, ես նկատեցի Ջոնի դեմքի արտահայտությունը: Ընթրիքից հետո նա գնաց տեսնելու նրան և չվերադարձավ: Ես պառկեցի, բայց չէի կարողանում քնել: Ժամերը անցնում էին մեկը մյուսի հետևից, նա չկար: Վերջիվերջո, վեր

կացա, հագա ժակետս ու կոշիկներս, գաղտագողի ցած իջա աստիճաններով և դուրս եկա կողաշենքի դռնով: Քայլեցի արահետի ուղղությամբ ու հասա դերասանուհու կոտեջին: Կենտրոնի վարագույրները քաշված էին, ուստի անցա տան ետնամասը: Այնտեղ վարագույրները բաց էին, և ես կարողացա պատուհանից նայել ներս: *(Ձայնը հիստերիկ կերպով բարձրացնելով:)* Նայեցի ներս:

Կայծակ, որին հաջորդում է ամպի որորտը:

- Հենրիեթա.- *(բարձրանալով):* Գերդա՛...
- Գերդա.- Ես տեսա նրանց՝ այդ կնոջը և Ջոնին: *(Դադար):* Ես վստահում էի Ջոնին... մինչև վերջ, կատարելապես... բայց ամեն բան սուտ էր: Ինձ համար աշխարհը փուլ եկավ... *(Հանկարծ տրամադրված մարտականորեն՝ զուսպ):* Տեսնո՞ւմ ես, Հենրիեթա՛, չե՞ս ընդունում, որ պետք է սպանեի Ջոնին: *(Դադար):* Թեյը չե՞նք քերում: Ես շատ եմ ուզում մի բաժակ թեյ խմել:
- Հենրիեթա.- *(մոտենալով գահավորակի աջ ծայրին):* Մի բռպեից կբերեն, շարունակիր պատմել, Գերդա՛:
- Գերդա.- *(Չարացած):* Երբ ես երեխա էի, ինձ միշտ ասում էին, թե ես ապուշ եմ՝ ապուշ և դանդաղկոտ: Նրանք սովորություն ունեին ասելու՝ «Դա մի տվեք Գերդան անի, դրա վրա Գերդան մի ամբողջ օր կվատնի»: Երբեմն էլ՝ «Գերդան երբեք չի հասկանում, թե ինչ են ասում իրեն»: Մի՞թե նրանք չէին զգում, որ նման արտահայտությունները ինձ ավելի ապուշ ու դանդաղկոտ էին դարձնում: Հետո, գիտե՞ս, մի ելք գտա. ինձ ձևացնում էի շատ ավելի ապուշ, քան կայի: Նայում էի կենտրոնացած, իբր թե, չեմ հասկանում: Բայց սրտիս խորքում երբեմն ծիծաղում էի, որովհետև հաճախ տեղյակ էի նրանց կարծածից շատ ավելիին:
- Հենրիեթա.- Ուրեմն՝ այդպե՛ս...
- Գերդա.- Ջոնի համար կարևոր չէր իմ ապուշ լինելը... գոնե սկզբում: Նա ասում էր, որ շատ չմտատանջվեմ ու ամեն բան թողնեմ իր հայեցողությանը: Միայն երբեմն, երբ շատ զբաղված էր լինում, դառնում էր անհամբեր: Նման պահերին ես գլուխս կորցնում էի: Հետո, հիշում եմ, թե նա որքան խելացի էր... որքան բարի: Այնուամենայնիվ, նա այդպիսին չէր և ես ստիպված եղա սպանել նրան:
- Հենրիեթա.- Շարունակի՛ր:
- Գերդա.- Գիտակցում էի, որ պիտի չափազանց զգույշ լինեմ, որովհետև ոստիկանները շատ ուշիմ են: Ոստիկանական մի գրքում կարդացել էի, որ նրանք կարողանում են տարբերել, թե որ ատրճանակից է արձակված եղել գնդակը: Ուստի ես վերցրի երկրորդ ատրճանակը Հենրիի գրասենյակից և Ջոնի վրա կրակեցի այդ ատրճանակից, իսկ մյուսը նետեցի գետնին՝ նրա կողքը: Հետո վազեցի տան շուրջը և ներս մտա այն դռնից ու մոտեցա Ջոնին ու վերցրի գետնին ընկած ատրճանակը: Ես հաշվել էի, որ նրանք սկզբում կկարծեն, թե դա իմ ձեռքի գործն է, բայց հետո կանդրադառնան, որ գնդակը դրանից չի արձակվել: Ես մաքուր դուրս կգայի: Որոշել էի իսկական ատրճանակը տանել ու դնել այդ կնոջ տանը, բայց գործը հեշտացավ, երբ նկատեցի, որ նա թողել է իր պայուսակը. հարմար պահ գտնելով օրվա ընթացքում՝ ատրճանակը դրի դրա մեջ: Չեմ հասկանում, թե ինչու ոստիկանությունը չձերբակա-

լեց այդ կնոջը, (ձայնը բարձրացնում է) պիտի ձերբակալեին: *(Հիստերիկ:)* Չե՞ որ նրա պատճառով էի սպանել Ջոնին:

Հենրիեթա.- *(գնալով գահավորակի ետևից դրա ձախ կողմը):* Դու ջնջել էի՞ր քո մատնահետքերը այն ատրճանակի վրայից, որից կրակել էիր:

Գերդա.- Իհարկե: Ես մարդկանց կարծածից շատ ավելի ուշիմ եմ: Ես ազատվեցի այդ ատրճանակից, բայց մոռացա պատյանը:

Հենրիեթա.- Դրա համար մի՛ մտահոգվիր, դա հիմա ինձ մոտ է: Կարծում եմ՝ դու լրիվ ապահով ես, Գերդա՛: *(Նստում է գահավորակին՝ Գերդայի ձախ կողմը:)* Դու պիտի գնաս ու ապրես խաղաղ՝ երկրի տարբեր մի կետում... և մոռանաս:

Գերդա.- *(Տիրություն):* Այո՛, այո՛, կարծում եմ՝ այո՛: Բայց չգիտեմ ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ: Իսկապես չգիտեմ՝ ուր գնամ: Ուղեդս չի աշխատում... Ամեն բանի համար միշտ Ջոնն էր որոշում կայացնում: Գլուխս ցավում է:

Հենրիեթա.- *(բարձրանալով):* Ես գնամ թեյը բերեմ:

Հենրիեթան դուրս է գալիս՝ Ջ: Գերդան չարացած նայում է նրա հետևից: Բարձրանում է, մոտենում է կլոր սեղանին, պայուսակից հանում է թույն պարունակող մի սրվակ և ձեռքը երկարացնում է դեպի Հենրիեթայի բաժակը: Մի պահ կանգ է առնում: Ապա պայուսակից հանում է մի թաշկինակ ու բաժակը վերցնում դրանով: Հենրիեթան անձայն ներս է մտնում ձախից, մատուցարանի վրա բերելով թեյը իր սպասքով: Գերդան անտեղյակ Հենրիեթայի մուտքին՝ մեջքով կանգնած է դեպի նա: Հենրիեթայի աչքի առջև Գերդան սրվակի պարունակությունը դադարկում է Հենրիեթայի բաժակի մեջ: Հետո սրվակն ու թաշկինակը դնում է պայուսակի մեջ: Հենրիեթան անձայն դուրս է գալիս: Գերդան շրջվում է, գնում ու նստում գահավորակին: Հենրիեթան նորից ներս է մտնում, մոտենում է ու մատուցարանը դնում կլոր սեղանին:

Թեյը բերեցի, Գերդա՛:

Գերդա.- Անչափ շնորհակալ եմ, Հենրիեթա՛:

Հենրիեթա.- *(մոտենալով խմիչքի սեղանին):* Իսկ ո՞ւր է իմ խմիչքը: *(Վերցնում է իր բաժակը:)*

Գերդա.- *(կաթ լցնելով գավաթի մեջ):* Սա հենց այն էր, ինչ ուզում էի: Դու շատ հոգատար ես իմ հանդեպ, Հենրիեթա՛:

Հենրիեթա.- *(դանդաղ գնում է ցած՝ Ս):* Չգիտեմ սա՞ իմեմ, թե՞ մի գավաթ թեյ քեզ հետ:

Գերդա.- *(Թեյ լցնելով):* Ճարպկորեն: Դու թեյ չես սիրում, չե՞, Հենրիեթա:

Հենրիեթա.- Կարծում եմ, հիմա, դա եմ գերադասում: *(Իր բաժակը դնում է կլոր սեղանին ու գնում դեպի դուռը՝ Ջ:)* Գնամ մի ուրիշ գավաթ բերեմ:

Դուրս է գալիս՝ Ջ: Գերդան տհաճությամբ խոժոռվում է և բարձրանում տեղից: Նստում է շուրջը, տեսնում ատրճանակը դարավանդակի վրա: Քննախույզ նայում է դռան՝ Ջ, ապա վազելով գնում ու վերցնում է ատրճանակը: Քննում ու վստահանում է, որ այն լցված է, գլուխը տմբումբացնում է գոհունակությամբ և սկսում է հեծկլտալ: Տեսուչը ներս է մտնում՝ Ա:

Տեսուչ.- Դուք այդ ի՞նչ էիք անում այդ ատրճանակով, Միսի՛ս Քրիսթո:

Գերդա.- *(Շրջվում է. սարսափած):* Օ հ, տես՛ու՛չ, ինձ վախեցրիք: *(Ձեռքը դնում է սրտի վրա:)* Իմ սիրտը... Գիտե՞ք, իմ սիրտը շատ թույլ է...

Տեսուչ.- *(մոտենալով Գերդայի աջ կողմին):* Ի՞նչ էիք անում ատրճանակով:

Գերդա.- Ես դա գտա այստեղ:

Տեսուչ.- *(Գերդայից վերցնելով ատրճանակը):* Դուք գիտեք, թե ինչպես են լցնում ատրճանակը, գիտե՞ք չէ: *(փամփուշտների պահունակը հանում և դնում է մի գրպանը, իսկ ատրճանակը՝ մյուս գրպանը:)*

Գերդա.- Մըր Հենրին ինձ ցույց է տվել: Հետաքննությունը ավարտ... ավարտվե՞ց:

Տեսուչ.- Այո՛:

Գերդա.- Իսկ վճի՞ռը:

Տեսուչ.- Հետաձգվեց:

Գերդա.- Դա ճիշտ չէ: Նրանք պիտի ասեին, որ դա կանխամտածված սպանություն էր կատարված նրա ձեռքով:

Տեսուչ.- Նրա՞:

Գերդա.- Այն դերասանուհու: Այդ Վերոնիկա Քրեյլի: Եթե դա հետաձգեն, նա փախուստի կդիմի և կգնա Ամերիկա:

Տեսուչ.- Վերոնիկա Քրեյլը չի սպանել ձեր ամուսնուն, Միսի՛ս Քրիսթոն:

Գերդա.- Նա է սպանել, նա է սպանել, իհարկե, նա է սպանել:

Տեսուչ.- Ո՛չ: Ատրճանակը նրա պայուսակի մեջ չէր, երբ առաջին անգամ խուզարկեցինք այս սենյակը: Դա հետո էին դրել այնտեղ: *(Դադար:)* Մենք առհասարակ լավ գիտենք, թե ով է ոճրագործը, Միսի՛ս Քրիսթոն *(նշանակալից հայացքով նայում է նրան),* բայց հաճախ չենք կարողանում ապացույցներ գտնել:

Գերդան սարսափած մի քայլ ետ է գնում, օրորվում է և փլվում փուֆիկի վրա:

Գերդա.- *(վհաս):* Օ՛հ, Ջո՛ն, Ջո՛ն, ո՞ւր ես: Քեզ եմ ուզում, Ջո՛ն:

Տեսուչ.- Միսի՛ս Քրիսթոն, Միսի՛ս Քրիսթոն, խնդրում եմ, խնդրում եմ հանգստացեք:

Գերդան հիստերիկ կերպով հեծկտում է: Տեսուչը մոտենում է կլոր սեղանին, վերցնում է Հենրիեթայի բաժակը, հոտոտում է, տանում և տալիս է Գերդային: Գերդան առանց անդրադառնալու, թե ինչ տվին իրեն, խմում է բաժակի պարունակությունը: Մի քանի վայրկյան անց, նա բարձրանում է տեղից և երերալով անցնում է գահավորակի առջևից: Ընկնելու պահին, Տեսուչը հասնում և նրա նստեցնում է գահավորակի վրա: Հենրիեթան ներս է մտնում՝ Ջ: Ձեռքում գավաթ և շաքար կա: Նա արագ անցնում է ձախ, կռանում է և գավաթն ու շաքարը դնում է կլոր սեղանին: Միաժամանակ, Տեսուչը Գերդայի ձեռքից վերցնում է բաժակը:

Հենրիեթա.- Գերդա՛, Գերդա՛: *(Տեսնում է բաժակը: Դիմելով Տեսուչին):* Դուք այդ... այդ տվի՞ք նրան:

Տեսուչ.- Ինչո՞ւ, ի՞նչ կար նրա մեջ:

Հենրիեթա.- Գերդան ինչ-որ բան լցրեց դրա մեջ՝ հանելով իր պայուսակից:

Տեսուչը վերցնում է Գերդայի պայուսակը, բացում է այն ու հանում թույնի սրվակը:

Տեսուչ.- *(կարդալով պիտակը):* Ջարմանում եմ, թե դա ինչպես է ձեռք բերել: *(Բռնում է Գերդայի զարկերակը և շարժում գլուխը:)* Ուրեմն՝ նա սպանեց ինքն իրեն:

Հենրիեթա.- *(բարձրանալով և անցնելով՝ Ս):* Ո՛չ, դա ինձ համար էր նախատեսված:

Տեսուչ.- Ձեզ համա՞ր, ինչո՞ւ:

Հենրիեթա.- Որովհետև, ես... ես որոշ բաներ գիտեի: *(Գահավորակի առջևից անցնում է բազկաթոռի՝ Կ ետևը:)*

Տեսուչ.- Դու գիտեիր, որ նա՞ է սպանել իր ամուսնուն: Օ՛հ, այո, ես էլ դա գիտեի: Գործի բերումով մենք վարժվել ենք ճանաչել մարդկանց: Դուք ոճրագործի չեք նմանում: Բայց նա այդպիսին էր:

Հենրիեթա.- *(մոտենալով բուխարիկին):* Նա պաշտում էր Ջոն Քրիսթոֆյին չափից ավել:

Տեսուչ.- «Երկրպագուն», միթե ա՞յդ չէր ձեր ստեղծած արձանի անունը: Ի՞նչ եք մտադիր անել այսուհետև:

Հենրիեթա.- Մի անգամ Ջոնը ինձ ասաց, որ եթե ինքը մեռնի, իմ առաջին գործը պիտի լինի պատրաստել մի արձան վիշտ պատկերող: Տարօրինակ է, բայց դա ուղղակի այն է, ինչը ուզում եմ սկսել:

Տեսուչը մոտենում է գրասեղանին: Լեդի Անգրթելը ներս է մտնում՝ Կ ձախից: Նա ուրախ է երևում:

Լեդի Անգրթել.- Հրաշալի հետաքննություն էր:

Տեսուչը վերցնում է ընկալուչը:

Ճիշտ այնպես, ինչպես նկարագրված է գրքերում և... *(Նկատում է Գերդային:)*
Գերդան... Գերդա՞ն...

Տեսուչը լուռ նայում է նրան: Հենրիեթան ձեռքը դնում է աչքերին՝ թաքցնելու իր արցունքները:

(շարժում է գլուխը): Ինչ բարեբախտություն՝ ւն...

Տեսուչ.- *(ընկալուչի մեջ):* Խնդրում եմ ինձ միացրեք ոստիկանատուն:

Հենրիեթան սկսում է հեծկլտալ, մինչ՝

Իջնում է վարագույրը

